

1121

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԱՊԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ԳԱՒԹ ԽԱԶԿՈՆՑ

ԸՆԴՀԱՆՈՒՐ
Ա.ԶԳԱՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. ՀԻՆ ԱԶԳԵՐ

Ա. ՄԱ. — ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԻՆ ԱԶԳԵՐ

1. Եգիպտացիք. — 2. Քեաացիք. — 3. Ուրարտու-
ցիք. — 4. Քաղդեացիք. — 5. Սաոբեամացիք. — 6. Եբ-
րայեցիք. — 7. Փիւնիկեցիք. — 8. Զինացիք. — 9. Հնդկ-
ներ. — 10. Պարսիկներ. — 11. Պարթևներ. — 12. Սա-
սանեանք :

20 Դաս

76 Հնքերցում

120 Թեղադրութիւն

20 Խմբագրական նիւթ

13 Աշխարհացոյց

28 Պատկեր

13 Հնագրական եղանակաւորում

Ամփոփումներ

Վերատպութիւններ

Ժմնկգր. սխիսակներ

9(3)
Խ-29

1911

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ
1911

9(3)
hi-99
այ

19 JUL 2005

ԳՊՐՈՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ԴԱԻԹ ԽԱԶԿՈՆՑ

2011-07

**ԸՆԴՀԱՆՈՒՐ
Ա.ԶԳԱՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**

Ա. ՀԻՆ ԱԶԳԵՐ

Ա. ՄԱՍ. — ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԻՆ ԱԶԳԵՐ

1008
36199

1. Եգիպտացիք. — 2. Քեաացիք. — 3. Ուրարուցիք. — 4. Բաղդեացիք. — 5. Ասորեստացիք. — 6. Երբայեցիք. — 7. Փիւնիկեցիք. — 8. Զինացիք. — 9. Հնդիկներ. — 10. Պարսիկներ. — 11. Պարթեւներ. — 12. Սասանեանք :

20 Դաս

76 Ընթերցում

120 Թեղադրութիւնք

20 Խմբագրութիւնք ցիւր

13 Աւիանիւթք

28 Պատկեր

13 Հնագրական Էղանակաւորում
Աւիոփոլումներ

Վերաստուքիւններ

ժանկգր. սախակներ



1911

Ը Ն Դ Շ Ա Ն ՈՒ Ր
Ա.ԶԳԱՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ԴԱՍԸՆԹԱՅԿՆԵՐՈՒ ԱՌԹԻԻ



Պատմութեան աւանդման *Ֆարժանիքը*, *Նպասակն ու Մեքոսն* արդէն երկարօրէն պարզած ենք մեր ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Միջին Դասընթացք Ա. Տարիի յառաջաբանին մէջ :

Կը մնայ միայն քանի մը խօսքով մասնանկիւել *Ընդհ. Պատմութեան օգտակարութիւնն ու իր սևրս աղերսը Հայոց պատմութեան հետ:*

Ինչպէս որ մեր ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ նպատակն եղած է ազգել Հայ ուսանողութեան Բարոյական աւելարհի վրայ՝ ոգեւորելով զայն Բնաւարհի հայրենի հերոսներու պատկերացումով եւ արթնցնելով անոր մէջ վսեմ ձգտումներ, նոյնպէս, եւ անկէ աւելի մեր ԸՆԴՇԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՅԿՆԵՐՈՒՆ նպատակը պիտի ըլլայ տոգորել Հայ ուսանողութիւնն երախտագիտութեամբ վերաբերուիլ Մարդկութեան բոլոր բարեարեւելուն նկատմամբ, այս վերջիններն ո՛ր դարուն եւ կամ ո՛ր ազգին ալ պատկանած ըլլան, քանի որ իրենց զաղափարներուն իտեպականութեամբ եւ իրենց պրպտողի ու զգացողի միտքերով չեն մարմնացներ միայն մէկ ազգի փառքն ու հանճարը, այլ կը պատկանին հանուր Մարդկութեան :

Ընդհանուր Պատմութեան դասաւանդման նպատակն է նաեւ Հայ ուսանողութիւնը գերծ պահել տոմային նեղ սնապարծութենէ ու ազգայնամոլութիւններէ որոնք միշտ խոչընդոտ կը հանդիսանան ո եւ է ազգի Քաղաքակրթութեան զարգացման: Մասնաւորապէս մեր *Ընդհ. Պատմութեան* դասաւանդութեան պահուն Ուսանողութիւնն ինքնին պիտի տեսնէ թէ ո՛րպիսի հսկայ ջանքերու շնորհիւ մարդիկ ողջունած

են Տեսական, Գործնական ու Ընկերական գիւտերն որոնք հետզհետէ դարձած են եւ կը դառնան ոչ թէ ազգային, այլ ԸՆԳԶԱՆՈՒՐ ՄԱՐԳԿՈՒԹԵԱՆ սեփականութիւն, եւ թէ այդ գիւտերն արդիւնք են ըլլա՛յ մեծ, ըլլա՛յ փոք ազգութեանց երկարատե ու անընդհաս գործակցութեան :

Մեր ներկայ ԸՆԳԶԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ մէն մի դասընթացքի մէջ հայրաբաժնի ու մշակած ենք միայն ա՛յն նիւթերն որոնք կը լուսաբանեն դարերու ընդմէջէն ցոլացած այդ բարեօրջման գաղափարն եւ աշակերտ կը պատուասեն այդ գաղափարներէ բոլոր բարոյական սկզբունքներով: Ասիկա իսկապէս *Մարդկային Բարոյակրօնական* պատմութիւնն է զոր խղմտօրէն ու մանրակրկիտ աւանդած ենք մեր բազմաթիւ պատմական ընթերցումներուն մէջ: Այս ընթերցում-հասուածներուն մէջ ընտրած ենք այնպիսիներ միայն որ մտնկական հասկացողութեան կը համապատասխանեն: Առ այս ամէն ջանք չենք ինչպիսիք Պատմական-Աշխարհագրական քարտէսներու եւ Պատմական նկարներու նոխրութեան, որոնք մեծապէս կը դիւրացնեն դաստանդութիւնը:

Որովհետեւ մեր ՄԻԶԻՆ ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Ա. Մասին մէջ աւանդած ենք Քաղաքակրթութեան պատմութենէն *նախնական մարդոց գիւտերը, ընկերային դիմացեղումներն ու կրօնքի դիմացեղումները*, աւելորդ համարեցինք հոս ալ կրկնել, միայն թէ կը խնդրուի պատուարժան ուսուցիչներէ որ Ներկայ հասոյին *Նախապատմական շրջաններու* Գասաւանդման ասեմ նոյն մշակուած նիւթերուն վերատուրիւնը ընեն:

Ընդհանուր Պատմութեան դասընթացքներուն պատրաստութեան ասեմ մեր աչքին առջեւ ունեցանք ցարդ հրատարակուած Ընդհանուր Պատմութեան վերաբերեալ բոլոր Հայերէն դասագիրքերն որոնցմէ ընտրեցինք քանի մը ընթերցումներ քաղեցինք: Սակայն առաւելապէս մեզի իբր աղբիւր օգտակար եղան Blanchethի, Seigoboshi, Van Der Berghի ժրանսերէն գործերն ու Ամերիկացի William Swintonի *Autlines of the World's History*ն:

Ինչպէս պիտի տեսնուի, մեր ԸՆԳԶԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Դասընթացքներուն մէջ իրենց կարգին մեծկակ տեղ մը տուած ենք *Խաղթեանց ու Քեօսացոց՝ Նախահայոց*, ինչպէս նաեւ *Ափսնեանեան Պարսիկներու, Գարբիւ Արշակունիներու եւ Սասանեան Պարսիկներու, Հայոց Պատմութեան հետ սերտ առնչութիւն ունենալուն համար*: Ցարդ հրատարակուած Հայերէն պատմութեան դասագիրքերուն մէջ չկան այդ մասերը, որովհետեւ իրենց իբր աղբիւր նպատակ եւրոպական բնագիրներուն մէջ այդ մասն աւանդուած չէ: Մենք այս մասին օգտուեցանք մասնագիտական ուսումնասիրութիւններէ որոնք միայն *Ազգային քանասիրութեամբ* զբաղող բանակրկիտներու ծանօթ են:

Լիայոյս ենք թէ ինչպէս որ մեր Հայոց Պատմութիւնները չեմք ընդունելութիւն գտն ա՛յ միայն բոլոր ազգային վարժարաններու, այլ եւ օտարազգի հաստատութեանց մէջ, նոյնպէս մեր *Ընդհ. Ազգաց Պատմութեան դասագիրքներն* եւս մեծ իրաւամբ պիտի վայելեն նոյն համակիր ընդունելութիւնը, քանի որ զիրար կը լրացնեն եւ նոյն նպատակին կը ձգտին:

Գ. ԽԱԶԿՈՆՑ



Վ Ը Ի Պ Ա Կ
Ըջ 83 Գ. Ընթերցում

Սիւնակ	Գ.	Սխալ	Ուղիղ
	6.	Եթուլպական	Ատորական
	2.	Ատորական	Հնդ.իկ
		Հին Արաբ.	Զանդ.իկ

Ըջ 144 Պահլաւ Հարստութիւն

Սիւնակ	Գ.	Սխալ	Ուղիղ
		4	44

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԻՆ ԱԶԳԱՑ

Մ Ր Ա Գ Ի Ր

Մ Շ Ա Կ Ո Ւ Ա Ծ Ն Ի Ի Թ Ե Ր Ո Ւ

Դ Ա Ս

Ի. Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք

1. Նախապատմական շրջաններ. — Պատմութիւն. — Նախապատմական շրջան. — Պատմական շրջան. — Նախապատմական դարաշրջաններ. — Մարդկային ցեղեր. — Կովկասեան ցեղի երեք մեծ բաժանումներ. — Արիականք. — Ասոնց միութեան ապացոյցը. — Սեմականք. — Քամեանք. — Յեզերու որորանը. — Պատմական ամէնէն հին թուականը. — Պատմական երեւոյթ մը. — Քաղաքակրթութիւն ու Աշխարհագրութիւն. — Արիականք Պատմութեան մէջ. — Յեզերու բաղդատութիւնը:

2. Մարդկային ցեղեր. — Արիական ճիւղ. — Սեմական ճիւղ. — Քեոսցիք. — Ուրարտուցիք. — Քամեանք:

3. Պատմութեան մասերը:

4. Ժամանակագրական շրջաններ:

5. Վարչական եղանակներ. — Միապետութիւն. — Ազնուապետութիւն. — Ռամկապետութիւն:

6. Արեւելեան կին ազգայ աշխարհացոյցը. — Մին ջին ու Հիւսիսային Ասիա. — Երոսեան լեռնադաշտ. — Ասորեստան. — Ուրարտու. — Միջագետք. — Բաբելոն. — Արաբիա. — Պարսիս. — Փիւնիկէ. — Ասորիք. — Փոքր Ասիա:

2. ԱՐԵՎԵԼԵԱՆ ՀԻՆ ԱԶԳԻՆԻ

7. Եգիպտացիք. — Եգիպտոս. — Հին ինքնակալութիւն. — Հիւքսոսներու արշաւանք. — Մեծ Թուականք. — Հաւմաֆս Բ. — Անկման Թուականք. — Պատեփիկոս. — Եգիպտոս վերջնականապէս կը գրաւուի:

8. Քեռացիք. — Քեռացոց բնակավայրը. — Քեռացոց պատերազմները. — Հատեանց պատերազմը Հաւմաֆս Բ-ի դէմ. — Հատեաններն Ասորեստանցիներուն դէմ. — Լիւգացիք. — Քեռացիք. — Քեռացիք Ուրարտու կը հաստատուին:

9. Խալդեանք. — Խալդեանք ու իրենց երկիրը. — Հայաստանի նախաքնիկները. — Խալդեանց Թագաւորներն ու իրենց քաղաքակրթութիւնը. — Թագաւոր-Աբալ-Ասար Բ-ի պատերազմը. — Ուրա ու Սարգոն. — Ուրաայի յաջորդները. — Ասորեստանի ու Բիւնայի ինքնակալներ:

10. Բաբելացիք ու Ասորեստացիք. — Վաղեմի Ժողովուրդներ. — Ասորեստանցիք. — Ս. Իրքի աւանդածը. — Քաղզէացիք:

Ասորեստանի վեհապետներ. — Ասորեստանի հին ինքնակալները. — Ասորեստանի Բ. Ինքնակալութիւնը. — Սարգոն ու իր աշխարհակալութիւնները. — Սենեքերիմ. — Սենեքերիմի յաջորդները:

Բաբելական նոր ինքնակալութիւն. — Նաբուգոդոնոսոր. — Պետութեան անկումը:

13. Նորայեցիք. — Նահապետական շրջան. — Կրօնք ու 12 ցեղեր. — Թագաւորական շրջան. — Սողոմոն. — Թագաւորութեան բաժանումը. — Հրեայներն օտար իշխանութեան տակ. — Հրեայ աղանդաւորներ:

14. Փիւնիկեցիք. — Փիւնիկէ. — Փիւնիկեցիք:

15. Զինացիք. — Հին ինքնակալութիւն. — Զինաստանի

Վաւրի գագաթնակէտը. — Զինաստանի անկումը. — Կրօնք. — Լեզու. — Զինական արուեստներ:

16. Հնդիկներ. — Հնդիկներու դասակարգը. — Հնդկացի կրօնքն ու նուիրական գիրքերը. — Պուտհայականութիւն. — Հնդկաստան օտար իշխանութեան տակ:

17. Մարի եւ Պարսիկք. — Մարք. — Դիոլի. — Կիւքսար. — Պարսիկներն ու Կիւքսու. — Կամբիւս. — Դարեհ Ա. Վըշտասպէայ. — Քոնքրթէս Ա. — Քոնքրթէսի յաջորդները. — Պարսից նուիրական գիրքը. — Բարք ու վարք:

18. Պարթեւ. — Պարթեւաստան եւ Պարթեւք. — Պարթեւացի իշխանութեան սկիզբը. — Պարթեւ հարստութիւն. — Հրահատ Բ. եւ Միհրդատ Բ. — Պահլաւ հարստութիւն. — Պարթեւ Թագաւորներ. — Պահլաւ Թագաւորներ:

19. Սասանեանք. — Պարսկ Սասանեան. — Արտաշիր Սասանեան. — Սասանեանց մայրաքաղաքը. — Շապուհ Ա. — Շապուհի յաջորդները. — Արմիզդ ու Ատրնքոտհ. — Շապուհ Բ. — Շապուհ Բ-ի յաջորդները. — Յազկերտ Ա. — Շապուհ Գ. եւ Վրաթ Ե. — Յազկերտ Բ-ի յաջորդները. — Պերոզի յաջորդները. — Սասանեան Թագաւորներ:

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

ՀՍՏ ՊԱՏՇԱՃԻ ԴԱՍԱԻՈՐՈՒԱԾԻ ԴԱՍ - ՊԱՄՈՒԱԾԻՔՆԵՐԸ ԼՈՒՍԱՐԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ա. ԻՅՂԱԻՅԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՄՈՒԹՈՒՆ

1. ԸՆԿԵՐԱՅԻՆ ԴԻՄԱՅԵՂՈՒՄՆԵՐ

Եգիպտական կենցաղ. — Եգիպտական դասակարգ. — Հատեանց տարազը. — Ամաղոնները. — Ասորեստան ու Ասորեստանցիք. — Ասորեստանի ինքնակալները. — Փիւնիկեցոց դերը. —

Պարսիկ դատարարակութիւն. — Կրօնիկն ազգեցութիւնը. — Պարթեւական կենցաղ. — Սասանեան ինքնակալութիւն:

2. ԿՐՕՆՔԻ ԴԻՄԱՅԵՂՈՒՄՆԵՐ

Եգիպտական կրօնքը. — Մեռելոց գիրքը. — Քետացոց կրօնքը. — Բաբելական եւ Աշուրական կրօնք. — Կոմիլիկոսականութիւն. — Դաոյականութիւն. — Պարսիկ կրօնք. — Կրակապաշտութիւն. — Քրիստոնէութեան դէմ Սասանեան հալածանք. — Յազկերտ Բի հալածանքը. — Արեւելեան կրօնքի ազգեցութիւնը Արեւմտքի վրայ:

3. ԱՐՇԵՍ ՈՒ ԱՐՈՒԵՍ

Նեղոսի տելքան. — Միրսեան յիճ. — Լաբիւրինթոս. — Զրանցքներ. — Բուրգեր. — Սփինքս. — Քառնաքի մեծ մեհեանը. — Եգիպտական ճարտարապետութիւն. — Քանդակագործութիւն. — Նկարչութիւն. — Խաղբեանց քաղաքակրթութիւն. — Միջագետք. — Բաբելոն ու իր հրաշալիքները. — Նինուէ. — Ատրեստանի ճարտարապետութիւնն ու արուեստներ. — Մեհեաններ. — Փիւնիկեան արուեստներ. — Պարսից ճարտարապետութիւնն ու արուեստները. — Հին վաճառական ազգեր. — Բաբելական վաճառականութիւն. — Բաբելական հիւսուածքներ. — Վաճառականութեան ճամբայներ. — Փիւնիկեան վաճառականութիւն. — Արաբական վաճառականութիւն. — Սկիւթական վաճառականութիւն. — Հայկական վաճառականութիւն. — Փիւնիկեցիք Միջերկրականի մէջ. — Կարքերոն. — Արեւմտեան Միջերկրական. — Արիիկեան վաճառականութիւն:

4. ՎԱՐՁԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՋԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Ուրույի եւ Սարգոնի դարը. — Խալդեան թագաւորներ. — Խալդեանց աշխարհակալութիւններ. — Խալդեանց տէրութիւնը Լիւնայ. — Կիւրոս. — Կարքերոն. — Մարոց ինքնակալութիւն. — Փոքր Ասիոյ թերակղզին. — Դարեհ Վշտասպետ. — Պարսիկ կառավարութիւն. — Պարթեւ ու Պահլաւ կառավարութիւն. — Սասանեան ինքնակալութիւն. — Սասանեան ներքին կառավարչութիւն. — Շապուհ Բի մահէն մինչեւ Յազկերտ Ա.:

5. Ի Մ Ա Յ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Ր Ը

Թէ ի՞նչպէս ծանօթացանք Եգիպտական պատմութեան. — Եգիպտական գիտութիւն. — Հատեան քաղաքակրթութիւն. — Քետաբաններ. — Բեւեռագիր. — Ատրեստանի գրատունը. — Աստեղագիտութիւն. — Փիւնիկեան գիր. — Կալմոս. — Գրի գիւտին օգտակարութիւնը. — Հնդիկ գրականութիւն. — Պարսիկ գրականութիւն. — Արեւելեան գիտութեան ազգեցութիւնն Արեւմտքի վրայ:

Բ. ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բամա. — Պուտհոս. — Լիւդիոյ Կրեսոս թագաւորը. — Կիւրոսի աւանդալէպը. — Կիւրոսի յաղթութիւնները. — Կիւրոսի պետութեան տարածութիւնը. — Կամբիւս. — Դարեհ Վշտասպետ:

Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ Ն Ե Ր

Իւրաքանչիւր Դոս - Պատմաւածքի գլխաւոր կէտերը բերանուսանելի:

ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԽՏԱՅԵԱԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Պատմաւածքներն ու ընթերցումները խտացնող թղթադրութիւններ՝ միտքը մշակելու, գատողութիւնը զօրացնելու, սիրտն ազնուացնելու:

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ն Ի Թ Ե Ր

Բաղդատական Քաղաքակրթութեան ու Բաղդատական Կենսագրութեան 20 նիւթեր:

Ա Շ Խ Ա Ր Հ Ա Յ Ո Յ Յ Ն Ե Ր

- 1. Արեւելեան հին աշխարհ. — 2. Նեղոսի Տելքա. — 3. Հին Եգիպտոս. — 4. Ուրարտուի թագաւորութիւն. — 5. Ատրեստան. — 6. Քաղդէաստան. — 7. Պողեստին. — 8. Փիւնիկէ. — 9. Փիւնիկեան գաղթականութիւնք. — 10. Պարսից կայսրութիւն. — 11. Արեւելեան հին աշխարհներ՝ բաղդատուած. — 12.

Սասանեան կայսրութեան արեւմտեան երկիրներ. — 13. Նախնեաց վաճառականութեան ուղեգրիցը:

Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր

1. Յղկուած քարէ կացին. — 2. Նախապատմական երեքթանիներ, կարթեր. — 3. Տղկուած քարէ դանակներ. — 4. Եղնիկի ոսկրի վրայ փորագրութիւն. — 5. Լճային բնակարաններ. — 6. Տոլէն. — 7. Մեմնոնեան արձան. — 8. Եգիպտական կոթող. — 9. Բուրգեր. — 10. Իբսամպուլի վիմափոր տաճար. — 11. Ապիսցուլը. — 12. Ոսիրիս. — 13. Քաջաճաւ. — 14. Մոմիս. — 15. Ուրարտական տեսարան. — 16. Ասորեստանց կառքեր. — 17. Նինուէի թագաւորի մը արձանը. — 18. Անգուլթ թագաւոր մը. — 19. Կախաղանաւոր պարտէզ. — 20. Սարգոնի պալատան դռներէն մէկը. — 21. Ասորեստանի կայսեր ընդունելութիւնը. — 22. Արեգակնային ժամացոյց. — 23. Մարգագլուխ թեւաւոր առիծ. — 24. Բաճաղու գլուխը. — 25. Մողսք. — 26. Հնդկական մեճեան. — 27. Պարսիկ պատերազմիկներ. — 28. Դարե՛՛ Վըշտասպեայ. — 29. Կիւրոսի գերեզմանը:

Հ Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն

1. Մեճենագիր. — 2. Բեւեռագիր. — 3. Եգիպտական. — 4. Փիւնիկեան. — 5. Յոյն. — 6. Լատին գիրերու եղանակաւորումներ. — 7. Սլաւ. — 8. Գերման. — 9. Հրեայ. — 10. Եթովպական. — 11. Ասորական. — 12. Հին Արաբական գիրեր. — 13. Մեսորպեան գիրերու եղանակաւորումներ:



ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԵՐ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

1. ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

Գ Ա Ս

Պատմութիւն. — Երկրագնդիս վրայ կատարուած դէպքերու նկարագրութիւնն է Պատմութիւնը :

Պատմութիւնը կը բաժնուի երկու մասերու՝ Նախապատմական ու Պատմական :


Նախապատմական շրջան. — Մարդկային պատմութեան ամէնէն հին դարերը կը կոչուին Նախապատմական Շրջաններ : Գրաւոր յիշատակարաններ չկան այս շրջաններուն վրայ . ասկէ՝ իր Նախապատմական անունը : Ասով հանդերձ Նախապատմական Հնախօսութիւնը, Բանասիրութիւնն ու Ընկերաբանութիւնը հետազօտելով ու բաղդատելով՝ բացորոշ կը տեսնենք թէ նախնական մարդիկ ի՞նչ կեանք կը վարէին և թէ ի՞նչպէս աստիճանաբար զարգացան :

Պատմական շրջան. — Իսկ այն համեմատաբար սակաւթիւ դարերն ուր մարդիկ կրցան արձանագրել իրենց կեանքի զանազան երեւոյթներն ու պարագայները՝ կը կազմեն Պատմական շրջանը :



Յզկուած քարէ կացիկ

բաններ կը կանգնեն, ինչպէս միջնաբերդեր ու սղոյթներ: Գաւառներու մէջ սողմէնները թուխ մանուկ կը կոչուին:



Նախապատմական երեքմանի-
ներ ու կարբեր




Յզկուած քարէ
դանակներ

Նախապատմական դարա-
շրջաններ. — Նախապատմա-
կան ժամանակը կը տեւէ շատ
դարեր: Ասոնք մարդուն
գործածած առարկայներու հա-
մեմատ կը բաժնուին յաջորդա-
կան բազմաթիւ դարաշրջան-
ներու. 1. Հին Քարի Դար, 2.
Նոր Քարի Դար, 3. Մետաղե-
րու Դար:


Մարդիկ նախ քարայր-
ներու և յետոյ լճային գիւ-
ղերու մէջ կը բնակին: Ան-
նեթեթ քարերէ յիշատակա-



Եզկիկի ոսրի վիշայ փորագրութիւն



Լճային բնակարաններ



Տղմէն

Երկրագնդիս
բոլոր ժողովուր-
դներն ապրած են
այս նախապատ-
մական ժամա-
նակը:

Մարդկային
ցեղեր. — Մարդ-
կութիւնը կը
բաժնուի չորս

սա որոշ ցեղերուն . 1. Սպիտակ ցեղ = Կովկասեան , 2. Դեղին ցեղ = Մղուշեան = Մոնկոլոյեան . 3. Խափշիկ ցեղ ու 4. Պղնձաւոր ցեղ :

Սպիտակ ցեղն ու Դեղին ցեղը միայն պատմական են :

Յովկասեան ցեղի երեք բաժանումները . — Արդի գիտնականները Սպիտակ ցեղը կը բաժնեն երեք գլխաւոր ճիւղի . Ա. Արիական = Հնդեւրոպական , Բ. Սեմական , Գ. Բասեան : Այս դասակարգութիւնը լեզուաբանական է , այսինքն՝ այս երեք ճիւղի լեզուներուն վրայ հիմնուած բաժանում մըն է որ սակայն երեք տարբեր քաղաքակրթութիւն կը ներկայացնէ միանգամայն :

Արիական . — Արիական ճիւղը կը բաժանուի եւ բոլորի գրեթէ բոլոր հին ու նոր ազգերը՝ Յոյները , Լասիկները , Իերուսնկները , Տեսոնկները , Կեդշերն ու Մըսները , նաեւ Ասիոյ երեք հին ժողովուրդները՝ Հայերը , Հնդկներն ու Պարսիկները :

Ասոց միւսեան ազգացը . — Լեզուները քննելով՝ կը տեսնուի սա՛ երեւոյթը . Հայ , Պարսիկ , Սանսկրիտ = Հնդկաց լեզու . Գերմանական , Ալաւական , Յունական ու Լատինական բարբառներն ընտանեկան նմանութիւն մը ունին իրարու հետ : Ահա՛ երկու օրինակ .

Հայերէն՝ Հայր , Սանսկրիտ՝ Բհսար , Պարսկերէն՝ Բեհեր , Յունարէն՝ Բասեր , Լատիներէն՝ Բասեր . (ասկէ Ֆրանսերէն՝ père) . Գերմաներէն՝ Գասեր , Անգլերէն՝ Ֆաթր :

Հայերէն՝ տուն , Սանսկրիտ՝ տանս , Յունարէն՝ տունս , Լատիներէն՝ տուս , Ալաւերէն՝ տունս , Կեղտերէն՝ տուն :

Կատարեալ իրողութիւն մըն է որ Պարսից , Հայոց ու Հնդկաց նախնայրերը բոլոր եւրոպական ազգաց նախնայրերուն հետ միեւնոյն ժողովուրդը կը կազմէին եւ

երբեմն ի միասին կը բնակէին Արեւմտեան Ասիոյ մէկ կողմը :

Սեմական . — Սեմական ճիւղը կը բաժանուի Ասորիոյ և Տիգրիսի ու Եփրատի երկիրներու նախնի բնակիչները : Այս ճիւղին պատմական գլխաւոր ներկայացուցիչներն են Եբրայեցիք , Փիւնիկեցիք , Ասորեսացիք ու Արաբացիք :

Բամեան . — Բամեան ցեղին միակ ներկայացուցիչներն են Եգիպտացիք :

Յեղերու որսաւոր . — Աշխարհիս ստեղծման վրայ զանազան ցեղերու քով գտնուած այլ և այլ աւանդութեանց մէջ ստոյգը միայն Եբրայականն է : Այս աւանդութեան համեմատ մարդկային ազգին խանձարուրքը Պաւլիի լեռներու կողմերը վնասուել է , մինչ մարդկային ընկերութեանց կազմութեան նպաստող բնական պայմանները կը գտնենք Հարաւային Արեւմտեան Ասիոյ մեջ , Եգիպտոսն ալ միասին : Եւ որովհետեւ ամէնէն հին ցեղերը կը տեսնենք այդ աշխարհներու մէջ , մասնաւոր որ լեզուաբանօրէն բոլոր եւրոպական ցեղերը ծագած են Արեւմտեան Ասիայէն , կրնանք ապահովապէս ըսել թէ ո՛չ թէ Մարդկային ցեղին , գէթ Բաղախիթրոսեան որսաւոր հոս էր :

Պատմական ամէնէն ինչ քաղաք . — Եթէ վեր աւանք Հնութեան վարագոյրն որ Ն . Բ . 1 = 30րդ դարէն անդին չ'անցնիր , կը նշմարենք միայն երկու քաղաքակրթութեան պատկառելի կերպարանքները , մէկը՝ Նեղոսի հովտին մէջ և միւսը՝ Բաղդադսալ : Այս անձուկ սահմանէն անդին մեզի համար Նախնի աշխարհը կը մնայ անթափանցելի մթութեան մէջ :

Պատմական երեւոյթ . — Երբ մարդիկ երկրի զանազան կողմերը ցրուեցան , իրենց երկրին , ինչպէս

Նաեւ շեզուին ու կրօնին հանգամանքին համեմատ այլ և այլ կնքարով սկսան զարգանալ : — Լեռնագաւառներու ու անայի երկիրներու բնակիչները թափառական կեանքը շարունակեցին , իսկ այն ազգերն որոնք պահարեք , ցած դաշտավայրերը գաղութներ հաստատեցին , հետզհետէ բազմաապով իրենց հաստատել յնակաւորութիւն շինեցին և մշակութեան պարագիւղ սկսան : Երկրագործութեան վրայ հիմնուած առաջին տնտեսութիւնները , ինչպէս ստորեւ պիտի տեսնուի , Հոանկ-Հոյ , Եանկ-Չե-Քեանկ , Գանգես ու Ինդոս , Տիգրիս ու Եփրատ և Նեղոս գետերուն հովիտներուն ցած դաշտագետներուն վրայ կը գտնենք : Ասոնց մէջ Զէն առաջինները Տիգրիսի պատմութեան մէջ մեծ նշանակութիւն մը չունեցան : Թէպէտ սրամտութեամբ և արուեստի ճարտարութեամբ երեւելի Չինացիները վաղուց տէրութիւն մը կանգնած էին՝ որ Ասիոյ ամէնէն մեծ մասը կը պարունակէր , սակայն իրենք զիրենք միշտ միւս ազգերէն մեկուսացած ու օտար ազդեցութեանէն ազատ պահելով : Կրցան Մարգկային ազգին ընդհանուր զարգացման մասնակից ըլլալ :

Նոյնպէս Հնդկները՝ որ հակառակ իրենց վաղեմի քաղաքակրթութիւնը յատկանշող ու արտացոլող նուիրակն մասեաններուն և հրաշայի շինեմուն՝ Պատմական ժողովուրդներու վրայ շատ քիչ ազդեցութիւն ունեցան :

Ասիոյ Հարաւային արեւմտեան կողմն է որ կ'ըկտի Բարձրագոյն մտաւոր զարգացման առաջին քայլը : Ասորեստանցիք , Բաբելոնցիք , Մարի , Պարսիք , Մուսասանցիք , Հիւսիսային և Փիլիսիպիցիք հիմնեցին իրենց զօրաւոր տէրութիւնները : Այդ միջոցին Հիւսիսային և Միջին Ասիա , ինչպէս նաեւ բոլոր Եւրոպայ աստիճանները թափառող հովուական և որսորդ ժողովուրդներ կը տեսնուէին :


Քաղաքակրթութիւն ու Աշխարհագրութիւն . — Պատմութեան աւանդած ին ազգերն երեւցան Նեղոսի , Տիգրիս-Եփրատի և Ինդոսի սիկհողէ կազմուած դաշտերուն մէջ : Ազգերը Մարգկային Ընկերութեան Նախնական վիճակի մէջ կրնան կազմուել այնպիսի տեղեր միայն , ուր արգաւանդ հող ու առատ սնունդ կան : Եւ ահա այդ երեք դաշտերն են որ նշանաւոր են իրենց արտասովոր պտղաբերութեամբ : Հոս բնութիւնն ինքնին կ'արտադրէ այլ և այլ հացաբոյսեր , նաեւ արմաւենիք , որովհետեւ ասոնք զիւրաւ կը մշակուին և առատ արգիւնք կը բերեն , բնակութիւնը հոն կարելի եղաւ : Մարգիկ այդ երկիրներու մէջ տեղաւորուելով՝ հովուական կամ թափառիկ վիճակէ վեր իսկ բարձրացած և Պատմական թուականներէն շատ առաջ Քաղաքական ընկերակցութիւններ կազմած էին :

Արիական Պատմութեան մէջ . — Եթէ զարգացեալ ազգերու Արդի Քաղաքակրթութեան վրայ յետադարձ ակնարկ մը նետենք , պիտի տեսնենք որ ուղղակի ու անընդհատ կապակցութիւն մը ունի Հռոմէականին հետ : Հռոմայեցիք ալ Յունաց ժառանգորդներն էին :

Արիական ցեղը նախնի ժամանակներու մէջ իսկ , երբ տակաւին ճիւղերու բաժնուած չէր , ամփոփ կ'ապրէր Ասիոյ մէջ : Իր վարած կեանքը հասարակ վայրենիներէ շատ բարձր վիճակ մըն էր և վարչութեան , Ընկերական կեանքի , Կրօնի և Մեքենական պարզ արհեստներու մէջ յաջող սկզբնաւորութիւն մը ըրած էր :

Յեղիւր բաղադրութիւն . — Քաղաքակրթ աշխարհի պատմութիւնն Արիական , Սեմական ու Քամեան ցեղերու պատմութիւնն է :

Արիական ցեղն Աշխարհի յառաջդիմութեան մէջ գլխաւոր դերը կատարած է : Արիականք են որ նոր գաղութներ հաստատած և հասած են պանծալի բարձր



25

35

55

65 Յ.Տ. ԳԵ.

զարգացման, ըլլա՛յ Բաղախական, Գիւսական, Գրական ու Արուեստական : Բամեան ազգերը բարացուցական քաղաքակրթութիւն մը մշակած են, բայց և այնպէս մեծ մասամբ առանձին զարգացած և Պատմութեան բուն ընթացքին վրայ կարեւոր ներգործութիւն ունեցած չեն : Սեմականք ու Արիականք Բամեաններէն ժառանգեցին Մեծագործութիւն, Մեքենական արհեստներ ու Վարչական եղանակ :

Սեմականներն ալ Մարդկային պատմութեան մէջ ամէնէն մեծ տեղը կը գրաւեն կրօնական զարգացման նկատմամբ. որովհետեւ ասոնցմէ ծագած են միակ Աստուծոյ մը գոյութիւնն ուսուցանող երեք կրօններն ալ — Հրեականը, Քրիստոնեականն ու Մանվեսականը — : Սեմականք ուրիշ նշանաւոր գործ կատարած չեն և երբեք յառաջընթաց եղած չեն : Ընդհանրապէս ունեցած են արևալստողական տրամադրութիւն, որ զիրենք անշարժ պահած է իրենց ծննդավայրի անձուկ սահմաններու մէջ՝ Տիգրիսի, Միջերկրականի ու Կարմիր ծովու միջեւ :

Սեմականաց ու Արիականաց գլխաւոր յատկութիւններէն մէկն է Մարդկային ազգը միացնելու միտումը : Սեմականներն իրենց յարացուցին համեմատ այս միութեան գործը ջանացին կատարել Միաստուածութեանը, մինչ Արիական ցեղը գործնականապէս, այսինքն՝ ի սկզբան Աշխարհակալութեամբ ու յետոյ կրթութեան միջոցաւ :

Աշխարհակալութենէն աւելի Բաղաքակրթութեամբ ազգերը բարոյապէս միացնելու գործն այս վերջին դարերուն պահուած էր և կը կատարուի հետզհետէ Եւրոպական ազդեցութեամբ գրեթէ բոլոր աշխարհի վրայ :

2. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԵՐ

ՍՊԻՏԱԿ = ԿՈՎԿԱՍԵԱՆ ՑԵՂ

	...	
	(((
		Հայեր
		Հնդիկներ
		Պարսիկներ
		Յոյներ
		Լասիմներ
		Գերմաններ
		Կեղեր
		Սլաւներ
		Եբրայեցիք
		Փիւնիկեցիք
		Ասորեստանցիք
		Արաբացիք
		Նախահայեր
		Եգիպտացիք
		Քաղդեացիք


Ա. ԱՐԻԱԿԱՆ ՃԻԻՂ
(Հնդեւրոպական)

Բ. ՍԵՄԱԿԱՆ ՃԻԻՂ


Գ. ԲԵՏԱՅԻՔ

Դ. ՈՒՐԱՐՏԱՅԻՔ

Ե. ԲԱՍԵԱՆՔ



3. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԵՐԸ



1. Արեւելեան Հին ազգեր
2. Յունաստան
3. Հռոմեական Պետութիւն
4. Միջին Դար
5. Նոր Դար
6. Ժառանգական իշխանութիւն



4. ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ




Հին պատմութիւն. — Լ. դարէն (Ն. Ք.) մինչև Արեւմտեան Հռոմէական պետութեան անկումը 476 (Յ. Ք.):


Միջին դարու պատմութիւն. — Արեւմտեան Հռոմէական կայսրութեան անկումէն մինչև 1453:

Նոր պատմութիւն. — 1453-1789:

Ժամանակակից պատմութիւն. — 1789էն մինչև մեր օրերը:



5. ՎԱՐՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ




Մարդկային ազգին Մանկութեան շրջանին վերաբերեալ Քրմական տէրութիւններէն զատ կրնանք կառավարութեան երեք եղանակ զանազանել:

Ա. Միապետութիւն = Monarchie, ուր կը տիրէ իշ-

խանը ժողովուրդին գործակցութեամբ, արուած օրէնքի համեմատ: Բռնակարգեան = Despotisme կը յանգի այս կերպ կառավարութիւնը, եթէ իշխանին կամքը ըլլայ օրէնք:

Բ. Ազնուապետութիւն = Aristocratie է ինչ ազնուական = հարուստ ազգատոհմերուն տիրապետութիւնը: Ասիկայ կը դառնայ Նուազնուապետութիւն = Oligarchie, եթէ առանձին գերդաստաններ այս իշխանութիւնն իրենց յափշտակեն:

Գ. Ռամկապետութիւն = Democratie է, եթէ ամէն քաղաքացի վերին իշխանութիւնը վարէ: Ուր որ բոլոր երկրին բնակիչները, նաև ո՛չ-քաղաքացիներն այս իշխանութեան միջամտեն, կամ ո՛ւր որ իշխանութիւնը ժողովուրդէն կ'անցնի Ռամկին կը տիրէ Աւերոյապետութիւն = Ochlocratie:



Թեւադրութիւններ. — Ի՞նչ է Պատմութիւնը: — Պատմութիւնը քանի՞ մաս ունի: — Որո՞նք են Նախապատմական դարերը: — Ի՞նչ է Մեկնիրը: — Տղմէնը: — Որո՞նք են մարդկային ցեղերը: — Որո՞նք պատմական են: — Որո՞նք են Կովկասեան ցեղի երեք բաժանումները: — Որո՞նք Արիական են: — Անոնց միտքեան ապացոյցը կրնա՞ր ըլլալ: — Որո՞նք են Սեւականները: — Քաղաքները: — Ո՞րն է ազգաց որոտները: — Ե՞րբ կ'սկսի Պատմութիւնը: — Ո՞րն է Պատմական ակեհեան հին թուականը: — Ի՞նչ Պատմական երեւոյթներ կը տեսնուին: — Քաղաքակրթութիւնն ի՞նչ աղերս ունի Աշխարհագրութեան հետ: — Արիական ի՞նչպիսի դեր ունեցան: — Ի՞նչ կը տեսնուի ցեղերու բաղդաստեաններէն: — Որո՞նք են Ժառանգական կառավարութիւնները: — Ի՞նչ է Միապետութիւնը: — Ազնուապետութիւնը: — Ռամկապետութիւնը: — Աւերոյապետութիւնը:



6. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇԻՆ ԱԶԳԱՑ ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑԸ (*)

1. Միջին ու Հիւս. Ասիա գրեթէ բոլորովին անձանօթ էին հիներուն: Ասիոյ արեւելեան ամէնէն ծայրն էր Սեբեկա = Չինասան. ասոր արեւմտեան դին, մինչեւ Կասպից ծով՝ Սկիւբիա: Ինչոս գետով Պարսկաստանէն բաժնուած Հնդկասանն Աղեքսանդր Մեծէն ետքն աւելի ծանօթացաւ:

2. Ինչոս և Տրգրիս գետերուն մէջ.

Ա. Երանեան լեռնաղաւս որ մասամբ լեռնային ու պտղաբեր է, մասամբ՝ անապատ ու անմարդաբնակ: Իր Հիւս. կողմն էր Կասպից ծովը, իսկ հարաւէն իրեն սահման ունէր Երիթրեական = Կարմիր ծովն ու Պարսից ծոցը:

Այս լեռնադաշտը կը պարունակէր.

1. Դէպ ի հիւսիսային արեւմուտք պտղաբեր ու դարաւանդ Մարասանը՝ Կասպից ծովուն հարաւային դին, Եկրասան = Հանսասան գլխաւոր քաղաքով:

2. Դէպ ի հարաւային արեւմուտք Պարսկասան՝ Պերսեպոլիս մայրաքաղաքով ու Պասարգաս գլխաւոր քաղաքով:

Եւ աւելի դէպ ի հիւսիս 3. Պարթեւասան՝ Թարս քաղաքով:

4. Բակսրիա՝ Բակսրա գլխաւոր քաղաքով:

Բ. Ասորեսան Տրգրիսի Արեւելեան դին՝ Նինուռ մայրաքաղաքով ու Արքեղա գլխաւոր քաղաքով:

3. Տրգրիս ու Եփրատ գետերուն մէջ.

(*) Տես էջ 8-9:

Ա. Ուրարտու = Հայասան լեռնադաւառը՝ Կասպից ծովուն, Պոնտոսի, Եփրատի ու Տրգրիսի մէջ:

Ուրարտուի հիւսիսային դին՝ Պոնտոսի ծովուն արեւելեան ծովեզերքը կար Կողբիս:

Բ. Միջագետք՝ Ուրարտուի հարաւային դին, տեղ տեղ լիճերով ու բարերեր դաշտերով ընդհատուած խոպան ամայի երկիր մը:

Գ. Բաբելոն՝ Միջագետքի հարաւային դին, ցած դաշտավայր մը՝ որ երկար ժամանակ Ասիոյ ամէնէն պտղաբեր ու հարուստ երկիրն էր: Մայրաքաղաքն էր Բաբելոն՝ Եփրատի եզերքը. գլխաւոր քաղաքը՝ Կոււնաֆա:

4. Եփրատի արեւմտեան կողմը.

Ա. Արաբիա՝ Կարմիր ծովու եզերքը:

Բ. Պաղեստին՝ Արաբիոյ ու Փիւնիկէի մէջ. Երուսաղեմ մայրաքաղաքով:

Գ. Փիւնիկէ՝ Պաղեստինի հիւս. արեւմտեան ծովեզերքը. Սիդոն ու Տիւրոս գլխաւոր քաղաքներով:

Դ. Ասորիք՝ Լիբանանու, Տորոսի ու Եփրատի մէջ, դէպ ի հիւսիս հարթ, դէպ ի հարաւ լեռնային ու պտղաբեր: Գլխաւոր քաղաքներն էին Դանաւիլոս, Պազկիր, Անիսոփ:

Ե. Փոքր Ասիա՝ Հալիս, Հերմոս ու Մէանտր գետերէն ուսուցուած, լեռնային ու պտղաբեր երկիր մըն է: Կը պարունակէր.

Ա. Դէպ ի արեւմուտք.

1. Միւսիա. գլխաւոր քաղաքներն էին Իլիոն, Պերկաւոն ու Կիզիկոն:

2. Լիւդիա՝ Սարդիկե ու Մազնիսա գլխաւոր քաղաքներով:

3. Կարիա. գլխաւոր քաղաքներն էին Հայկերան-
նես ու Միդիս:

Բ. Դէպ ի Հիւսիս.

1. Բիւքանիա՝ Նիկիա, Բաղկեդոն ու Նիկովիդիա
քաղաքներով:

2. Պափլագոնիա՝ Սիւնոյ գլխաւոր քաղաքով:

3. Պոնտոս՝ Տրապիզոն, Աւիտոս=Սաւսոն ու Կիրա-
սոն քաղաքներով:

Գ. Դէպ ի հարաւ.

1. Լիւկիա՝ Պասարա գլխաւոր քաղաքով:

2. Պամփիլիա. գլխաւոր քաղաք Ասադիա:

3. Կիլիկիա՝ Տարսոն ու Իսոս գլխաւոր քաղաք-
ներով:

Դ. Կեդրոնը.

1. Փոլիզիա՝ Գորդիոն քաղաքով:

2. Գաղատիա. գլխաւոր քաղաքն է Անկիւրա:

3. Կապադովկիա. գլխաւոր քաղաքն է Կեսարիա: Փոքր Ասիոյ հարաւային կողմը, Միջերկրականի
մէջ կը գտնուէր Կիպրոս կղզին:



ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇԻՆ ԱԶԳԵՐ

1. ԲԱՄԵԱՆՔ

Ա. ԵԳԻՊՏԱՅԻՔ

Գ Ա Ս

Եգիպտոս. — Հատաքարի ժայռերով ու աւազի
անապատներով շրջապատուած և Նեղոս գետով ոռոգ-
ուած Եգիպտական գետահովիտը կը բաժնուէր. 1. Վերին
Եգիպտոս Թեբէ մայրաքաղաքով, 2. Միջին Եգիպտոս՝
Մեմփիս գլխաւոր քաղաքով ու 3. Ստորին Եգիպտոս՝ Նե-
ղոսի եօթը ճիւղերուն մէջ, Սայիս ու Պերուսիոն քա-
ղաքներով:


Հին ինքնակալութիւն. — Հողագնտիս ամէնէն հին
ու քաղաքակիրթ ժողովուրդներէն մէկը՝ Եգիպտացիք
Նեղոսի Տելլագի մուտքին վրայ անձանօթ ժամանակ-
ները տէրութիւն մը կը հիմնեն Մեմփիս մայրաքա-
ղաքով:

Մենես կը կարծուի ատոր հիմնադիրը: Իրեն յաջորդող
թագաւորներուն՝ Եգիպտական ամէնէն հին հարստու-
թեանց մէջ՝ նշանաւոր են Քեփր=Քեոպս, Քեփրէն ու
Միկերիս որ կը կանգնեն աշխարհահռչակ բուրգերը, նաև

36199

Առեկնիս որ փորել կուտայ

Մերեւելան յիճը՝ Նեղոսի յորդումը կանոնաւորեալու համար և կը շինէ Լարիւրիկրոսն որ Եգիպտոսի հրաշարիքներէն մէկըն է :




Նեղոսի Տեղան

Բուրգերէն ամէնէն բարձրը Քեոպսին է 152 մեզր : հազարաւոր մարդիկ 36 տարի կը գործեն ասոր վրայ : Հիւստոսներու արշաւանքը.— Ասորիքէն ու Հիւսիսային Արաբիայէն Հիւստս = հովիւ ժողովուրդներ Եգիպտոսի հարստութեան հրապուրուած՝ Սուէզի պարանոցէն Նեղոսի հովիտը կը մանեն ու բոլոր Եգիպտոս հարկատու կ'ընեն 2200ին (Ն. Ք.) : Հինգ հարիւրամեայ բռնաւորական իշխանութենէ մը ետք, Թեբէի Առնսիս = Ահնէս թագաւորը զիրենք Վերին Եգիպտոսէն կը վըսրնտէ 1700ին : Թոսսիս = Տուրոնոյիս Գ. ասոնց ձեռքէն կ'առնէ Սասրին Եգիպտոսն ու գանձք Ասիա կը հայածէ : Յովսէփ գեղեցիկ ու Իսրայէլացիք հաւանականաբար Հիւքսոսներու օրով Եգիպտոս հաստատուած են :

Թոսսիս Գ. կը տիրէ Ասորեստանի ու Սուսանի :

Առեկոփիս Գ. զոր Յոյները Մեկնոն կը կոչեն՝ կը շինէ իր անսահով կոչուած Մեկնոնէն երգեցիկ արձանն որ



Հին Եգիպտոս

ամէն առտու կ'ողջունէր Արշալոյսը՝ իր երկնային մայրը :

Մեծ բուսիսներ.— Հիւքսոսները կ'արտաքսուին Թեբայի իշխան՝ Ամոսիի շնորհիւ որ յետոյ ամբողջ երկրին վրայ գերիշխանութիւն մը կ'ունենայ : Իր յաջորդներն ալ կը ժառանգեն այս իրաւունքը : Այսպէս Եգիպտոս նորէն կեդրոնացեալ պիտութիւն մը կ'ըլլայ Թեբէ մայրաքաղաքով :

Եգիպտոսի պատմութեան ամէնէն փառաւոր շքը ջանը կը տեսնեն հինգ դար, ժ.հ. հարստութեան մինչև

Թ. (1700—1200 Ն. Ք.): ԺԸ. հարստութեան ատեն
Եգիպտական արուեստները բարձրագոյն կատարելութեան
կը հասնին՝ և Թերէի մեծ տաճարները կը կառուցուին :



Մեմֆոսեան Արձանք

Եգիպտացիք արտաքին յաշխութիւններ ալ կը
կատարեն. Եթովպիան, Արաբիան ու Ասորիքը կը նուա-
ճեն, Եփրատէն անդին կ'անցնին և Միջագետքի մէկ
մասը կը գրաւեն : Ոչ միայն զինք չըջապատող ա-
նապատները, այլ եւ քաղաքական հզօր կազմակերպու-
թիւնն էին որ պահպանեցին Եգիպտոսը, բնատոմարի քա-
ղաքակրթութիւն մը ծաղկեցաւ այս շրջանին մէջ :

Կը կարծուի թէ այն փարաւոնն «որ ոչ ճանաչէր

զՅովսէփ» ԺԸ. հարստութեան առաջին թագաւորն Ամասիս
Ա. = Ահմէս էր որ Հիւքսոսները վանելով՝ երկիրն ազատածէր
Հոամսէս Բ. — Յաջորդ ԺԹ. հարստութիւնն
(1463-1288) ալ այսպէս փառաւոր էր :

Սեդի Ա. մինչեւ Վերին Ասորիք արչաւելէ ետք,
մեծագործ շինութեանց կը ձեռնարկէ : Շինել կուտայ
Քառնափի մեհեանին սիւնազարդ սրահը, նաեւ «Թա-
գաւորներու դաւքարան» վի-
մախօր գերեզմանները :

Իր յաջորդն է այն Հոամս-
սէս Բ. ք զոր Յոյները Սե-
տուս կ'անուանեն : Քառնա-
քի որմերուն վրայ արձա-
նագրուած քերթուած մը կը
հաստատէ արդարեւ թէ
Հոամսէս Բ. մեծագործու-
թիւններ ըրած է : Լուխորի
կոթողներէն մէկն որ կը
բարձրանայ Բաբիլոն Գոնգոր-
սա հրապարակը՝ արձանա-
գրութիւններ կը կրէ իպատիւ
Հոամսէս Բ. ի : Սոյս շինու-
թիւններուն համար Հոամսէս
դառն աշխատութեանց կ'են-
թարկէր իր գերիները : Իս-
րայէլացիք ալ կը չարչար-
ուին այս տաժանելի աշխա-
տութիւններով և վերջա-
պէս չեն հանդուրժեր ու կը
մեկնին : Եգիպտոսէն : Իսրայէլացոց ելքը տեղի կ'ու-
նենայ 1320ին (Ն. Ք.) ԺԹ. հարստութեան չորրորդ կամ



Եգիպտական Կարով

հինգերորդ թագաւորին՝ Մեղեքսաի օրով որ կարմիր ծովու մէջ ընկրված խտտասիրտ փարաւանն է :

Անկիմաս քուականը.— Եգիպտոսի անկուսը կ'սկսի Ի. հարստութեան (1288—1480) առաջին թագաւոր Հոաննես Գ.էն եաք, որովհետեւ փոխանակ իր նուիրական երկրին ու իր անապատին սահմաններուն մէջ պահպանելու իր զօրութիւնը, աշխարհակալութեանց կ'սկսի :

Երբ դատարկասուն թագաւորներ կը յաջորդեն մեծ փարաւաններուն, Ասեղնի ֆրանսիացի կը յաջողի Թեքէի գահուն վրայ բազմել, մինչ ուրիշ հարստութիւն մը (ԻՍ) կ'իշխէր Տակայիս՝ Տելդային մէջ :

Եգիպտոս բաժնուած և տկարացած՝ օտար ազդեցութեանց կ'ենթարկուի, և իր թագաւորներն առօրական անուններ կ'առնեն : Սողոմոնի կանանոցին համար իրենց արեանակից իշխանութիւններ կը զրկեն և Լիբիոյ պահակազօրքով կը շրջապատուին :

Քուշի=Երովպիոյ բանակներ կը գրաւեն Վերին Եգիպտոսը 722 (Ն. Ք.) : Եթովպական տիրապետութիւնը Իե. հարստութիւնը (745—665) վերջ կուտայ Ասորական իշխանութեան (671 Ն. Ք.), ուրկէ եաք Պաւլեսիլոս Ա. (665 Ն. Ք.) վերջին (ԻԶ.) հարստութիւնը կը հիմնէ Սայիս :

Ատեն մը Եգիպտացեաց տակ նուաճուած Եթովպացիները Սարակով թագաւորին ժամանակ Եգիպտոսի վերին իշխանութիւնն իրենց ձեռքն անցունելով (740—670 Ն. Ք.) զանիկայ 50 տարի կը պահեն :

Բայց կամաց կամաց գաւառները օտարականներուն լուծր կրգան թոթվել և ինքնօրէն տէրութիւններ հիմնել : Այսպէս յառաջ կուգան 12 անկախ տէրութիւններ (670) որոնց իշխաններն իրարու հետ գաշտակցութիւն մը կը կազմեն և ասոր յիշատակին համար Լաբելրինիթոսը նորէն կը շինեն : Հոս ժողովներ կը գումարեն ու զօհեր կը մատուցանեն :

Պաամեաիկոս.— Երկոսասանից պետերիւնը միայն

15 տարի կը տեւէ : Որովհետեւ Պաամեաիկոս,—12 իշխաններէն մէկը—որ յոյն ու փիւնիկեցի վարձկան զօրքերով իշխանութեան կը հասնի՝ կը ջանայ իր տէրութիւնն ամրացնել, երկիրներ բաշխելով այդ ազգերու ծովահէններուն : Եգիպտոսի մէջ ազատ վաճառականութիւն ընելու հրաման կուտայ Յունաց և օտար զինւորներ իր ծառայութեան կ'առնէ : Այս նորութեանց համար 200,000 քուրմ ու զինւոր եթովպիա կը գաղթեն : Պաամեաիկոս երկար պատերազմէ եաք Փղշտացիները հարկատու կ'ընէ :

Նեֆալով.— Իր որդին Նեքայով հօրն սկսած աշխարհակալութիւնները կը շարունակէ և վաճառակալութեան ու նաւարկութեան մղում կուտայ : Փիւնիկեցիք իր հրամանաւ ու քաջալերութեամբ երեք տարի Ափրիկէի բոլորաբք կը նաւարկեն : Փիւնիկեցիք Բարեյուսոյ գլխէն ու Հեռակիւսի կորոյններէն = Ճիպրաքարէն դարձան : Նեքայով կ'ուզէ Նեղոսը ջրանցքով կարմիր ծովուն հետ կապել՝ Սեդի Ա. ի նին ջրանցքը բանալով : Բայց 605ին Կարկեաիլի քով Նաբուգոդոնոսորէն կը յաղթուի և Ասորիք ու Պաղեստին բրած աշխարհակալութիւնները կը կորսնցնէ : Իր յաջորդներէն Պաւլիսի ու Ապրիեսի ժամանակ տէրութիւնը շատ կը տկարանայ :

Եգիպտոս վերջնականապէս կը գրաւուի.— Ամասիս մէջ մըն ալ կը կենդանացնէ տէրութիւնը, սակայն Եգիպտոս կը նուաճուի Պարսիկներէն Կաւրիլուս առաջնորդութեամբ (525 Ն. Ք.), Ամասիսի որդի Բրաւեսիկորի օրով : Յետոյ Մեծն Աղեքսանդր կը տիրէ երկրին (331) և ծովեզերքը կը հիմնէ նոր մայրաքաղաք մը որ Գրական ու Առեւտրական մեծ կեդրոն մը մը դառնայ և իր անունով Աղեքսանդրիա կը կոչուի :

Աղեքսանդրի մահէն եաք իր պետութիւնը կը բաժնուի և զօրավարներէն Պտղոմէոսին մաս կ'իջնայ (323 Ն. Ք.) Եգիպտոսը : Այդ ժամանակէն սկսեալ երեք դար Պտղոմէոսեց յունական հարստութիւնը կը տիրապետէ Նեղոսի հովտին, մինչեւ որ այս պետութեան վեր-

Ղինը՝ Կդեոպսուսա թագուհին հռովմայեցիներէ յաղթուելով՝ ինքնասպան կ'ըլլայ և Եգիպտոս Հռովմէական նահանգ կը դառնայ 30 թուականին (Ն. Գ.):

Թեղադուրեցներ . — Նխարագրեցի՛ք Եգիպտոսը . — Որո՞նք եղան հիկ կայսրութեան նշանաւոր փարաւոնները . — Ինչե՞ր շինեցին . — Որո՞նք են Հիւստուներն եւ ո՞րչափ տիրեցին Եգիպտոսի . — Որո՞նք Հիւստուները կը հալածեն . — Մեծ քուակախին նշանաւոր փարաւոններն որո՞նք են : — Ի՞նչեր ըրին : — Ե՞րբ կ'սկսի Անկիւան քուակախը . — Եգիպտոս ինչե՞ր պստահեցան նոյն միջոցին : — Ո՞վ է Պաւսանիսկոս . — Ինչե՞րով ասեցի եղաւ : — Որո՞նք են Նեփտոլի նշանաւոր ձեռնարկները : — Եգիպտոս ի՞նչպիսի եւ որո՞ւ ձեռնով կը գրաւուի վերջնականապէս : — Այնուհետեւ որո՞նք իշխանութեան կ'ենթարկուի հետզհետէ :

Ա. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Ն Ե Ղ Ո Ս Ի Տ Ե Լ Դ Ա Ն

Նեղոսի գետաբերանէն կազմուած երկիրը՝ Ստրիկ եգիպտոսը Տեղա ալ կը կոչուի, որովհետեւ յունարէն Δ գրին պէս եռանկիւն մը կը ձեւացնէ՝ երկու կողմն ունենալով Նեղոսի երկու ձիւղն եւ մէկ կողմը՝ Միջերկրականի եզրը :

Այս Տելուան 23000 քառ. մեդր ընդարձակութեամբ դաշտ մըն է ջրանցքներով բաժնուած եւ կահուող, թրջած հողերէ կազմուած : Զուրը միշտ իր ընթացքը կը փոխէ այս դաշտին վրայ ծով ջհասած՝ աւազակոյտներու կը հանդիպի եւ վատաւող ճահիճներ կը կազմէ : Ամբողջ Տելուան ծովուն ներքեւ էր առաջուց, ծով էր, բայց Նեղոսի բերած հողերով կազմուած է ցամաքն որ կ'ընդարձակի հետզհետէ : Ամէն տարի գետաբերանը մէկ մեդրի չափ կը յառաջանայ դէպի ծով :

«Եգիպտոս Նեղոսի պարզեւ» կոչուած է, որովհետեւ քիչ անգամ կ'անձրելէ այս հովտին մէջ եւ առանց Նեղոսի Եգիպտոս անապատ մը պիտի ըլլար :

* * *

Բ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Մ Ե Ր Ի Ս Ե Ա Ն Լ Ի Ճ . — Լ Ա Ք Ի Ի Ր Ի Ն Թ Ո Ս

Երաշտութեան պահուն ջուր մատակարարելու համար թէեւ ջրամբարներ շինուած էին, բայց շատ անգամ անոնք անբաւական ըլլալով՝ փորուեցաւ Մեդիսեան ահագին յիճը ծառայ ովսիսին մէջ 100 քառ. քիլոմեդր տարածութեամբ : Ունէր երկու ջրանցք, մէկն ի հարկէ Նեղոսէ ջուր առնելու եւ միւսը՝ բաշխելու համար : Մեծ ողողումներու ատեն աւելորդ ջուրերը կը հոսեցնէին այս լճին մէջ, եւ երբ Ստրիկ Նեղոսի վտար ունենար, դուրս պարսպը ջրանցքը կը բանային :

Լաքիւրիերոսն էր մեհեան մը լճին արեւելեան կողմը 200 մեդր երկայնութեան եւ 170 մեդր լայնութեան վրայ բարձրացած : Բառին նշանակութիւնն է՝ Տաճար հանդէպ լճին : Նըջապատէն ներս մարդ կը կորսուէր փոքրիկ մութ խուցերու խառնակութեանց մէջ : Այս սենեակները թուով 3000՝ քառակուսի էին ու նըբանցքներով կցուած եւ ամենուն վրայ իբր տանիք ծածկուած էր միակտուր քար մը : Ներս մտնող օտարական մը չէր կրնար դուրս ելլել առանց առաջնորդի : Այս սենեակներուն մէջ կը պահէին աստուածներու եւ թագաւորներու արձաններն ու թանկագին առարկայները՝ զանոնք աղտոտութեան, միջատներու եւ արեւուն դէմ պատապարելու համար : Հերոդոտոս կ'ըսէ թէ «Բուրգերն իրենց հոչակէն աւելի մեծաշուք երեւցան ինծի, բայց Լաքիւրիէն ուր կը դերագանցէ բուրգերն իսկ» :

* * *

Գ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Ջ Ր Ա Ն Յ Բ Ե Ր

Ո՛չ նուազ նշանաւոր են նաեւ Արդիսեան քիւրն եւ մեծ Ջրակցին որոնց առաջինն ամբողջովին եւ երկրորդը մասամբ շինել տուած էր Սեդի Ա. թագաւորը եւ զոր շարունակել ուղեց Նեփալով : ձեպել Աթոքի ոսկեհանքերուն անջրդի ճանապարհին


վրայ փորուած էր սոյն ջրհորը, զոր յարմար է Արդիսեան կոչելը քանի որ ջուրը կը ցայտէր անկէ: Իսկ ջրանցքն սրուն հետքը կը տեսնուի ցարդ՝ Նեղոս գետէն Գարմիր ծով պիտի յանդէս: Սեզի Ա. չեր կրցած է գլուխ հանել այս խորհուրդը, ինչպէս չիրցաւ նաեւ Նեքայով: Թ. Գարուն վերապահուած էր բանալ Սուեզի պարսկոցը եւ 3500 տարի ետք թէեւ տարբեր, բայց աւելի մեծ ուղղութեամբ իրականացնել Սեզի փարաւունին յղացած գաղափարը:

* *

Գ. Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

Բ Ո Ւ Ի Գ Ե Ր

Բուրգերը սահմանուած էին թագաւորներու շիրիմ ըլլալու: Կիզէի Մեմփիսի երեք բուրգերն ամէնէն նշանաւոր են. 70ի չափ



Բուրգերը

բուրգեր կան Մեմփիսի մօտերը՝ Նեղոսի ձախ գետափը: Երեք մեծ բուրգերուն ամէնէն մեծն որ ունի 450 ոտք բարձրութիւն,

76¹ քառ. ոտք խորիսն՝ կը տարածուի ընդարձակ մակերեսովի մը վրայ: Երկրորդ բուրգն անոր կէս մեծութիւնն ունի գրեթէ: Այս շինութիւններու համար պահանջուած սյնքան երկարատեւ աշխատութեանց առջեւ եգիպտացիք երբեք չընկրկեցան: Սուկավիթ խար բարիք, մինչեւ 50 տակառաչափ ծանր, սալակառքով կը բերէին մղանաւոր հեռաւորութենէ: 2000 հոգի երեք տարի շարունակ ծառայեցին այդպիսի քար մը քարահանքէն բերելու իր շինութեան տեղը:

Բուրգերուն արտաքին շրջապատի ողորկ ու սրբատու քարերը վար առնուած են: Մեծ բուրգը վնասուած է 7 մեդր եւ մնացած է 152 մեդր, այսինքն՝ 450 ոտք:

Երեք մեծ բուրգերը շինած են կարգաւ Գ. հարտութեան թագաւորներէն՝ Բուսոս, Քեփսէն ու Միկերիս: Առաջ կարծուեցաւ թէ բուրգերը սոսի քարէ սիւներ են, որո՛ւնստեւ գրաւէն յղկեալ եւ իրարու ազուցուած ամրացած ըլլալով, կարելի չէր անոնց վրայ բարձրանալ: Սակայն բուրգերուն պատերը ճեղքելով՝ մէջը գլտան շատ մը խցիկներ: Ասոնցմէ միայն մէկին մէջ գտնուեցաւ դազաղ մը՝ Միկերիսի դազաղը: Միւս երկու թագաւորներունը չկային, դերեղմանները սրբապղծուած էին: Այս տեսակ սրբապղծութենէ աղտո մնալու համար էր որ շիրիմներու դռներն ա՛յնքան խնամքով գաղտնի կը պահուէին:

* *


Ե. Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

Ս Փ Ի Ն Բ Ս, Բ Ա Ռ Վ Ա Բ Ի Մ Ե Ծ Մ Ե Շ Ե Ա Ն Ը

Սիփիւսներն որ Զոլութեան ու Իմացականութեան խորհրդանշան էին՝ ունէին ընդհանրապէս մարդու գրուի ու առիւծի մարմին: Ասոնցմէ ամէնէն մեծը կը գտնուի մեծ բուրգին ստորտուր 90 ոտք երկայն, 70 ոտք բարձր:

Եգիպտացուց մեհեանները հիանալի էին. նախադռուին առջեւ սիփիւսներու երկար շարք մը կար: Երկու միակուր երկնալացիկ կաթողներ կը բարձրանային նախադռուին երկու կողմը, ասկէ կը մտնէին սիւնազարդ, գեղանկար ու պերճաքանդակ

մեհեաններն որոնց մէջ նշանաւորն է Բառնաֆիլը: Ասոր սրահը 330 ոտք երկայն, 170 ոտք լայն՝ հաստատուած էր 164 հսկայ քարերէ սիւներու վրայ: Սրահի կեդրոնական 12 սիւները 66 ոտք բարձր էին 33 ոտք շրջապատով:



Իփսամպուլի վիմափոր սահար

Նուպիոյ մէջ կը գտնուի Իփսամպուլի վիմափոր մեհեանն որուն ճակատը զարդարուած է Հռամսէս Բի 70 ոտք բարձր չորս մեծաշէն արձաններով:



Ձ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

4 Ե Ն Յ Ա Ղ

4300 տարի հնութիւն ունեցող գերեզմաններու ներքնա-կողմի հիանալի նկարներէն կրնանք գաղափար մը կազմել եգիպտացւոց կենցաղին վրայ: Նկարներ կան, ուր կը պատկերանան գիւղացիներ՝ որ կովեր կը կթեն, եգներու լծուած պղտիկ արօր-

ներով հողը կը մշակեն, կը սերմանեն, կը ցաքանեն, ցորենը կը հնձեն, խուրձ կը կապեն, կը չափեն եւ իշու վրայ բեռցուցած կամ նաւակները լեցուցած՝ կը փոխադրեն: Նկարներ ալ կան որ կը ներկայացնեն այգեկութք եւ գինեշինութիւն, քանդակագործութիւն, բրուտագործութիւն, կօշկակարութիւն, հիւանութիւն եւ կտուագործ կիներու աշխատութիւն: Այլ նկարներու մէջ կը տեսնուին նաեւ վարպետներ որոնք գաւաղան ի ձեռին կ'աշխատցնեն այս բանւորները: Գործաւորը անտանլի աշխատութեանց մատնուած էր:


Հռամսէս Բի ժամանակակից նոտար մը իր զաւկին նկարագրած է գործաւորներուն կրած ծայրայեղ թշուառութիւնը:



Է. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

ԵԳԻՊՏԱՅԻՈՑ ԿՐՕՆԸԸ

Եգիպտական մէն մի ընտանիք, ինչպէս նաեւ բոլոր հին ժողովուրդները, կը պաշտէին իրենց նախնիքը: Կը հաւատային ոգիներու եւ ուրուականներու: Կը պաշտէին Բնութեան անձնաւորած ուժերը՝ Արեւը, Լուսինը, Գիտը, Հովը, Ծառերն ու Քարերը:



Ապիս ցուլլ

Ասկէ զատ եգիպտացիք կենդանացուցիչ գօրութիւնը կը պաշտէին նաեւ կենդանիներու, ինչպէս՝ Ապիսի, պիծակի, հեսահակի—icheumon, կոկորդիլոսի, կասուի, ֆայահակի—ibis մէջ եւն: Կը հաւատային թէ աստուածներն անոնց մէջ կը մարմնանան յաճախ: Կը հաւատային Հոգոյն անմահութեան, ասոր տեւականութիւնը, ո՛ր միայն եգիպտացւոց, այլ եւ բոլոր նախնական ժողովուրդներու կարծիքով, մարմնոյն անսպական մնալուն հետ կապ-


ուած ըլլալով՝ մեռելները կը գնահին եւ գանոնք ստորերկրայ ընդարձակ գերեզմաններու մէջ կը պահէին: Ասկէ յառաջ եկաւ Հոգեյաժողովին որ ուրիշներէն սխալմամբ Հոգեփոխարին թարգմանուած է:

Գերեզմաններէն սմանք մինչեւ հիմայ անեղծ մնացած են: Անհեթեթ աւերորդապաշտ էին: Ոչ միայն պաշտօն կ'ընծայէին այն կենդանիներուն ուր կը մարմնանար կենդանացցիչ զօրութիւնը, այլ եւ կը պաշտէին վնասակար կենդանիներն ալ՝ զանոնք ուղորելու համար, ինչպէս՝ Հայաստանի մէջ տեղ տեղ կը սպահեն Մկան կիրակի Մեծ պահոց Ա. օրը եւն:



Ոսիրիս

Պաշտուած կենդանիներու մէջ ամէնէն նշանաւորն էր Ասիս ցուլը: Ասիս ունէր իրեն յատուկ հոյակապ տաճարներ, եւ անոր կ'ընծայէին արտասովոր յարգանք, երբ ողջ էր, եւ մահէն ետք յուղարկուորութեան փառաւոր հանդէսներ կը կատարէին: Մեռած Ասիսները կը թաղէին իրենց յատկացուած մեհակներ որ Սերապիոն կը կոչուէր:




Քաջամաւ

Ը. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Դ Ա Ս Ա Կ Ա Ր Գ

Փարաւունն անուանապէս եգիպտոսի բացարձակ սեփականատէրն էր. սակայն իրականապէս հողին մէկ մասն իրեն կը պատկանէր: Մեծագոյն մասն ազնուականներու՝ քուրմերուն եւ զինուորականներուն ձեռքն էր: Ազնուականներն ասոր փոխա-



Մովիան

ւէն պարտաւոր էին թագաւորին հատուցանել հողին արտադրութեան մէկ մասն եւ պատերազմի տեսն որոշ թուով զինուորաւ: Քուրմերն ու ազնուականներն իրենց հողը մշակել կուտային՝ եգիպտացիք ատեն մը կը կազմէին Բրևսիակ նուիրացեալները մը, որուն ստորակարգեալ էին նաեւ թագաւորները Սակայն հետզհետէ թագաւորական իշխանութիւնը զօրանալով թագաւորները քուրմերէն անկախ եղան:

ժողովուրդն իրարմէ անջատուած զանազան դասակարգե-
րու բաժնուած էր: Առաջին կարգն էին Գուրմերն որ միայն
բարձրագոյն գիտութիւններ կը սորվէին եւ միանգամայն
բժիշկի դատաւոր ու ճարտարագետ էին: Ասոնք ամէն մե-
ռեւներու, նոյնիսկ թագաւորներու վրայ ըրած մահուան դա-
տաստանով բոլոր ժողովուրդին վրայ մեծ ազդեցութիւն ու-
նէին:

Երկրորդ՝ զինուորներն էին:

Երրորդ՝ արուեստաւորներ, արհեստաւորներ, քօշիկներ ու
վանատակակները:

Չորրորդ՝ բոց, անարուեստ բանւորներն են որ անարգ կը
համարուէին ու չէին կրնար մեհեան մտնել:

Պատմեօթիկոսի ժամանակ յառաջ եկաւ նաեւ Նոսարներու
կարգն եւ ներոսի նաւորդաց կարգը:

Եգիպտացիք ջխուր, հրու, ժուժկալ ժողովուրդ մըն էին:

*
**

Ք. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

ՄԵՆԵՆԱՅ ԳԻՐԸ

Եգիպտացիք կը հաւատային թէ մահուանէ ետք հոգին
կը տարուի Ոսիրիսի առջեւ: Եթէ չար էր, կը դատապարտուէր
աւելի կամ պակաս պիղծ կենդանիներու փորէն անցնելով՝ վերջը
ներկայանալու դարձեալ Ոսիրիսի:

Հոգին իր դարաւոր քափառումներու = Հոգեյածուրիան միջը-
ցին կրնար իր զմուտուած մարմնոյն մէջ մտնել հանգչելու. ուս-
տի՝ գերեզմանին մէջ կը դնէին հոգւոյն սննդեան, հանգստեան
ու զուարճութեան վերաբերեալ առարկայներ, ինչպէս նաեւ
Մեռեցող գիտքն ուր բացատրուած էր թէ հոգին ի՞նչ պէտք է
ըսէ Ոսիրիսի դատաստանին ներկայանալու ատեն:

*
**

Ք. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

ԹԷ Ի՞ՆՉՊԵՍ ԾԱՆՕԹԱՅԱՆՔ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՊԱՍՏՈՒԹԵԱՆ

Եգիպտացիք երեք տեսակ նշանագիր ունէին. 1. Մեհեանկան
= Hiéroglyphe՝ գլխաւորաբար յիշատակարաններու վրայ: 2.
Գրական = Hiératique՝ կրճատուած նոտք գրի տեսակ մը՝ ըւր-
մերու համար ու 3. Ժողովրդական = Démotique՝ հաւանականա-
բար Պատմեօթիկոսի ատենէն:

Մեհեանագիրերը թուով 800—900՝ երկար ատեն աւելզնուած
մը, գաղտնիք մը կը մնային: Այս գաղտնիքը պարզուեցաւ հետա-
քըքրաչարժ դիպ-
ուած ու մը փ՛. դա-
րու վերջերը, նա-
բուլէոնի առաջնոր-
դութեամբ Ֆրան-
սացւոց եգիպտոսա-
շուած ատեն, երկ-



Մեհեանգիր

րաչափ մը որ բերդի մը հիմը կը փորէր՝ Ռոգեդրա գեաքեր-
կին մօտ գտաւ երեք ոտքի չափ երկար քար մը, ասոր վրայ կար
արձանագրութիւն մը երեք տարբեր նշանագիրերով: Արձանա-
գրեալ երեք տողերուն ամէնէն վարինը յունարէն էր զոր դիւ-
րաւ թարգմանեցին, իսկ առաջին տողը խորհրդաւոր մեհեանա-
գրոշմն էր, երկրորդն ալ ժողովրդական կոչուած նշանագիրը:

Այս յունարէն տողին շնորհիւ գիտնականները լուծեցին
երկրորդ տողն ալ որ ժողովրդական կոչուած նշանագիրն էր,
սակայն չէին յաջողած պարզել առաջին տողն որ մեհեանագրով
նշանագիրն էր:

Այս արձանագրութիւնն ընդօրինակուելով՝ գիտնականնե-
րու քննութեան ենթարկուեցաւ, եւ երկար աշխատութիւններէ
ետք Մեհեանագրովի այբուբէնը գտնուեցաւ, այնպէս որ հիմայ
այս քանդակները դիւրաւ եւ որոշապէս կրնան կարդացուիլ եւ
հետզհետէ նոր լոյս սփռել Հին Եգիպտոսի պատմութեան
վրայ:

Ռոզեդեալի քարին վրայ քանդակուած երեք տողերէն
Ընդհանուր Պատմութիւն

երրորդը յունարէն ըլլալով՝ հասկցուեցաւ որ Պողոսէոս Եպիփանօսի թագադրութեան առթիւ (296 Ն. Ք.) քուրմերու կողմէ անոր ընծայուած պատիւներուն հրովարտակն էր: Պողոսէոս Եպիփանէսը կը սերէր այն յոյն իշխաններէն որ Աղեքսանդրի մահէն ետք երկիրն տիրեցին Գ. դարէն մինչեւ Ա. դար:

Փրանսացի Շալքոյիտն դիտնականին կը պարտինք այդ փառքը: Շամբուլէոն դեռ 14 տարեկան ուսանող՝ անխոնջ կը պարտալէթ հնախօսութեան եւ սորված էր Դպրի յեզուն՝ որ Եգիպտոսի հին լեզուէն ծագում առած է եւ դեռ կը խօսուի Եգիպտոսի մէջ: Երբ «Ռոգեդդեայի քարը» ընդհանուր ուշադրութիւն գրաւեց, Շամբուլէոն ալ սկսաւ անոր լուծման աշխատիլ եւ վերջապէս յաջողեցաւ ո՛չ միայն մեհենադրոջ նշանագիրներու այբուբէնը գտնել, այլ եւ Հին Եգիպտացիներէն քերականութիւնն ալ յօրինել:

Այնուհետեւ կ'սկսի եզրապարանոյիսն որ Եգիպտական յիշատակարաններու ուսումնասիրութիւնն է: Սալի, Ռուժե, Մարիէր եւ Մաքերոյ նշանաւոր եգիպտաբաններ են: Եգիպտական հնութեանց թանգարանն որ կը գտնուի Պուլաֆ, Գահրէի մօտ՝ հաստատուեցաւ Մարիէրի ձեռքով: Ասիկա Մեմփիսի մօտ գտաւ նաեւ Սերապիոնը, այսինքն՝ այն դամբարանն ուր կը պահուէին Ապիսի մոմեաները: Հիմայ նշանաւոր եգիպտաբանն է Փրանսացի Մաքերոյ: Եգիպտացիք կը գրէին Պապիրոսի եւ ուրիշ առարկաներու վրայ:

* *

Ճ Ա. Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ



ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, ԶԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, ԵԿԱՐՁՈՒԹԻՒՆ,
Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Արուեստներու քանի մը ձիւղերուն, մանաւանդ ճարտարապետութեան մէջ, Եգիպտացիք շատ յառաջգիմած էին: Եգիպտական ճարտարապետութեան առանձնայատուկ երեւոյթը կը կազմէ իր մեծութիւնն ու վսեմութիւնը: Մեծայաղթ սփիւններու ուղիներէն եւ կորովներու շարքերէն անդին կը բարձրանային

այն սքանչելի, սիրալի ու տերալի սրահներն ուր կարելի էր ամիփեկ մեր դարուն ամէնէն մեծ մտքի եկեղեցիներն անգամ:

* *

Եգիպտացի արուեստագէտները միշտ Հսկայական նախընտրելով՝ երբեք չկրցան արտադրել Գեղեցիկէ: Եգիպտացի արուեստագէտները կրօնական խիստ օրէնքներով կաշկանդուած էին եւ չէին կրնար ազատ թռիչ տալ իրենց հնարագէտ հանձարին: Հետեւապէս այնքան չկարգացան Քանդակագործութեան մէջ:

* *

Եգիպտական նկարչութիւնը կատարելութեան չհասաւ: Իրաւ է դերեզմաններու ներքնակողմի նկարներուն վրայ գոյներն իրենց թարմութիւնը կորսնցուցած չեն, շողողուն են եւ պայծառութիւն ու կենդանութիւն կը նշմարուին յաճախ, սակայն նկարները համապատասխան չունին եւ հեռանկարի պարզ օրէնքները նկատի առնուած չեն: Գիտնալու է որ Արուեստի այս ձիւղին մէջ նաեւ կրօնը կը միջամտէր՝ նկարչին ճաշակն ու երեւակայութիւնը սահմանափակելով:

* *

Եգիպտացիք տեղեակ էին Երկրաչափութեան, Թուարանութեան, Աստղագիտութեան: Բժշկութեան ու Մեխանիկայի գիտութեան: Պիւթագորաս Եգիպտացիներէն սուրբեցաւ թէ՛ Զափագիտութիւնը եւ թէ՛ «Արեւը Արեւայի շրջանէն կեդրոնն է եւ իր կիտը՝ գեղամալ մարմին» անոր բոլորտիքը կը դառնայ դրութիւնը:

Եգիպտացիք Թուաբանութեան մէջ կրնային մինչեւ միլիոններ հաշուել նշանակներու օգնութեամբ: Բժշկութեան, Անդամաւորութեան ու Երկրաչափութեան մէջ մեծ հուշակ հանած էին: Մշակեցին Բժշկութիւնը՝ մարմինը գմուսելու համար, մշակեցին Անդամաւորութիւնն ու Երկրաչափութիւնը՝ նեղոսի տարեկան ողորմութիւններէն աւրած արտերուն սահմանները ճշգրտօրէն՝ որոշելու համար: Մշակեցին Մեքանիկայի գիտութիւնը՝ մեծաշէն մեհենաներ ու բուրգեր կառուցանելու համար:

Խմբագրական Դիւթեր.— 1. Նկարագրեցե՛ք Եգիպտական ճեանաւոր շէնքերն իրենց ճարտարապետական ոճով եւ քե՛ ի՞նչի յատկացուած էին :

2. Բաղդասեղով ու հնժագօտեղով նկարագրեցե՛ք քե՛ մեր մեջ Եգիպտական կրօնքի հանգիստութիւններ կա՞ն :

2. Բ Ե Տ Ա Յ Ի Ք

Գ Ա Ս

Բ Ե Տ Ա Յ Ի Ք

Քեոացւոց բնակավայրը. — Քեոացւոց = Հասեանց բնակավայրն էր Կապադոկիա. ասոր քանի մը կողմերը տակաւին կը տեսնուի անոնց սերունդը : Քեոացիք յետոյ կ'արշաւեն Ղէպի արեւմուտք՝ Փոքր-Ասիա մինչեւ Էգեան ծով եւ Ղէպի հարաւ՝ Սուրիա :

Եղաւ ատեն մը որ իրենց ցեղապետներուն առաջնորդութեամբ Փոքր Ասիոյ երկու մեծ պողոտայներուն ուղղութեամբ արշաւեցին եւ ամբողջ թերակղզւոյն վրայ իշխեցին : Տրովադացիք, Լիւդացիք, Կիլիկեան ծովեզերքը, նոյնիսկ Կարիամիշի ու Խեղիքի = Հայկաի իշխաններն իրենց գաշնակիցներն էին . ասոնք իբրեւ աւատական ցեղապետներ նեաեւեցան իրենց տէրերուն պատերազմի մէջ : Քեոացւոց մայրաքաղաքն էր այն տեղն որ այսօր կը բարձրանայ Պողագ-Քեոյ (Յոզկատ) :

Սակայն այն ընդարձակ տէրութիւնը միաձոյլ ուժ մը չէր կազմեր : Ինչպէս Հին Եգիպտացւոց ու Ասորեստանցւոց իշխանութիւնը, նոյնպէս Քեոացւոցը լոկ զինուորական նուաճում մըն էր . այնքան կը տեւեր,

որքան բանակները կը մնային այդ նուաճուող երկիրնե-րու մէջ :

Ասիայէն Եգիպտոս արշաւող ժողովուրդներն որ Հիւֆուս անունով ծանօթ են՝ այս Քեոացիներն էին :

Քեոացւոց պատերազմները. — Հիւքսոսները գրեթէ հինգ դար կը տիրեն Եգիպտոսի : Տեղացիներն իրենց նուաստութեան վրէժը լուծելու համար՝ պատերազմի կ'սկսին անոնց դէմ . նախ Տելիպայէն դուրս կը հանեն զանոնք եւ յետոյ Պազեստինի ու Սուրիոյ մէջ կը խորտակեն :

Թորակու Ա. (1600 Ն. Ք.) կ'արշաւէ մինչեւ Եփրատ . Քեոացիք Թորակու Գ-ի դէմ թէն. կը ճակատին յաջողութեամբ, բայց վերջապէս կ'ընկճուին եւ կ'ստիպուին հարկ տալ փարաւոններուն : Քեոացիք նորէն կը զօրանան :

Ալեկոպիս Գ. հարկ կ'զգայ Նահապիւնայի = Հիւսիսային Սուրիոյ Քեոացիներուն հետ հաշտուել, որպէս զի իր դիրքը զօրացնէ սահմանազլխին վրայ, սակայն ի զուր : Քեոացիք միշտ Ղէպի հարաւ կը յառաջանային :

ԺԹ. Ինքնակալութեան հիմնադիրը՝ Հուսուս Ա. կը պարտաւորուի Քեոացւոց Սաքսեղ թագաւորին հետ յարձակողական ու պահպանողական դաշնագիր մը ստորագրելու եւ Քեոացւոց պետութիւնն Եգիպտականին հաւասար ճանչնալ : Պազեստին ու Ասորիք դարձեալ կը ճանչնան Քեոացւոց իշխանութիւնը :

Սեղի Ա. կը յառաջանայ մինչեւ Որոնդես = Սըր գետ եւ կը գրաւէ Կադիսը՝ Հարաւային Քեոացւոց մայրաքաղաքը : Այդ ատենէն սկսեալ սոսկալի պայքար մը կը մղուի երկու ժողովուրդներուն միջեւ որ 50 տարիէն աւելի կը տեւէ : Եգիպտոս կ'ընկճուի եւ Քեոացւոց ի

նպաստ հաշտութիւն կը կնքուի: Սեղի փարաւոնին բանակը թէև մինչև Նահաբինա ու Եփրատ կը յառաջանայ, բայց Սեղի կ'ստիպուի հաշտութիւն խնդրել Քետացոց Մասաղ ինքնակալէն:

Հատեանց պատերազմը Հռամսէս Բ.ի դէմ.— Հատեանց թագաւոր Մաստայ որ Մարտը Սիսայի որդին էր՝ փարաւոններու բանակին դէմ կռուած միջոցին կը մեռնի: Իր եղբայրը Խիրա Սիրա որ իրեն յաջորդեց՝ Հռամսէս Բ.ի դէմ պատերազմը կը շարունակէ արդի Սուրիոյ հիւսիսային կողմերը: Պատերազմն արիւնահեղ կ'ըլլայ. պատերազմին բախտը փոփոխական էր: Եգիպտացիները կ'ստիպուին հաշտութիւն խնդրել 1367ին (Ն. Ք.):

Այս խաղաղութեան դաշնագրին թէ՛ Եգիպտական բնագիրն և թէ՛ Հատեանը գտնուած են: Հատեան բնագիրն որ 3000 տարուան հետեւիւն մը ունի՝ գտնուեցաւ 1906ի աշնան Պոդագ-Քոյ (Յոզկատ): Եգիպտական դաշնագիրը ցարդ ծանօթ դաշնագիրներուն ամէնէն նրին է:

Այնուհետև Հատեանը ու Եգիպտացիք նիզակակից մնացին: Այս նիզակակցութիւնն աւելի ամրապնդուեցաւ, երբ Խիսա-Սիրա իր սահմային տարազով Եգիպտոս կ'այցելէ 1364ին, և հոն կ'ամուսնացնէ իր աղջիկը Հռամսէս Բ.ի հետ:

Հատեաններն Ասորեստանցիներուն դէմ.— Ասորեստանի Տզրար-Պարսուար Ա. 1110ին կ'արշաւէ Քետացոց վրայ և կը գրաւէ Գոււնուխի երկրին Ուրուսա = Ուրխա՝ արդի Ռուսկարէ = Հոմիլլայ ու Մարկա՝ արդի Մարաջ քաղաքները:

Աշուր-Նագիր քալ (880-860) հարկատու ըրաւ Կոււնուխն ու Մեյիսինէ և Եփրատէն անցաւ Կարկեմիշը խո-

նարհեցնելու համար: Քետացիք թանկագին ընծայներով կոխտեսցին Աշուր-Նագիր-քալը: Ասոր որդի ու յաջորդ Սադնասուար Գ.ի (860-825) յարձակումներու նպատակը եղաւ Քետացոց զօրութիւնն ընկճել Սուրիոյ մէջ և տիրանալ Եփրատի հուններուն և Միջերկրականի առեւտրական ճամբուն: Ասորեստանցիք յաջողեցան Քետացիները վանել Հիւսիսային Ասորիքէն: Սարգոն Կարկեմիշն առաւ 717ին: Քետացիք ստիպուած՝ իրենց բնակավայրին սահմաններուն մէջ կ'ամփոփուին:

Լիւդիացիք ու Քեսացիք.— Լիւդիոյ Կրեսուս թագաւորը ՚իմնայատակ կ'ընէ Քղերիոյ քաղաքներն որոնց տեղը կ'երեւան Պոդագ-Քոյի և Իշիլի աւերակները (Յոզկատ սանձագ): Ասով վրէժ կը լուծէ այն նուաճման որով նախնիք դարեր առաջ ենթարկուած էին Քետացոց:

Քետացիք Ուրարդու կը կստատաւիւն.— Այնուհետև կ'իմմերեանց յարձակումներէն ստիպուած՝ Քետացիք Կիլիկիոյ կողմէն Եփրատէն կ'անցնին և կը յարձակին Ուրարդու (640), Խալդեանները կը վանեն դէպի հիւսիս. յետոյ իրենց անուսով կոչուած Խաղթիլը և Ուրարդուցիներուն հետ կը ձուլուին: Խալդեանց յիշատակները կը մոռցուին Ուրարդուի մէջ և Հատեանը կը տիրապետէ: Քետացիք ամէն բան իւրացնելու ուժն ունէին և շրջակայ Արիական իշխաններու ազդեցութեան տակ կ'ընդունին նոր քաղաքակրթութիւն մը:

Ա. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

ՀԱՏԵԱՆ ԲԱՂԱԲԱԿԹՈՒԹԻՒՆ

Քետացիք մինչև 1870 թուականն անծանօթ ժողովուրդ մըն էին, բայց այսօր իրենց յատուկ տեղն ունին պատմութեան մէջ կատարուած հետազոտութիւններու շնորհիւ Քետացիք կը գըտնուէին քաղաքակրթութեան այնպիսի պայմաններու մէջ որով շատ վար չէին եգիպտոսի նախնի այնքան փառաւորուած ու գովաբանուած քաղաքակրթութենէն: Միակ տարբերութիւնը սա՛ է թէ Հատեան քաղաքակրթութեան հետքը ջնջուած է երկրին դիրքին, մասնաւորապէս իբր անցք բազմաթիւ ժողովուրդներու ճամբայ եղած ըլլալուն համար, մինչ միւսները կը մնան:

Հատեան նշանագիր.— Հատեանց նշանագիրը պատկերագիր էր եգիպտական մեհենագիրն նման: Հատեանք տկոսածել կը գօրէին եւ ունէին մօտաւորապէս 200 պատկերներ:

Ոմանք կը կարծեն թէ իրենք Քետացիք գլխաւ ըլլան եգիպտական մեհենագիրներու նախածեւը:

Պողազ Քէօյի ու Իւլիքի աւերակներէն կը հետեւի որ շատ զարգացած քաղաքակրթութիւն մը ունէին:

Մեսաղագործութեան եւ ուրիշ արուեստներու մէջ նշանաւոր էին. Արեւմտեան Ասիոյ վաճառականութիւնն որու կեդրոնն էր Կարկեմիշ՝ իրենց ձեռքն էր:

* * *

Բ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

ՀԱՏԵԱՆՅ ՏԱՐԱԸԸ

Իրենց քանդակեալ պատկերներէն կը տեսնուի որ այս ցեղին յատկանիշներն էին կարծ ու հաստ սրունք, արտակարգօրէն դուրս ցցուած կզակներ, ներս քաշուած ձակատ, կարկառուն ալտակը, դուրս ցցուած շրթունքներ, որ գանկաբաններու կարծի՝

քով Մդուրիւս—Մոնկոյիւսի ցեղին յատկանշերն են: Մանաւանդ Մդուրիւսի ցեղին պէս Քետացաց մորթը դեղին, աչքերն ու մազերը սեւ էին: Իրենց մազերը ցցունք եւ պոչ՝ ունէին որ տոհմային որոշիչ հանգամանքն էր վեր դարձած ծայրերով կօշիկներու պէս: Քետական տարազին ամէնէն բարացուցականն այս ծայրերը վեր ուղրուած կօշիկն էր: Սուրիոյ մէջ Սեմական ժողովուրդներու հետ կը իսառնուէին եւ ս'ըջափ դէպի հարաւ. յառաջանային, այնչափ աւելի բնիկ ազգաբնակութեանց հետ կը ձուլուէին: Դաւիթ մարգարէին կինը՝ Սողոմոն իմաստունի մայրը Բերսաբէ Քետացի էր, որով Քրիստոսի նախնիքներէն մէկը: Հաւաւային Հրէասփանի Քետացիք Սեմական անուններ կը կրէին, հաւանական է նաեւ որ Սեմական լեզու կը խօսէին:

Քետացիք հետզհետէ կը խօսէին նաեւ Յունական եւն. լեզուներ: Քետացաց զգեստը ցուրտ եւ լեռնային երկիրներու բընակիչներուն հագուեստն էր եւ ս'ջ թէ հարաւային տաք կլիմային Ասորաց երկայն հանդերձներուն տեղ Քետացիք հազիւ մինչեւ իրենց կարծ ծուռկերը հասնող պատմուճանն մը ունէին: Սուրիոյ նուաճումէն ետք, հետզհետէ միայն տեղական պահանջումներուն համաձայն հագուեստի տարազը կը փոխէին: Իսկ Փ. Ասիոյ մէջ Քետացիք կը պահեն այդ կարծ պատմուճանը զոր Յունաստանի Դորացիլ ալ կը գործածէին, նաեւ բթամատը միայն զատուած ձեռնոցն որ պարկի ձեւ ունի եւ որուն մէջ կ'անցնէին չորս մատները: Այսպիսի ձեռնոցներ դեռ կը գործածուէին Կապադովկիոյ գիւղացիներուն մէջ:

Քետացաց կրօնք.—Քետական արձանագրութեանց մէջ յաճախ կը տեսնուի Սյառիս կոչուած աստուած մը որուն պաշտամունքը յար եւ նման էր եգիպտական Ամուն-Հուայի:

* * *

Գ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Ք Ե Տ Ա Բ Ա Ն Ն Ե Ր

Մինչև հիմա ինչ ըլլա որ քաղուած է Հատեանց մոտցուած ազգին վրայ՝ կը պարտինք Ս. Իրոց, եգիպտական եւ Ասորեստանեայց արձանագրութիւններու, այսինքն՝ լոկ արտաքին աղօ

բիւրններու, բուն ազգին յիշատակարաններն անլոյժ կը մնան, թէեւ ենսէն գերման սեմագէտը փորձեց, բայց աւելի յիշատակարաններու ձեւերն ու դանազան պատկերներն են որ կը խօսին:

Այս մտացուած ժողովրդեան պատմութեան վերակազմութիւնը ժ.թ. դարուն գործն եղաւ: Զուիցեբացի Պրֆհայդ (1784—1817) երեւելի ճամբորդ մը առաջին անգամ կը գտնէ Համայն հրապարակին մէջ սոսն մը պատին վրայ այլանդակ մեհենագրերով ծածկուած խոշոր սեւ քար մը: Ատկէ 60 տարի ետք Մր. ձոնսըն՝ Ամերիկեան հիւպատոս մը ու Մր. ձիւրպ՝ միսինսար մը կը յաջողին վերագտնել այն քարն եւ իմանալ ուրիշ երկու քարերու գոյութիւնը: Նոյն անհետեւ մեհենագիրներով ծածկուած այդ քարերը տեղացուց կարծիքով զարմանալի բուժիչ յատկութիւն մը ունէին: Յօդացաւով տառապողներուն բժշկութիւն կը պարգեւէին: 1872ին Տոթթ. Ռիլիլմ Բայդ Յամկայսթեան բարեյոթարութեամբ կը յաջողի այդ երեք քարերուն դաժէ ճըշգրիտ կրկին օրինակներ առնել եւ Բրիտանական քակցարանը դրկին իսկ երեք բուն քարերը Կ. Պոլսոյ Կայս. Թանգարանը կը դրկուին: Այս երեք քարերն եղան առաջին խարխիւր Հատեանց պատմութեան վերականգնեալ շէնքին:

Նշանաւոր քետաբաններն են անգլիացի բրոֆ. Սկյու ու գերմանացի բրոֆ. Ենսկէ:

*
**

Փ. Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

Ա Մ Ա Ջ Ո Ն Ն Ե Ր Ը


Եգիպտական յիշատակարաններն ատոնց երկիրը կը կոչեն Խասա, Խալդեաններն ալ՝ Խադե:

Այն ազգեցութիւնը զոր Քետացիք կատարած են Փ. Ասիոյ վրայ՝ յոյներն աւանդած են Անագոններու հռչակաւոր աւանդովէպին մէջ: Ասոր համեմատ Ամազոնները կազմած էին պատերազմական ազգ մը որուն բնավայրը կը գտնուէր Կապադովկիոյ Թերմոզոն գետին եզերքը՝ Պոլսոյ Քէօյի աւերակներուն մօտիկ:

Ատկէ կը յարձակին Փ. Ասիոյ վրայ եւ հոն կը հիմնեն պետութիւն մը որ կը տարածուէր մինչեւ Էգեան ծով: Այս ծովուն եզերքի հռչակաւոր քաղաքները՝ Միլիւնա, Զմիւռնիա, Եփեսոս Հատեաններէն հիմնուած են:

Ամազոնները քրմուհի էին Մա դիցուհուն որուն պատմունքը Կարկիմիշէն բերուած էր Կապադովկիոյ Կուլմանա քաղաքը՝ Տորոսի հիւսիսային զառիթափին կողմ՝ արդե Սուսերէ:

Ամազոնները վահանով ու աղեղով կուռ զինուած՝ կը պահէին, կը հագնէին պատմուածան մը, մէջքերնին կամար մը ուրկէ կը կախէին երկայրի երկու սուր իրարու վրայ շեղ դրուած:



3. ԽԱԼԴԵԱՆՔ


Գ Ա Ս

ԽԱԼԴԵԱՆՑ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Խալդեանցի ու իրենց երկիրը.— Խալդեանցի=Ուրարտուցի վրաց և ուրիշ Կովկասեան ցեղերու համազգի էին: Անյրկովկասիոյ Ուտէացուց լեզուն Խալդեանց հետ ազգակցութիւն ունի: Ասոնց երկիրը կը կոչուէր հիւսիս. կը լը Ուրարտու=Արարտս և հար. արեւելք՝ Բիւնա=Վան: Մայրաքաղաքն էր Տուպ:

Հայաստանի նախաբնիկները.— Այն երկրին մէջ որ յետոյ Հայաստան կոչուեցաւ՝ նախապէս կը բնակէին Ուրարտուցի, Քեսացի, Մոսիսկեանց, Թոքեյ, Կոնսագենցի և ուրիշ ցեղեր: Այս ցեղերը Քրիստոսէ առաջ է. դարէն սկսեալ՝ հետզհետէ ձուլուեցան իրենց երկիրն արշաւող ու հաստատուող արիական ժողովուրդներու հետ և կազմեցին պատմական Հայ ազգը:

Խալդեանց նախկին քաղաւորներն ու իրենց քաղա-



Ուրարտու եւ իր յարակից երկրներ

քաղաքները։ — Առաջին անգամ Ուրարտուցիք կը յիշուին Ասորեստանի Սարդանանուս Գ.ի օրով։ Ասիկայ 841ին կը հարուածէ Ուրարտուի թագաւոր Արաւե, և 832ին ասոր յաջորդներէն Սարդուրիսը։ Սաղմանասար Գ. 782ին ու 780ին կ'արշաւէ Ուրարտուի վրայ որ չի նուաճուիր, այլ մանաւանդ կ'օգտուի։ Ասորեստանի հետ հաղորդակցելով՝ Ուրարտու կը ծաղկի կրթութեամբ ու արուեստներով, և փոխ կ'առնէ Ասորեստանի բեւեռագիրը։ Յայդեանց Սարգուրիս Ա. Նինուէէն բերել կուտայ դպիրներ որ Ասորեստանի լեզուով կը յօրինեն պաշտօնական արձանագրութիւններ։ Ասորեստանի թագաւորներուն տիրադատները կը կրեն Ուրարտուի թագաւորները։ Նինուէի լեզուն ատեն մը կ'ըլլայ Ուրարտուի գիտուններուն լեզուն, յետոյ Իշպուին Ա.ի օրով Ասորեստանցոց բեւեռագիրն ինչ ինչ փոփոխութիւն կրելով՝ կը գործածուի բնիկ լեզուով գրելու։

Փ.կար-Ահայ-Ասար Բ.ի պատերազմը. — Ասորեստանի և Ուրարտուի յարաբերութիւնները կը խզուին և թ.կլաթ-Աբալ—Ասար Բ. կ'արշաւէ Ուրարտու որուն թագաւորը չարաչար կը յաղթուի Նախ 742ին, և յետոյ 734ին, այնպէս որ կ'ստիպուի հաշտութիւն կնքել։

Իշպուինի յաջորդը Միևուա Ա. իսաղազութեամբ կ'ապրի և կը փորէ մեծ ջրանցք մը որ յետագայ դարերու մէջ Շանիրսուկ գործ կարծուեցաւ։

Ուրսա ու Սարգոն. — Մինուասի երէց որդին Ուրսա = Բուսա անդ թշնամի մը կը դառնայ Ասորեստանի։ Ուրսա կը խորի գինք ու դրացիները փրկել Ասորեստանի ազդեցութենէն և ամէն միջոց կը գործածէ այս նպատակին համելու։ Նախ կը ջանայ Մանայի թագաւոր Իրանու զատել Ասորեստանի դաշնակցութենէն, և երբ Իրանու չի հաճիր, Ուրսա Զիզարտուի թագաւոր

Միսայի հետ միաբանելով՝ կը յարձակի Մաննայի երկիրը ։ Ասորեստանի Սարգոն ինքնակայն օգնութեան կը փութայ իր դաշնակցին , յարձակմամբ կ'առնէ Մաննայի երկու երկիրները և բնակիչները գերի կը տանի (719) ։ Մեծամեծ խուզութիւններ կը ծագին Սարգոնի տէրութեան մէջ և զանրկայ կ'արգելին յառաջ տանել պատերազմը Ուրսայի ու թշնամիներուն դէմ ։

Բայց երկու տարի ետք կ'աստատակէ Բիանա . ջիշ մնաց որ Ուրսա գերի պիտի խնար , եթէ Սարգոն չըստիպուէր (716) հարաւ դառնալ ։ Յաջորդ տարին (715) Սարգոն նորէն դէպի հիւսիս կ'արշաւէ և 714ին Մաւրաստանէն կը մտնէ Ուրարդու ։ Ուրսա չարաչար կը յաղթուի և լքուած իր դաշնակիցներէն՝ խոյս կուտայ լեռներն ուր հինգ ամիս ասդանդական կը չրջի ։ Այս միջոցին Սարգոն կ'աւերէ Ուրարդուն ։ Ուրսա այս ձախորդութեան լուռն առնելով՝ յուսահատութենէն անձնասպան կ'ըլլայ ։

Ուրսայի յաջորդները . — Սակայն Ուրսայի մահով Ուրարդու չի նուաճուիր ։ Ուրսայի յաջորդն ու եղբայրն Արգիշիլիս թէև կը վանէ Ասորեստանցիները , սակայն Ուրարդու հետգծեալ կը տկարանայ և վերջապէս կը նուաճուի Հատեաններէն (640)՝ երեք դար Ասորեստանի անկ ինքնակալութիւնը զբաղեցնելէն ետք ։ Վերջին թագաւորը կ'ըլլայ Սարղուրիս Գ. ։



ԱՍՈՐԵՍԱՆԻ ԻՆՓԱԿԱԿԱԼՆԵՐ

Սարմանաւար	(859—825)	Գ.
Ռա'նսի-Ռաման	(824—812)	Գ.
Ռաման-Նիբրա	(811—783)	Գ.
Սարմանաւար	(782—773)	Գ.
Աուր-Պանիլ	(772—755)	Բ.
Աուր-Նիբրա	(754—746)	Գ.
Թզլաս-Պալսար	(745—728)	Բ.
Սաղմանաւար	(727—723)	Ե.
Սարգու	(722—705)	Բ.
Սինեբիլայ	(704—681)	
Ասու-Հասան	(681—669)	
Աուր-Քանիպալ	(669—626)	

ԲԻԱՆԱՅԻ ԻՆՓԱԿԱԿԱԼՆԵՐ

Աւամէ	(857—845)	Լուսիսիսի, Սարգուրիս
Խալուիթիս Ա.	(838)	
Միմուս	(784)	
Արգիշիս Ա.		
Սարգուրիս Բ.	(735)	
Րուսու Ա.	(722—714)	
Էրգիշիս Բ.		
Էրիսիմսու		
Րուսու Բ. ու Սարգուրիս Գ.	(406)	

Ա. Ը Ն Ք Ե Ր Յ ՈՒ Մ

ՈՒՐԱՍԱՅԻ ՈՒ ՍԱՐԳՈՆԻ ԴԱՐԸ

Ասորեստան մեծցած էր կորստեամբ այնպիսի ցեղերու եւ թագաւորութեանց որ հզօր տէրութեան մը յարձակմանց երկար ատեն դիմադրութեանց բաւական չէին: Այն ցեղերու թագաւորները վերջապէս ինկան, բայց Ասորեստանի չափ պնդակազմ



Ուրարտական ասնարի մը կահկարասին զոր Ասորեստանեան զինուորներ գողցել կը սանին կամ կը կոսրսեն

տէրութիւններ կային որ կրնային ո՛չ միայն դիմադրուել, այլեւ հարուածել անոնց հզօր տէրութիւնը: Երբ Սարգոն կը թագաւորէ, Ասորեստան սահմանակից ունէր երեք այսպիսի տէրութիւն, այսինքն՝ հար. արեւմուտքէն Եգիպտոս, հիւսիսէն՝ Ուրարտու եւ հար. արեւելքէն Ելամ—Շորասան որ իբրեւ թուրք էին Ասորեստանի դէմ եւ միջնորդ անոր ու մնացեալ աշխարհներու միջեւ:

Ասորեստանի բնակիչներն այնինչ կը կործէին ապահով ըլլալ յանկարծ կը գտնէին դիրենք հալածուած ու վտանգուած: Ստէպ յաղթութիւններով կը մաշեցնեն թշնամին, բայց իրենք ալ կը մաշին միանգամայն:

*
* *

Բ. Ը Ն Ք Ե Ր Յ ՈՒ Մ

ԽԱԼԴԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ

Խալդեաններն առաջին անգամ կը յիշուին Ասորեստանի Քալաթ-Պալասար Ա.ի Բաւիոնի արձանագրութեան մէջ (1123): Նորակազմ տէրութիւն մը չէր կրնար դիմադրել, եթէ գոնէ 1—2 դար առաջ արմատացած չլըլար:

Խալդեանները կանոնաւոր ժամանակագրութիւն մը աւանդած չեն: Ռուս հնարիտ մը՝ Նիկոլայի Խալդեան այդ ժամանակագրութեանց պակասը լցնելով Ասորեստանեան բեւեռագիր արձանագրութիւնէն՝ յաջողեցաւ կազմել Բիանայի—Ուրարդուեան թագաւորներու պայտղտտական ցանկը:

Յարդ գտնուած արձանագրութեանց միջոցաւ Խալդեանց ծանօթ ինքնակալներու ցանկին գլուխը կը գտնուի Արամե (857—845) որ Նայիրիի ժողովուրդներու գլուխն անցած՝ 14 տարի կը պատերազմի Ասորեստանի Սողմանասար Բ.ի (860—825) դէմ:

*
* *

Գ. Ը Ն Ք Ե Ր Յ ՈՒ Մ

ԽԱԼԴԵԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Արամէի կը յաջորդեն հետզհետէ Լուշայրիս Ա. ու Իշպուհէլա, որոնց մասին արձանագրութիւնները նշանակալից իրողութիւն մը չեն աւանդեր: Արամէէ ետք իբր հզօր թագաւոր մը

կը ներկայանայ Միկնուսա՝ Իշպուհնիսի որդին։ Բիանայի թագաւորներուն մէջ առաջինն է Միկնուսա որ դէպ ի հիւսիս կ'արշաւէ եւ կը մտնէ Էջիանուի երկիրն եւ հոն կը թողու իր աշխարհակալութեանց կոթողները։ Էտիանուի մայրաքաղաքն էր Լուխախիկէ զոր իր անունով կոչեց Միկնուսիկի։ Միկնուսա դէպ ի արեւմուտք ալ կ'արշաւէ, կը յաղթէ Հատեաններուն եւ իր յաղթութիւնը կը դրոշմէ Բալուի ժայռին վրայ։ Միկնուսա հիւսիսային կողմերն աշխարհակալած միջոցին իր գահակիցն կամ տեղապահն էր Տարիտա մայրն որ մեծաշէն թագուհի մը եղաւ։

Միկնուսի որդին էր Արգիշիս Ա. որուն օրով Ուրարու—Բիանա իր վառքի գագաթնակէտը կը հասնի Գտնուած արձանագրութեանց մեծ մասը—գրեթէ 50ի չափ—այս մեծաշէն թագաւորին են։ Կը նորոգէ Արաւսիկի քաղաքն եւ իր անունով Արգիշիկիւի կը կոչէ։

Արգիշիսի Ա.ի որդին էր Սարգուրիս Բ., որ Թագաւոր—Պալասար Գ.ի դէմ Ասորիքի Արփաթ—Թէլէրֆատ քաղքին օգնութեան փութալով կը յաղթուի 743ին։ Ասորեստանի վեհապետը Բիանա կ'արշաւէ 736ին ու երկիրը կ'աւերակէ։

* * *

Գ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

ԽԱԼԴԵԱՆՑ ՏԵՐՈՒԹԻԻՆԸ Կ'ԻՅՆԱՅ

Բ. դարուն երկրորդ կեսուն Ասորեստանի ինքնակալ Թագաւոր—Պալասար Գ. (755—727) Ուրարտուի—Բիանայի թագաւոր Սարգուրիս Բ.ին (745—730) յաղթելով՝ Ուրարտացիներուն իշխանութեան հարուած մը տուած էր. երբ Բուսաս Ա. (730—714) իր հօրը կորսնցուցած երկիրներն ու քաղաքական սղղեցուցիւնը նորէն ձեռք ձգել կ'աշխատէր, Սարգոն (722—705) ասորեստանեան բանակով կը յարձակի Բիանա եւ կը յաղթէ Թէ՛ Բուսաս Ա.ի եւ Թէ՛ իր ճորտերուն Մաննայի Ուրարտի, Մուսասերի Ուրարտա—որուն կնիքը կը գտնուի Լահէի թանգարանը, —Մեկտիսի Բագուրաւ

ու Ջեզարտուի Միւրաթիկ իշխաններուն Բուսաս Ա. Հակասորեստանեայ զօրաւոր զինակցութիւն մը կազմած էր։ Երկեցս մեծ պարտութիւն կրելէ ետք, երբ իր Խալտիս աստուածին արձանը թշնամոյն ձեռքը կ'իյնայ, Բուսաս Ա. կը մեռնի։

Բուսաս Ա.ի եղբայրը՝ Արգիշիս Բ. օգուտ քաղելով Ասորեստանեայ Գողգէսատան արշաւելու պարագայէն՝ կը թոթվէ Լուծն եւ երկիրը կը խաղաղեցնէ։ Արգիշիսի իշխանութեան Ատարին կը մեռնի Սարգոն եւ կը յաջորդէ Սինքերիպ—Սենեֆորիպ (689)։

Արգիշիսի յաջորդն է Բուսաս Բ. ասոր օրով Բիանա ու Ասորեստան իրարու հետ բարեկամ էին Բուսաս Բ. 655ին ընծայելը կը շրկէ Նինուէ։ Ասոր օրով մանաւանդ Ուրարտու շունչ կ'առնէ եւ կործանուած տեղերը կը վերաշինուին Բուսաս Բ.ի յաջորդ Արգիշիս Գ.ի օրով ալ Բիանա ու Ասորեստան իրարու հետ շատ էին Մինչեւ 640 թուականն Ուրարտի թագաւորներու դեպքանները Նինուէ կ'երթային։

Վերջին անգամ Երեմիայի մարդարէութեան մէջ յիշուելով՝ անյայտ մնացին տարեգրութեանց մէջէն. քիչ մը ետքը Փոլիգիոյ սահմաններէն Հատեաններն եկան տիրեցին Խաչեաններուն որ հաւանակոնաբար Քրիստոսէ 15 դար առաջ եկած հաստատուած էին Բիանա։

Արձանագրութեան հեղինակը՝ Բիանայի Բուսաս կամ Բուծա Բ.ն է որ կ'իշխէր իբր 685—675, ժամանակակից Ասորեստանի Սենեֆորիպ թագաւորին եւ իր որդի Ասուրտանի։

* * *

Ե. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

ԽԱԼՏԵԱՆՑ ՔԱԼԱՔԱԿՐԹՈՒԹԻԻՆ

Խալտեաններն Ասորեստանցիներէն ո՛չ միայն իրենց բեւեւագիրն առին, այլ եւ գաղափարեցին անոնց ձարտարապետական ոճն ալ։ Ասորեստանի մեհաններուն շատ կը նմանի Խալ-

ցեաններունը, ինչպէս կը տեսնուի Խորշապոտ գտնուած խորաքանդակէ մը. յարեւ նման անոնց որ վերջերս Թորքագ-Գարիէ (Վան) պեռումներէն երեւան եկան:

Խաչեաններուն գլխաւոր աստուածն էր Խաչիս, որուն մեհեանը կանգնուած էր Տոսպի մէջ՝ Աստուածպետական տէրութեան կեդրոնը: Ասոր աջակից էին Թեգրաս Թը-աստուած ու Արդեսիս Արեւ-աստուած, ասոնք կը կազմէին Խաչեան Երեքութիւնը = trimurti: Այդ Երեքութեան 6 դառն կը զոհէին սովորաբար Խաչիս կը պաշտուէր զանազան ստորոգելիքներով իբր «մեծագօր, բարերար Խաչեանց եւ բոլոր աստուածներու հայր»: Այս Երեքութեանէ ետք կողքար 10 ուրիշ աստուածութեանց շարք մը:


4. ՍԵՄԱԿԱՆՔ

Ա. ԲԱԲԵԼԱՑԻՔ ՈՒ ԱՍՈՐԵՍԱՆՑԻՔ

Պ Ա Ս

Վաղեմի ժողովուրդներ. — Քաղղէաստանի ու Ասորեստանի վաղեմի ժողովուրդներն եղան Սուսիւններն ու Ագասներն որ հաւանականաբար Տուրանեան = Մղղաքիական ցեղէ էին: Վերջերը Սեմական ժողովուրդներ կ'արշաւեն այս երկիրներն և ձուլուելով ընդկնեւորն հետ՝ յառաջ կ'ուզան Քաղղէացիք = Բաբելացիք ու Ասորեսացիք: Այս Սեմական ժողովուրդները պատմութեան մէջ ծանօթ են Քուսեան անունով որ ըստ ոմանց Բակտրիայէն և ըստ այլոց հարաւէն՝ Արաբիայէն արշաւած են: Ասորեսացիք. — Քաղղէաստանէն յարձակող իշ-

խանները շատ կանուխէն կը զբաւեն, կը տիրեն ու կը չէնցնեն Ասորեստանը, որ երկար ատեն գորեղ ինքնակաշտրիւն վը կ'ըլլայ:



Ասորեսան եւ Քաղղէասան

Ասորեստանի թագաւորներն ո՛չ միայն կը տիրեն Տիգրիսի ու Եփրատի գետահովտին, այլ և կը նուաճեն Ասիոյ բազմաթիւ երկիրները — Մուրասու, Ճարիք, Պաղէսիւն և նոյն իսկ յաջողութեամբ մինչեւ Եգիպտոս կը յառաջանան:

Ս. Գիրքն Ասորեստանի վրայ Քաղղէացոց տիրապետութիւնը կ'աւանդէ աւանդալէպով: Բեղ երեւելի որսորդ մը կը տիրէ Ասորեստանի և Բաբելոնը մայրաքաղաք կ'ընէ իր տէրութեան: Սենաար = Միջագետք զաշտին մէջ ալ շատ քաղաքներ ունէր: Ասուր = Աշուր ալ այս երկրէն կը գալթէ. կ'երթայ և կը հիմնէ Նիւուէ քաղաքը:

Քաղղէացիք.— Երկար ատեն Քաղղէացիք կը հպատակին Ասորեստանի ինքնակալներու, բայց երբեմն կ'ընդվզին և երբեմն կը յաղթուին: Երբ Ասորեստան կ'իջնայ, Քաղղէաստան ինքնօրէն կ'ըլլայ և հզօր ինքնակալութիւն մը կը կազմէ իր կարգին: Այս ինքնակալութիւնն իր փառքի գագաթնակէտը կը հասնի Նաբուգոդոնոսորի օրով:

Բ. ԱՍՈՐԵՍԱՆԻ ՎԵՉԱՊԵՏՆԵՐ

Պ Ա Ս

Ասորեստանի ելն ինքնակալները. — Բեւեռագիրներէ քաղուած Ասորեստանի հին ինքնակալներուն մէջ նշանաւոր են.


Տզրաք—Պաշտատ Ա. (1130 Ն. Ք.) որ արեւմտեան ու հիւսիսային ժողովուրդներու դէմ պատերազմներ կը մղէ:

Աշուր-Նազիր-պաշ (884 Ն. Ք.) յաղթական պատերազմ կը մղէ հիւսիսային իշխանութեանց դէմ և նորագութիւններ ու մեծագործութիւններ կ'ընէ:

Սադնանատար Բ. (860 Ն. Ք.) կ'արշաւէ Ասորիք ու Պաղեստին: Այս ինքնակալէն ետք Ասորեստանի այլ և այլ երկիրներու մէջ ապստամբութիւններ կը ծագին և այս երկարատեւ պատերազմներուն պատճառաւ Բաբելոնի իշխանը՝ Նաբոնատար կը բաժնուի Ասորեստանցեաց իշխանութենէն (746 Ն. Ք.):

Ասորեստանի Բ. ինքնակալութիւնը (744—606).— Հազիւ երկու տարի անցաւ և անա Ասորեստանցիք

զարծեալ կը զօրանան Տզրաք—Պաշտատ Բ ի գահակալութեամբ (744): Այս երկրորդ ինքնակալութիւնն Ասորեստանի ամէնէն փառաւոր շրջանն է որ կը պարունակէր Բաբելոնը:



Ասորեստանցեաց կառքեր

ուն, Ասորեստան, Մարաստան, Ասորիք, Փիւնիկի, Պաղեստին և Արաքիոյ ու Եգիպտոսի մեծ մասերը:

Սադնանատար Գ. Տզրաք—Պաշտատ Բ. ի որդին՝ մեռաւ Սամարիայի առջեւ Պաղեստին արշաւած ատեն:

Սարգոն ու իր աշխարհակալութիւնները.— Սադնանատարի զօրագետը՝ Սարգոն որ Սամարիոյ մէջ իշխան ընտրուած էր՝ կը գրաւէ այս քաղաքն և անկէ անթիւ գերիներ կը տանի: Կը յարձակի Եգիպտոսի վրայ, կ'արշաւէ դէպի հիւսիս՝ Ուրարտու ուր երկար դժնդակ պատերազմներէ ետք կը նուաճէ այդ երկրին Ուրաս թագաւորը:

Սարգոն կը հիմնէ «Տուր-Սարուգիլ» = Սարգոնի Բերդ քաղաքն և հոն կը փոխադրէ իր աթոռը (707 Ն. Ք.): Սեներեբիթ.— Սարգոնի կը յաջորդէ իր որդին Սե-

ՅԵՖԵՐԻՄ (707—684 Ն. Ք.) որ կը յարձակի Ասորիքի, Հրէաստանի. Եգիպտոսի ու Շօշաստանի = Ելամի վրայ և Նինուէի մէջ կը կանգնէ հոյակապ շէնքեր: Իր որդիները՝ Ադրակեղեֆ ու Սանաւար Պարարու կը փախչին:

Սենեքերիմի յաջորդները. — Սենեքերիմի կը յա-



Դիմուէի քազաւորի մը արձանը

Ղին թագաւոր Սարակուին ու կը կործանէ Ասորեստանի տէրութիւնը (606 Ն. Ք.):

Նորդէ իր կրտսեր որդին՝ Ասորդան (680) որ երկրէն կը վանէ թըշնամիներն և մեծագործութիւններ կ'ընէ:

Ասորդանի որդին ու յաջորդը՝ Աշուր-Պանի-Բալ ծանօթ Սարդանաբաղը (668) կը պաշտպանէ Արուեստներն ու Գրականութիւնը: Իր պալատին մասէնարարակն Աշուրական ամէնէն մեծ ու կարեւոր յիշատակարարակն է:

Ասորեստանի կ'իյնայ. — Ասորեստան իր նուաճած երկիրներն ընդհանրապէս ինքնիշխան կը թողուր. Մարաց Կիւսիսար իշխանը միանալով Բաբելոնի Բեղիսիս Նաբոպարսար իշխանին հետ՝ կը յաղթէ Ասորեստանի վերջին Ասորեստանի վերջ-

Գ. ԲԱԲԵԼԱԿԱՆ = ՔԱՂԴԷԱԿԱՆ ՆՈՐ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Գ Ա Ս

Նաբուգոլոզոնոսը. — Բարեղակալն = Քաղդէական ինքնակալութեան առաջին վեհապետ Նաբոպարսարին կը յաջորդէ իր որդին Նաբուգոլոզոնոսը = Նեբուգանդնետար: Իր յաղթական սուրն առաջին օրէն Եգիպտոսի վրայ փորձելով՝ Նաբուգոլոզոնոսը 43 տարի շարունակ պատերազմներ կը մղէ. ասոնց մէջ հռչակաւոր են Տիրուիու Երուսաղիմի պաշարումները (480): Իր յաղթութիւններէն զատ նշանաւոր է նաև Բարեղակալի փախստը վերադիտելով:



Նոր տէրութիւնը հզօր եղաւ Նինուէի անկումէն ետք: Հայրը չմեռած՝ Նաբուգոլոզոնոսը արդէն կը պատերազմէր Եփրատի եզերքը Կարկեմիշ — արդէ ձերապրուս — ուր յաղթած էր Նեխայովին: 604ին կը յաջորդէ հօրը: Իր յաղթութեանց ատեն շատ իսրայելացիներ ալ գերի զրկած էր Բաբելոն. ասոնց մէջն էին Դանիէլը, Անանիաս, Միսայիլ ու Ազարիա որ Քաղդէական լիզուն և գիտութիւնը սորվեցան:

Թագաւոր մը կը փորէ գերիներու աչքը

Պետուրեան անկումը.— Բայց այս յառայեղ իշխանութիւնը սկսաւ գահավիժել: Նարուգոզմոսորի յաջորդող չորս իշխաններուն վերջինը կ'ըլլայ Նարունայիսի=Նարունայսա որուն գահակից էր իր Բաղսաւար որդին:

Պարսից կիւրոս թագաւորը կ'առնէ Բարեղուն 520ին (Ն. Բ.) Եփրատի խոտոր ընկածք մը սալով:

Այնուհետեւ Ասորեստան ու Քաղզէաստան յաջորդաբար կ'իյնան օտար տիրապետութեան—Պարսից, Յունաց, Պարթեւաց, Արաբացուց, և վերջապէս Օմանցուց տակ: Բարեղուն Նինուէի պէս աւերակ չգարձաւ, այլ երկար ատեն Արեւելքի մեծ քաղաքը մնաց: Իր անկումը կը սկսի Հոռոմէական շրջանին. այնուհետեւ անյայտացաւ: Արդի Հիլի քաղաքին մօտ կը գտնուին Բարեղունի աւերակները:

Թելադրութիւններ.— Որով եւ Քաղդէասական ու Ասորեստանի վաղեմի ժողովուրդները.— Բարեղացիք որով խառնուրդն են.— Ասորեստանցիք ո՛ր մասը գրաւեցին.— Ինչէ՛ր րիւն.— Ս. գիրքն ի՛նչ կ'աւանդէ.— Քաղդէասական թախսն ի՛նչ եղաւ.— Որով եւ Ասորեստանի հին ինկաւակները.— Ի՛նչ րիւն.— Ասորեստանի Բ. ինկաւակներէն մէկ որով եղան նշանաւոր, ինչէ՛ր րիւն.— Ո՞վ եղաւ վերջին վեհապետը.— Որով անո՞ր ինկաւ Ասորեստան.— Այնուհետեւ Ասորեստան ու Քաղդէասական որով հպասակեցան:

Ա. Ը Ն Փ Ե Ր Յ Ո Ւ Մ

Բ Ե Լ = Ն Ե Բ Բ Ո Վ Թ

Ս. Գիրքը արտաքին պատմութիւններն ու արձանագրութիւնները մեծ հնութիւն մը կ'ընծայեն Քաղզէաստանի: Քուշի սե-

ւընդէն Բեյ—Ներրոյի Քաղդէական իշխանութեան հիմնադիրը կը համարուի ըստ Ս. գրքի Այս քաղ սրսորդը կը տարածէ իր իշխանութիւնը շրջակայ ցեղերուն վրայ եւ կը հիմնէ, ինչպէս Ս. Գիրքը կ'աւանդէ, Բարեղո՞ւ, Արի, Արս ու Քաղանէ քաղաքները իր ժողովուրդին կողմէ Բեյ կը պաշտուի իբրեւ Ռսսորդութեան աստուած: Ասիկա պարզապէս աւանդութիւն մըն է ուր խտացած են Քաղզէացիներուն=Քուշեաններուն յետոյ իրենց անունով կոչուած երկրին մէջ հաստատուելուն պարագայները:

*
*
*

Բ. Ը Ն Փ Ե Ր Յ Ո Ւ Մ

Ն Ի Ն Ո Ս Ո Ւ Ե Ա Մ Ի Ր Ա Ս

Նոյն պատմագիրները կ'աւանդեն թէ Բէլի որդին Նինոս եղած է Ասորեստանի ինքնակալութեան հիմնադիրը Նինոս կը նուաճէ Ինդոսէն մինչեւ Միջերկրական եւ Նինուէն կը շինէ: Բակտրա պաշարելու ատեն կը յուսահատի, բայց իր բանակին մէջ ծպտեալ կնոջ մը հնարագիտութեամբ քաղաքը կ'առնէ: Եւրոպայէն էր այս կինը:

Եւրոպայ, կ'աւանդեն, ասորի Գիրքով դեցուհու յաղթին էր: Եւրոպ օրը Լիբանանու ժայռերուն վրայ կը նետուի. հոս հրաշքով մը կը սնանի աղանձներէ: Հովիւ մը դայն. կը գտնէ ու կը մեծցնէ: Գեղեցիկ էր եւ հարս կը տրուի Նինոսի իշխաններէն մէկուն:

Բակտրայի պաշարման ատեն Եւրոպայի հնարագիտութեան յաղթանակը Նինոս դայն իրեն կը հարսնացնէ: Եւրոպայ Նինոսի մահէն ետք կ'իշխէ՛ իրեն մայրաքաղաք ընելով Բարեղունը: Եւրոպայի որդին՝ Նիկուսա հեղգ ու պղերգ էր: Վերջապէս Մարգ Վարթակիս իշխանն ու Բարեղացուց Բեյիսիս իշխանը միաւաճել կը յաղթեն Սարգամսուգաղ Անի:

Ասոնք ալ աւաստեցնել են:

*
*
*

Վ. Ը Ն Փ Ե Ր Յ Ո Ւ Մ

Մ Ի Ջ Ա Գ Ե Տ Բ

Հայաստանի ձիւնապատ լեռներէն կը բզիւին Եփրատ ու Տիգրիս: Երկուքն ալ գրեթէ զուգահեռաբար ընթանալէ ետք հետզհետէ իրարու կը միանան, մինչև որ հովիտ մը կը կազմեն որ կը կոչուի Միջագետք: Հովիտն երեք մասի կը բաժնուէր. ծովուն մտակ գտնուողը կը կոչուէր Քաղղիաստան: Ասոր հիւսիսային կողմը կը գտնուէր ընդարձակ դաշտավայր մը՝ Ասորեստան. հովտին հիւսիսային արեւմտեան մասն ալ կը կոչուի Բուն Միջագետք որ ամէնէն անբեր երկիրն էր: Տիգրիս ու Եփրատ միացած շարունակ սիկհող կը բերեն Պարսից ծոցը, որով ցամաքը 40 տարին մէկ քիւմօքը կը յառաջանայ դէպի ծով: Քաղղեստանն որ առանց այս գետերուն անբեր ու աւազուտ երկիր մը պիտի մընար՝ հինէն ի վեր Եգիպտոսի նման նշանաւոր եղած է հարուստ բուսականութեամբ: Հողին արգասաբերութիւնը կախում ունէր գետերուն տարեկան աշխարհաւեր յորդումէն զոր կը կանոնաորէին ջրանցքներով ու թոււբերով: Երբեմն ցորենի մէկ հատիկը 2-300 բերք կ'արտադրէ հոն: Յորենի ու բարիի հոյրենիքն էր: Հերոգոտոս կ'ըսէ թէ անհաւատարի է բուսած կորեկին ու շուշմային բարձրութիւնը: Արմուէն կը շինէին հացի գինի, քացախ եւ շաքար: Թելը կը մանէին կտաւ գործելու, ծառին կոճղն իբրև գերան կը գործածէին, կուտը դարբիններուն հնոցը կը նետէին ու կենդանիներու կեր կուտային: Պարսկական երգի մը մէջ արմաւի 360 տեսակ գործածութիւնը կը յիշուի: Միջագետք առատութեամբ երեսուն դար շարունակ սնուցած է Հին աշխարհի ամենամեծ արգելիքն մէկը: Թէեւ անմշակ եւ անիւնամ թողուած է մինչև իսկ այսօր, սակայն յուսթի են այդ դաշտերը: Լէյարա կը պատմէ թէ իր քերթէները կը կորսուէին հոծ խոտերուն մէջ, եւ բազմազան ծաղիկներուն գոյներով կարմիր, կապոյտ եւ դեղին ներկուած՝ դուրս կ'ելլէին:

* * *

Քաղղեստանի մէջ քար չկար, այլ թրծուն աղիւտ եւ որովհետեւ անթուրծ աղիւտը լոկ արեւուն դիմաց կը չորցուէր եւ դիւրաւ կը փշրուէր, արտաքին մեծ պատերու եւ տամալիներուն համար կը գործածէին գաշն: Ասորեստանի մէջ քար կը գտնուէր, բայց եւ այնպէս աղիւտ շատ կը գործածէին: Մեծ շինութիւնները հանդէսներով կ'սկսէին եւ թագաւորն իր ձեռքով կը ձգէր արձանագրուած հիմնաքարը: Քարի պակասութեան պատճառաւ էր նաեւ որ հոն առատ արձան չի գըտնուիր, այլ շատ մը հարթ քանդակներ, որոնք կը պատկերացնեն թագաւորներու գործեր ու պատերազմներ, ծառեր, թռչուններ, ձուկեր: Սակայն սովորաբար շատ անյաշող են այն նկարները, եւ աւելի կը նմանին տղոց տետրակներու վրայ գծագրած պատկերներուն: Արեւելեան այն բոլոր նկարները զորս կ'ընդօրինակին եւ ընդամենը, զորորինակ՝ ծաղիկախառնածներ, սերւակախներ, վարդապատեր, զորորինակ՝ ծաղիկախառնածներ, սերւակախներ, վարդապատեր, զորորինակ՝ ծաղիկախառնածներ եւ այլն Քաղղեստանէ ծնունդ առած են:

* * *

Վ. Ը Ն Փ Ե Ր Յ Ո Ւ Մ

ԱՍՈՐԵՍՏԱՆ ՈՒ ԱՍՈՐԵՍՏԱՆԵՐ

Ասորեստան Քաղղեստանի հիւսիսային կողմն է: Ասորին մասը Քաղղեստանի կլիմայն ունի, ցորեն եւ ուրիշ հացաբոյսեր կ'արտադրէ: Վերին մասն աւելի ժայռոտ է, իսկ լեռներու մէջ քարահանքեր եւ աւտառներ կան: Բնակիչները քաջ եւ վայրագ պատերազմողներ էին: Հեծեալ ու հետեւակ զօրքերու բանակ մը կազմակերպած՝ յաճախ յաղթական կը հանդիսանային: Ամէնէն սովորական գէնքն էին աղեղ ու սուր: Զիւարները փոքրիկ ձիերու վրայ կը հեծնէին առանց թամբի ու ասպանդակի: Հարուստներն ու մանաւանդ թագաւորը կառքի վրայ կիցած՝ կը կուռէին: Պատերազմի մէջ մեքենայներ՝ ալ կը գործածէին իսկապէս անգլիացիները կը վերաբերուէին պարտեալ թշնամուսն հետեւի աւերէին, կ'այրէին, կը մորթէին ու խմբովին կը գերէին: Թա-

գաւորը միահեծան տէր ու բացարձակ ինքնակալ էր: Դրացի իշխաններն անգամ իր ոտքին առջեւ կը խոնարհէին: Թագաւորը կը հագնէր շքեղազարդ պարիզօտ, կարծ փոքր կրկնոց, գլուխը թագ կը կրէր կամ սրածայր արտախուրակ: Կը կրէր նաեւ ապարանջան, քառամանեակ ու գինդ: Միշտ ունէր երկու սպասաւոր, մէկուն ձեռքը հովանոց, միւսինը փետրեայ ձանձաւար:



Ե. Ը Ն Պ Ե Ր Յ Ո Ւ Մ




ԲԱՔԵԼՈՆ ՈՒ ԻՐ ՇՐԱՇԱԼԻՔՆԵՐԸ

Բաբելոն քառակուսի քաղաք մըն էր, առնուադն հինգ անգամ աւելի մեծ քան Լոնտոն: Եփրատ իր մէջէն կ'անցնէր՝ անկիւն մը գծեկով: Անոր պարիսպը 338 ոտք բարձր եւ 85 ոտք թանձր, ամէն կողմ աշտարակներ եւ արսյոյէ դռներ ունէր: Իսկ աշխարհի հրաշալիքներու կարգէն են իր պալատներն ու կախաղանաւոր պարտեզները ու լիւնային տեսարան ներկայացնող կարգ կարգ դարստութիւնները:

Նաբուգոդոնոսոր հրաշագործ ծաղիկեցուց Բաբելոնն ու «Ասիոյ ջագոռիկն եւ աշխարհի առեւտրի մեծ խղափր» կը համարուէր: Մէկուկէս դար ետք իսկ երբ Հերոդոտոս ուղեւորած էր այս քաղաքը՝ «անմահն ու անբաղդատելի» է կը գրէ: Մէջէ մէջ երկու պարիսպ կար, տանց արտաքինն ունէր քառակուսի 250 աշտարակ եւ 100 պղնձէ դռներ: Ո եւ է դռնէն մինչեւ դիմացի դռնն ուղիղ ձամբայ էր:

Կախաղանաւոր բուրաստեղծ պարտեզն որ վրայէ վրայ կ'մարներու վրայ շինուած 3-400 ոտք բարձր հողակոյտ մըն էր՝ մեքենայներով կ'ուղարկէր Եփրատի ջրէն: Նաբուգոդոնոսոր Միդացի կին մը ունէր որ չէր կրնար ընտելանալ Քողդէաստանի պէս լեռներէ ու ծառերէ զուրկ դաշտային երկրի մը: Թագաւորն անոր սիրոյն համար շինել տուած էր այս Կախաղանաւոր պարտեզը:

Եփրատի երկու եզերքի քարափներն ու դետն իջնալու համար սանդղաւոր նրբանցքներ շինուած էին, եւ կամուրջ մը



Կախաղանաւոր պարտեզ

կար զոր գիշերները կրնային վերցնել, որպէս զի գողութեան համար մէկ կողմէն միւսը չտանցնին:

Բնակարաններն երկու երեք յարկ էին: Փողոցները երկար եւ ուշիղ անկիւններով դիրսը կտրած ըլլալով՝ քաղաքը միաձեւ քառակուսիներու կը բաժնուէր: Պարտեզներն անհամար էին, եւ Բաբելոնն ո՛չ թէ սոկ քաղաք, այլ աշխարհ մըն էր:

Նաբուգոդոնոսոր վերանորոգեց նաեւ հին մեծ ջրանցքը, զոր երմէ 1200 տարի առաջ Բաղդէաստանի Համմուրաբի թագաւորը բանալ տուած էր. անկէ կտտ ուրիշ ջրանցքներ ալ բացաւ: Նաբուգոդոնոսոր Բաբելոնի շինութեանցը վրայ կը պարծէր ըսելով՝ «Այս չէ՞ այն մեծ Բաբելոնը, զոր ես իմ գորութեամբս, իմ մեծութեամբս փռուցիս համար արքայական տուն շինեցի»:

Նաբուգոդոնոսոր վեց ահիս յիմարացաւ գալլախտութեամբ, իր շինած ութ մեհեաններուն առաջինն էր Մարդուխիւր—Մեհուփսիս որուն համար Լիբանան լեռներու ամէնէն մեծ մայրեները բերուեցան եւ գերանները ոսկիով ու արծաթով պատուեցան:

Բաբելոնի մօտ նշանաւոր սրբարաններն էին Գուքիա, ուր շինեց Նեղիալի—Անգիլի, մեհեանն ու Պոտփրա, ուր կառոյց Նանա դիցուհւոյն երեք մեհեանները: Բէլի մեհեանն որ Ս. Գլորքին մէջ «Բարեղոնի աշատակ կը կոչուի», եօթն աստիճանաւոր քանընդհանր մեզր բարձր դարաստանի մը վրայ կառուցուած էր: Բաբելոնի աւերակներու մէջ ցարդ կը գտնուին միլիոնաւոր աղիւսի կտորներ միեւնոյն արձանագրութեամբ. «Ես եմ Նաբուգոդոնոսոր՝ արքայ: Բաբելոնի, անդրանիկ օրդին Նաբուգալասարի»:

* * *

Զ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Ն Ի Ն Ո Ւ Է

Ասորեստան դարերու ընթացքի մէջ քանի մը մայրաքաղաք փոխեց: Հին մայրաքաղաքն էր Աշուր՝ Ձսպ գետին Տիգրիսի հետ խառնուած տեղն որ հիմա կը կոչուի Գալա-Նեդիւս: Տգլաթ-Պալասար Ա. շինած էր Աշուրը: Բ. մայրաքաղաքն եղաւ Քաթափ՝ որուն աւերակները կը տեսնուին Նեւրոս գետին մէջ: Աշուր-Նազիր-Հաբալ շինել տուած է այդ քաղաքը Ասորեստանի Գ. մայրաքաղաքն է Նիւոռն որ կը գտնուէր Տիգրիսի ձախ եզերքը: ունէր 89 քիւմետեր պարիսպ մը: Պատերը 33 մետր բարձր եւ այնչափ լայն էին որ վրայէն երեք կառք քով քով կրնային անցնիլ: 9500 աշտարակ ունէր, իւրաքանչիւրը 66 մետր բարձրութեամբ: Սենեքերիմ ու Աշուր-Բանիպալ Նինուէն հոյակապ շէնքերով զարդարեցին: Երկար ատեն Նինուէ էր Արեւելքի ամէնէն նշանաւոր քաղաքը: Երբ է. դարուն վերջերն Ասորեստան կը


գահալիծի, Նինուէ աւերակ կը դառնայ եւ այնուհետեւ Պատմութեան մէջ սպառ չ'երեւիր: Իր աւերակները կը գտնուին Մուսուլի մօտ Գոյուկնուզ գիւղը:

* * *

Է. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՈՒ ԱՐՈՒԵՍՆԵՐ

Քաղաքացիք վաղուց ցոյց տուած էին ձարտարապետական ձիրք մը: Կը փորձէին շինել աշտարակ մը որոյ «լինիցի գլուխ



Սարգոնի պալատան դռներէն մէկը

մինչեւ յերկինս»: Կիտուածնկար ու լսնակիճով պապաստով կը կառուցանեն ընդարձակ շէնքեր, որոնց աւերակները գտնուեցան վերջերս: Այս շինուածքներուն ուրուագիծը թէեւ բրգաձեւ է, Ընդհ. Պատմ.

բայց շատ բարձր սանդուխներով կամ աստիճաններով կառուցուած են: Ընդհանրապէս պալատին մօտ կը բարձրանար բրգաձեւ աշտարակ մը քանի մը դասիկոններով՝ աստղագէտ քուրմերուն համար:



Բեւեռագիր

Թիւն կը մշակէին եւ Ուր քաղաքին նաւերը Պարսից ծոցին եզերքն առեւտրական երթեւեկ կը կատարէին:

Ասորեստանցիք նշանաւոր էին ճարտարութեան մէջ, կը կարէին, կը յղէին թանկագին քարեր, կը շինէին թափանցեկ սպակի, կահարասիք, զարդեր եւն:

Հողագործութիւնը ծաղիկեցնելու նպատակաւ ստորերկրիով ջրմուղներ ու ջրանցքներ կը բանան եւ անոնցմով կ'ուռգեն երկիրը:

Երկրն աշխարհագրական նշանաւոր դիրք մը ունենալով՝ դրացի ու հեռաւոր ժողովուրդներու հետ վաճառականութիւն կ'ընէին իրենք եբեւե ցամաքային ժողովուրդ՝ նաւարկութեան մէջ չեն յառաջանար: Եւ արդի ֆիզիկի ձեւ նաւերով կ'երթեւեկէին Եփրատ ու Տիգրիս գետերուն վրայ: Հայերն ալ իրենց ֆիզիկներով վաճառականութիւն կ'ընէին Եփրատի միջոցաւ Բաբելոնի եւ Տիգրիսի միջոցաւ՝ Նինուէի հետ:

* * *

Բ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Բ Ե Ի Ե Ռ Ա Գ Ի Ր

Քրիստոսէ 3000 տարի առաջ գիրը ծանօթ էր Ագատեանց Արձանագրութիւնները մեծ մասամբ պնակիտի ձեւով թրծուէ աղիւսներու վրայ նշանակուած էին ա'յնպիսի գիրերով որ սուր եւ երկայն անկիւններ կը կազմէին: Այս նշանագիրերով ո'չ միայն Աշուրական ու Քարդիական, այլ եւ Շոշական, Իարդիական, Կասպողովիական, Մարական ու Պարսկական լեզուներ ալ կը գրուէին: Բեւեռագիր = Սեպաձև կոչուած այս գիրերուն ընթերցումը շատ կնճուտ ու դժուարին է: Առաջին անգամ անգլիացի մը՝ Ռոյլնարն յաջողեցաւ պարզել այս նշանագիրերը Պարսկաստան գտնուած արձանագրութեան մը շնորհիւ, ուր ուրիշ լեզուներ ալ նշանաւորուած էին: Նոյն հին պարսկերէնէ սկսած՝ Ռոյլնարն լուծեց Տետրագետէ Աշուրեռեկը, Բարկիւնեռեկն ու վերջապէս ինկ ֆարդիականն որոնց թերականութիւններն ու բառարաններն ալ շինուեցան յետոյ: Մեւ յայտնուեցաւ Աշուրարաններու մէջ նշանաւոր են Պոդա, Օրեք, Մեկան, Լըկուրման ու քը Սորի: Քրանսացիները, Հիմա շատ աշուրարաններ կան:

* * *

Բ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

ԱՍՈՐԵՍԱՆԻ ԳՐԱՏՈՒՆԸ


Գտնուած արձանագրութիւններէն կը տեսնուի որ Ասորեստանցիք կը մշակէին Գրականութեան գանազան սեռեր՝ գրուած քարետախտակներու եւ աղիւսներու վրայ որոնցմով կը վարդաբէին պալատին պատերը: Գրեթէ բոլոր քաղաքներն ալ ունէին իրենց գրադարանները: Գրադարանը բեւեռագիր արձանագրութեամբ լեցուն արձաններու հաւաքածոյ մըն էր:

Աշուր-Պանի-Բալ իր գրատունը ճոխացուց՝ Բաբելոնէն վտարադրել տուած Սարգոնի անակիտներով: Այս Արքունի գրատունը կը պարունակէր գերքերով լեցուն երկու սենեակ՝ Ասորեսանցւոց գիտրիկանց հանրագիտարանը: Գիրքերուն թիւը 10000 կը հաշուուի:

Գրադարանը բաց էր ժողովրդին առջեւ:

*
**

Ժ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ



ԱՍՈՐԵՍԱՆԻ ԻՆՔՆԱԿԱՆՆԵՐԸ

Ասորեստանի կառավարութիւնը միահեծան ինքնակալութիւն էր: Թատր իշխաններ ու թագաւորներ իսկ կը խանարհէին ինքնակալին առջեւ: Տէրութեան առաջին պաշտօնեայն՝ Հագարայիսն անոր կամքը կը յայտնէր կամ կը գործադրէր: Հագարայիսն միջոցաւ կը կատարուէր իշխաններու ընդունելութիւնը՝ Թաղաղութեան ատեն Ասորեստանի ինքնակալներուն նախասիրած պարագլուժն էր առիւծ որսը Արշաւանքի ատեն սպառազէն կառքէն երբեմն վար իջնելով՝ կը կռուէին: Արշաւանքէ դարձին պարսպին պատերուն վրայ արձանագրել կուտային իրենց յաղթանակները, կապուտ կողոպուտը, աւրած քաղաքները, գլխատած ու մորթազերծ գերիները: Ամբողջ Ասիա ուրախացաւ, երբ Նինուէ կործանեցու:

*
**

ԺԱ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ



ԿՐՕՆԵ

Քաղաքական կրօնքը յարեւնմանն էր Աշուրականին, միայն աս՝ էր տարբերութիւնն որ իչ Բաբելոնի եւ Աշուր Ասորեստանի մէջ գերագոյն աստուած էին:

Սարգուրիւնը = Երկնային մարմիններու պաշտամունքը կրօնքին մասը կը կազմէր:

Գլխաւոր աստուածներն էին:

Իչ, ասոր պաշտամունքի գլխաւոր տեղն էր Բաբել = Բաբելոն որ կը նըշանակէ Իյի դուռ: Սեմական միւս ցեղերն այս Իչ անունը վտխած են իշահիլի (եբրայեցերէն) ու Աղանի (արաբերէն):

Անա } Իրենց պաշտամունքը նոյն էր:
Բեղ } Յունական Պղուտոն,
 Գիոս ու Պիսիգոն

Հեա

Նիւ = Բաւր, ասոր պաշտամունքը նոյն էր յունական Հերակլէսի:

Բաւրէն ունինք Հայոց պատմութեան մէջ ծանօթ Բաւրշաւը:

Իշխար = նաև որ կը համապատասխանէ Եբրայական Ասարոլիին ու մեր ազգային Ասդիկ դիցուհւոյն:


Իւրաքանչիւր աստուած ունէր իր աստուածուհին որ խորհրդանշան էր Արգատուորութեան:



Ասորեստանի կայսրը եւ իր ընդունելութիւնը

*
**


ԺԲ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ



ԱՍՏԵՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Քաղաքական պայծառ երկինքը շատ կանուխէն թելադրեց ժողովուրդին որ մշակէ Աստիագիտրիւնը: Իրենք հնարած են

Արեգակնային ժամացոյցը, Ձոնիակուսի 12 նշանները, արիւն կը հաշ-
ուէին 365 1/4 օր. զայն բաժնեցին 12 ամիսներու, օրերու, ժամե-
րու, վայրկեաններու: Քա-
ղաքակիրթ աշխարհն այս
գրուածիւնը իւրացուց:



Արեգակնային ժամացոյցը


Ձոր ուղիներու հաւանաբըն գուշակութիւն ու կախարդու-
թիւն Քաղղէացիներէն
տարածուած են ամէն
տեղ:

*
*

ԺԳ. ԸՆԹԵՐՅՈՒՄ

ՄԵՇԵԱՆՆԵՐ

Ասորեստանի մեհեան-
ները պալատներուն
մէկ յարակից մասն էին,
իսկ Բաբելոնացոց մէջ
ամէնէն հոյակապ ու
շքեղ շէնքն էին որ կը
բարձրանային պայս-
պապատ շրջափակին
մէջ եւ կը բաղկանային իրարու վրայ բարձրացած եօթը քառ-



Մարդազուլի քեւաւոյ առիւծը

ակուսի աշտարակներէ: Գազաթը կար սրբարան մը, մէջը՝ սեղան
մը ու պատկեր

Իւրաքանչիւր աշտարակ նուիրուած էր եօթը մուրրակներէն
մէկին եւ ներկուած հետեւեալ կարգով:

Ա.	Աշտարակը՝	Երևակիւն,	ներկուած	սև	[Դանագոյն
Բ.	"	Լուսնրագիւն	"		նարնչագոյն կամ ծի-
Գ.	"	Հրահիւն	"		կարմիր
Դ.	"	Արևուն	"		նսկեգոյն
Ե.	"	Արուսեակիւն	"		դեղին կամ ներնակ
Զ.	"	Փայրածուխ	"		կապոյտ
Է.	"	Լուսնիւն	"		արծաթագոյն

Ասորին յարկը կար նտեւ ուրիշ սրբարան մը ուր հասարակ
ժողովուրդն իր կրօնական պարտքերը կը կատարէր

Մեհեանին բարձրութիւնն էր 56 սոթ:
Այս մեհեանն է ծանօթ «Բաբելոնի աշտարակն» որ նա-
խագէտ Պոտսիքթայի աշտարակ կը կոչուէր:

Խմբագրական նիւթեր. — Նկարագրել բաղդասելով
ուրիշներուն հետ Ասորեստանի քարտապետութիւնը եւ
ըսել քէ ինչպիսի՞ նիւթեր կը գործածէին:

2. Նկարագրել բաղդասելով իրարու հետ Բաբե-
լոնն ու Նինուեն եւ աւելցնել քէ որո՞նք են աշխարհի
վիւս հրաւալիքները:

3. Նկարագրել բաղդասելով իրարու հետ քեւեա-
զիրն ու մեհեանագիրը եւ աւելցնել քէ որո՞նք լուծեցին:


4. Նկարագրել քէ Քաղդէական-Աուուրական կրօն-
էն հանգիստութիւններ կա՞ն մեր մէջ:

Գ. ԵՐՐԱՅԵՑԻՔ

Գ Ա Ս

Նահապետական շրջան.— Եբրայեցիք = Հրեայներն Արարական անապատին եզերքը թափառող հովիւ ցեղեր էին :

Ազգին 'սախահայր' Աբրահամ Միջագետքի Ուր քաղաքէն Քանան կը գաղթէ (2000 Ն. Ք.) : Աբրահամու



Պաղեստին

սուր ձեռքով Քանանու հեթանոս բնակիչները ջնջելէն ետք (1300 Ն. Ք.), գրեթէ մինչեւ 1095 անընդհատ պատերազմներ կը մղեն դրացի երկիրներու հետ :

թոռ Յակոբայ որդիները սովի ժամանակ Եգիպտոս կ'երթան ուր իրենց սերունդը կը մնայ մինչեւ 1500 :

Մովսէս այս միջոցին հարստահարեալ հրեայները կ'ազատէ Եգիպտոսէն և 40 ամեայ պանդխտութենէ ետք Առեւտաց երկիրը կը տանի :

Մովսէս եգիպտական կրթութեամբ օժտուած՝ եղաւ Հրէից օրէնադիրն ու կազմակերպիչը :

Հրեայները Յսուսի ձեռքով Քանանու հեթանոս բնակիչները ջնջելէն ետք (1300 Ն. Ք.), գրեթէ մինչեւ 1095 անընդհատ պատերազմներ կը մղեն դրացի երկիրներու հետ :

Կրօնի ու 12 ցեղերը.— Միակ Աստուծոյ պաշտօնը միայն հրէից մէջ մնաց : Աստուծոյ ընտրեալ այս ժողովուրդեան՝ Իսրայելացւոց քով՝ Եհովիսն = Եհովիսն երկրին ճշմարիտ տէրն ու թագաւորն էր : Հեթանոսութիւնն իրենց մէջ սաստիկ արգիւռած էր : Օրէնքը կը հրամայէր որ օտար ժողովուրդներէն հեռանան, երկիրը մշակեն ու նստակեաց կեանքի վարժուին :

Ժողովուրդը, ինչպէս նաեւ երկիրը 12 ցեղերու բաժնուած էր : Եհովիսն ճանաչութեան նախորդած Ղեւսացիներն օրէնքի ու աւանդութեանց պահպաններն էին : Ասոնց գլխաւորն էր քահանայապետն որ Ահարոնեան ցեղէն կ'ըլլար :

Ցեղերը կը բաժնուէին գերդասուկներու = տուներու : Մէն մի գերդաստան ունէր Նահապէս = Տաւուստը մը, բայց եթէ հարկ ըլլար, բոլոր ազգին գլուխը կ'անցնէին այնպիսի մարդիկ՝ որ իբրեւ դասաւոր ժողովրդին վրայ կ'իշխէին :

Թագաւորական շրջան.— Վերջին դատաւորը՝ Սամուէլ 1097ին Սաւուղը բազաւոր օժեց : Ասիկա փոշտացւոց հետ մղած անյաջող պատերազմին մէջ իր անհանգիստ կեանքին վերջ տուաւ :

Դաւիթ.— Իր յաջորդ Դաւիթի ժամանակ (1049—1014) հրեայ ժողովուրդն իր զօրութեան գագաթը կը հասնի : Ասորիք ու Արաբիա միևեւր կարմիր ծով Դաւիթի կը հնազանդին : Երուսաղեմ կ'ըլլայ պետութեան մայրաքաղաք ու Եհովայի պաշտաման կեդրոն :

Սողոմոն.— Փառասէր ու փափկակեաց Սողոմոն (1014—978) կը շինէ շքեղ տաճար մը, կը հարստահարէ ժողովուրդն ու ձեռնութեան ատեն կ'ըլլայ կռապաշտ : Ասորիք իր օրով ապստամբելով՝ անկախ կ'ըլլան : Թագաւորութեան բաժանումը.— Սողոմոնի մահուր—

նէն ետք (978) տէրութիւնն երկուքի կը բաժնուի : Հիւսիսային ճասն ցեղերը Յերոդովանի առաջնորդութեամբ կը կազմեն Բուրայիի քաղաւորութիւնը՝ Սաւաիա մայրաքաղաքով : Ասիկա քիչ ատենէն հեթանոսութեան փարած՝ Ասորիքի և Յուդայի հետ ունեցած շարունակեալ պատերազմներով կը տկարանայ : 722ին Սաղմանասար երկիրը կը նուաճէ ու բնակիչներէն մէկ մասը գերի կը տանի :

Յուդայի և Բենիամինի ցեղերը կը կազմեն Յուդայի քաղաւորութիւնն Երուսաղեմ մայրաքաղաքով : Յուդայի թագաւորութիւնն ի սկզբան քանի մը լաւ թագաւորներ կ'ունենայ, բայց 700էն ետքը հոս ալ կը մտնէ հեթանոսութիւնը, հետեւագէտ բարքի ապակահուծիւնը : Նաբուգոդոնոսոր կ'առնէ 586ին Երուսաղէմն ու Հրեայները Բաբելոն գերի կը տանի :— «Բարեշունի զերուրիւն» :

Հրեաներն օտար իշխանութեան տակ.— 4) Նոռու Դանիէլի միջնորդութեամբ (539) հրեայներուն հրաման կուտայ Քանանու երկիրը դառնալու : Հրեայները մինչեւ 332 Պարսից հաւատարիմ կը մնան : 320—200 Եգիպտական, 200—167՝ Ասորական իշխանութեան տակ էին և 167—39 Մակարայեցոց շնորհիւ կ'ըլլան ազատ : Գահակալութեան ու կուսակցութեան երկար կռիւներէ ետք Հերովդես մեծ (39 Ն. Ք.) Հռովմայեցոց ձեռնտուութեամբը թագաւոր կ'ըլլայ :

Երուսաղէմ Տիրոս կայսեր ձեռքով 70ին (Յ. Ք.) կը կործանուի ու Հրեայ ազգը ցիրուցան կ'ըլլայ :

Հրեայ ազանդաւորները.— Գերութենէ ետք նորոգուած Մովսիսական օրէնքներն Եգիպտացոց ու Ասորւոց թագաւորներու տակ փոփոխութիւններ կրեցին :

Փողովուրդին գլուխն էր ֆահաւայապէսն օրուն կ'օժանդակէր Ծերերու խորհրդարանը = Սենեթրիոնը :

Հրեայ ազգը վերջին խռովութեանց ժամանակ երեք կուսակցութեան բաժնուած էր : 1. Փարիսեցիք հին հաւատքի ու աւանդութեանց սաստիկ յարած՝ Մովսիսական օրէնքները ճիշդ գրաւոր իմաստին համեմատ կը մեկնէին և բարեպաշտութիւնն արտաքին արարողութեանց պահպանութեանը վրայ կը զննէին :— 2. Յունական կրթութեան տեղեակ Եստեւացիները Մովսէսի օրէնքները յունական գաղափարներու հետ ձուլել կ'ուզէին և կրօնական կրթութեանց պարապելու համար տեսակ մը միաբանութիւն կազմած էին :

3. Սադուկեցիք թէպէտ Մովսէսի օրէնքները կ'ընդունէին, բայց անոր աւանդական մեկնութիւնները չէին ընդուներ : Հոգւոյ անմահութեան, ինչպէս նաև հրեշտակներու և դեւերու գոյութեան չէին հաւատար :

ԸՆԹԵՐՅՈՒՄՆ ԵՐ


Մարգարէներ, Մովսիսականութիւն. Տասն պատիւան (ձձ'ս, Դ. 10 աչկոնց Միջին ու Բարձր. Կրօնի ուսումները) :

Թեւադրութիւններ.— Նկարագրեղ ևսնապէսական շրջանն ու ըսեղ Հրեայներու կրօնի գլխ. գիծերը.— Նկարագրեղ քաղաւորական շրջանը.— Ե՛րբ երկու մասի բաժնուեցաւ քաղաւորութիւնը : Հրեայներն Ե՛րբ ինկան օսարիկ սակ.— Որո՞նք են Հրեայ աղանդաւորները :

Ե. ՓԻՆՆԻԿԵՑԻՔ

Գ 1 0

Փիննիկէ ու Փիննիկեցիք.— Պաղեստինի հիւսիսային արեւմտեան զին լեռնային, անրեր, բայց նաւարկութեան շատ յարմար ծովեզրը կը կոչուէր Փիննիկէ=արդի Պէյրուզի կուսակալութիւնը: Փիննիկեցիք նոյն իսկ ամէնէն հին ժամանակներն իրենց առեւտրական ճամբորդութիւններով Միջերկրական ծովուն բոլոր եզերքը պատած և մասնաւորապէս Ափրիկէի մէջ 814ին Մեծ



Փիննիկէ

Կարկեղոնը հիմնարկած էին, մինչև իսկ Անգլիա գացած ու 600ին առեւնները նաև Ափրիկէի բոլորաթիքը նաւարկած էին: Փիննիկեցւոց կարաւանները մինչև Պարսից ծոց ու Կարմիր ծով կ'երթային:

Իրը ու գրամ գտնելով՝ ամէն ժողովուրդներու վրայ արտակարգ ազդեցութիւն մը ստացան:

Իրենց կը վերագրուի ապակիի, ծիրանեզոյն ներկի գիւտն ու բրդի պատրաստութիւնը:

Փիննիկեցւոց ամէնէն հին քաղաքն էր Սիդոն, բայց յետոյ (1000)ին սկսաւ Տիրոսը զօրանալ, զոր 600ին (Ն. Ք.) երկար պաշարումէ ետք նարուզողմնոսոր առաւ:

538էն սկսեալ՝ Փիննիկեցիները Պարսից հաւատարիմ դաշնակից էին, բայց երբ ասոնք ինկան ու Տիրոս կործանեցաւ (332), Փիննիկեցիք Պատմութեան մէջէն անհետացան:

Փիննիկէի քաղաքներն անցաւ ժառանգական քաղաւրներունէն, բայց ամենքը մեկ դաշնակցութիւն կը կազմէին սրուն գլուխն էր Տիրոսը:



Բահադու գլուխը



Մադոֆ


Փիւնիկեցիք ընապաշտ էին մասնաւորապէս կը պաշտէին աստղերը՝ Բել, Մողոք=Բահաղ, Ասասրէ և աստուածացած Մարդուկը=Մելխարք :

Թեւազրութիւններ.— Ո՞ր կը գտնուի Փիւնիկե.— Փիւնիկեցիք ինչե՞ր շրսած էին.— Ո՞ր քաղաքը հիմնած էին.— Ինչե՞ր հետրած են.— Ի՞նչ կը վերագրուի իրենց.— Ո՞րն էր ակնհեռ հիմն քաղաքը.— Ո՞վ գրաւեց Տիրուսը.— Փիւնիկեցիք ի՞նչ տեսակ կառավարութիւն մը ունէին.— Ինչե՞ր կը պաշտէին:

Ա. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Տ Ի Ի Ր Ո Ս

Տիրուս հիմնուած էր ծովեզրէն մէկ քիւրմեզը հեռու կղզեկի մը վրայ Սիդոնացիք Միջերկրականի արեւելեան կողմերը յառաջացած էին, մինչդեռ Տիւրացիք դէպի արեւմուտք նաւարկելով՝ գտան Սիկիլիա, Մաղլա, Սարսենիա ու Պարթարեան կղզիներն ու շերակիւն արձաններէն—ծիպալուբարէն անցնելով հասան երկիր մը զոր անուանեցին Գարշիշ՝ Սպանիոյ Բեթիկե=Ան-սալուսիա գաւառը Այս երկրին առատութիւնն ապշեցուց զԻրենք, գինիէն, իւղէն, ցորենէն, ընտիր ոչխարներէն զատ, արծաթի հարուստ հանքեր կային հոն: Կը պատմուի որ այս արծաթի առատութիւնէն խելուած՝ կոտորեցին իրենց հողէ անօթները, նետեցին անազազղնձէ գէնքերն ու նաւուն կողմ մտասները, նետեցին անազազղնձէ գէնքերն ու նաւուն կողմ մտասները, զէ խորիխները, եւ անոնց տեղ արծաթէ շինեցին գէնքերը պատաններն ու խորիխները եւ այսպէս վերադարձան Փիւնիկէս Նշանաւոր է Բիրսալ՝ Տիւրոսի թագաւորը (ժ. դար) որ երու-



Փիւնիկեան գաղութաւանութիւնը

ՓԻՒՆԻԿԵԱՆ
ԳԱՂՆՈՒԹՅՆԵՐ

ասղէմի Տաճարի շինութեան համար օգնեց Սողոմոնի Գիրամի թողէն ետք՝ Յեղաբելի հայրը երարաւաղ որ Ասղարսէ դիցուհւոյն քուրմն էր՝ թագաւոր կ'ըլլայ: Ասորեստանի թագաւորները կ'սկսին յարձակիլ հետզհետէ: Աննքերիմ միայն կը յաջողի Տիւրոսն առնել (700): Դար մը ետք Նաբուգոդոնոսոր կը պաշարէ Տիւրոսը: Քաղաքը 13 տարի կը դիմադրէ եւ անձնատուր չ'ըլլար: Սակայն այս պաշարման վիճակին մէջ վաճառականութիւնը կը դադրի եւ Տիւրոս կ'իյնայ:

Բ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Կ Ա Ր Կ Ե Դ Ո Ն

Նախաձեռնարկ Փիւնիկեցիք հաւանականաբար Թ. դարուն մէջերը (Ն. Ք.) իսկ Ափրիկէի հիւսիսային եզերքը հիմնարկած էին Կարիեղոնն (այժմեան Թունուզը) որ Փիւնիկեան գաղթականութեանց ամէնէն նշանաւորն եղաւ: Կարիեղոն հինգ վեց հարելը տարի ետք Անիբալի զինուորական հանձարի շնորհիւ կը յանդգնի ձակատիլ Հոսով հանրագեաութեան ասեղ զօրութեան դէմ: Տիւրոսցիք ուրիշ ծովեզերեայ քաղաքներ ալ հիմնած էին:

Կարիեղոնի հիմնարկութեան մասին հետեւեալ աւանդութիւնը կայ: Տիւրոսի թագաւոր մը մեռնելով կը թողու աղջիկ մը՝ Եղիսէ ու փոքրիկ մանչ մը՝ Պիզմարիոն: Աղջիկն ամուսնացած էր Սիկարալ քրմագետին հետ որ կ'իշխէր իբրեւ ինամական: Ժողովուրդն ընդվզեցաւ: Փոքրիկն Պիզմարիոն մեծցած ըլլալով Սիկարալը սպաննել կուտայ: Այրին՝ Եղիսէ եղբորմէն վրէժ լուծելու համար կազմած էր դաւադրութիւն մը: Դաւը մատնուելով՝ Եղիսէ իր համախոհներով պատրաստ նաւ մը դուռ ու փախաւ: Եղիսէ ասոր համար կոչուեցաւ Դիսոն «Փախսական»: Ասոնք հաստատուեցան Ափրիկէ ծովեզերքը Լիբիոյ թագաւորէն դնուած հողի մը վրայ:

Կը պատմուի թէ թագաւորը կը մերժէ նախ երկիր ծախել

կը խնդրէ եղան մորթին չափ հող միայն: Սակարկութենէն ետք մորթը կտրելով՝ նուրբ ու երկար փոկերու կը վերածէ, այնպէս որ անոնք իրարու ծայրը կապած՝ միջնաբերդ մը կառուցանելու չափ տարածութիւն մը կը շրջապատեն:

Կարիեղոն՝ հետզհետէ բարդաւոր ձեւով՝ Սիւրոնէն ու Տիւրոսէն աւելի հզօր եղաւ եւ Սպանիական ու Ափրիկեան եզերքի վաճառականութեան տիրացաւ: Կարիեղոնցի վաճառականներն ալ նախանձոտ էին եւ իրենց շահատանները գաղանի կը պահէին: Անգամ մը ծովային ուղեգնացութեան պահուն օտար նաւ մը կը հետեւէր իրենց, որպէս զի ասոնց երթալիք տեղը հասնկայ: Կարիեղոնցի նաւուղիը դիտմամբ ծանօթալիք եղաւ զի ասոնք իրենց օտարները իւրաքանչիւր:

Եգիպտական	Փիւնիկեան	Յոյն գիրերու երկամպարումով	Լատին գիրերու երկամպարումով
Ⲁ	Ⲁ	A	A
ⲁ	ⲁ	B	B
Ⲃ	Ⲃ	Γ	Γ
ⲃ	ⲃ	Δ	Δ
Ⲅ	Ⲅ	Ε	Ε
ⲅ	ⲅ	Υ	Υ
Ⲇ	Ⲇ	Ζ	Ζ
ⲇ	ⲇ	Η	Η
Ⲉ	Ⲉ	Θ	Θ
ⲉ	ⲉ	Ι	Ι
Ⲋ	Ⲋ	Κ	Κ

Փ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Գ Ի Ր

Հին Փիւնիկեցիք էին կասարեայ այրուքի առաջին ճեարիչները: Ասիկա շատ նշանաւոր ու հետաքրքրական իրողութիւն է: Ընդհանուր Պատմութիւն

մըն է. որովհետեւ Այբուբենական գրի արուեստը մարդուս
ձեռքով կատարուած գիւտերուն մէջ ամէնէն կարեւորն է գրե-

յոյկոսիկով	փլնկիկեան	Յոյն գրերու եղանակաւորում	Լատին գրերու եղանակաւորում	
Յ	ՅԷ	ՎԸ	Λ	Վ
Օ	ԳԳ	ՄՄ Մ	Μ	Մ
Բ	ԿԿ	ՄՄՆ	Ν	Ն
Կ	ՃՃՅՅԶ	ՃՃ ՅՅ	Σ	ՅՅ
Չ	Օ	ՕՕ	Ο	Օ
Յ	ՉՉ	ՉՉ ՓՓ	Π Φ	ՓՓ ՉՉ
Տ	ՐՐ			
Զ	ԳՓ	Χ+	Χ	ՉՉ
Գ	ԳԳ	ՔՔ ՔՔ	Ρ	ՔՔ
Յ	Վ			
Օ	Χ+	Χ	Τ	Τ

Փիւնիկեցւոց վերապահուած էր լեզուի սակաւաթիւ սկզբնական
ձայներն որոշելու եւ իւրաքանչիւր ձայնը ներկայացնող մասնա-
ւոր նշանագիրքի յատկացնելու գաղափարն որ հանձարեղ ու
գեղեցիկ գիւտ մըն է արդարեւ: Այս գիւտին թուականն
որոշապէս ծանօթ չէ:

Գ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Կ Ա Դ Մ Ո Ս

Յոյնք ուղղակի Փիւնիկեցւոց կը պարտին իրենց այբուբենը
զոր ընդունեցին նաեւ Հռովմայեցիք քանի մը փոփոխամբ:

Սլաւ	Գերման	Հրեայ	Երովպ.	Ասորական	Հին Աւար
А	Α	Α	Α	Α	Α
Б	Β	Β	Β	Β	Β
В	Γ	Γ	Γ	Γ	Γ
Г	Δ	Δ	Δ	Δ	Δ
Д	Ε	Ε	Ε	Ε	Ε
Е	Ϝ	Ϝ	Ϝ	Ϝ	Ϝ
Ж	Ζ	Ζ	Ζ	Ζ	Ζ
З	Η	Η	Η	Η	Η
И	Θ	Θ	Θ	Θ	Θ
Й	Ι	Ι	Ι	Ι	Ι
К	Κ	Κ	Κ	Κ	Κ
Л	Λ	Λ	Λ	Λ	Λ
М	Μ	Μ	Μ	Μ	Μ
Н	Ν	Ν	Ν	Ν	Ν
О	Ξ	Ξ	Ξ	Ξ	Ξ
П	Ο	Ο	Ο	Ο	Ο
Р	Ρ	Ρ	Ρ	Ρ	Ρ
С	Σ	Σ	Σ	Σ	Σ
Т	Τ	Τ	Τ	Τ	Τ
У	Υ	Υ	Υ	Υ	Υ
Ф	Φ	Φ	Φ	Φ	Φ
Х	Χ	Χ	Χ	Χ	Χ
Ц	Ψ	Ψ	Ψ	Ψ	Ψ
Ч	Ω	Ω	Ω	Ω	Ω
Ш	Ϝ	Ϝ	Ϝ	Ϝ	Ϝ
Щ	Ζ	Ζ	Ζ	Ζ	Ζ
Ъ	Η	Η	Η	Η	Η
Ы	Θ	Θ	Θ	Θ	Θ
Э	Ι	Ι	Ι	Ι	Ι
Ю	Κ	Κ	Κ	Κ	Κ
Я	Λ	Λ	Λ	Λ	Λ

Արեւելեան հին ժողովուրդներէն Արաբական, Ասորական ու եթովպական գիրերն ալ Փիւնիկեան գիրերու եղանակաւ որովհետեւն էին Հռոմէական այբուբենն արդի Եւրոպական այբուբեններու հիմն է: Յոյնք իրենք ալ գիտէին թէ ինչպէս այբուբենն ստացան Փիւնիկեցիներէն: Կաւանդէն թէ Կարմուս Փիւնիկէէն մուսաստան բերաւ տանըվեց գիրն որոնց վրայ Տրովագոյն պատերազմին ատեն, Պաշամիդիս աւելցուց չորս գիրք եւ աւելի ետքը Սիմոնիդիս ալ չորս գիրք: Արդի գիտնականները կ'սպասուցանեն թէ Կարմուս առասպելական անուն մըն էր սակ եւ կը նշանակէ «Արեւելք»: Այսուհանդերձ կատարելագոյն այբուբենը Փիւնիկեցիներէն

Ա Զ Է Կ Ա	:	Յ Է Զ Ծ Ը	:
Բ Գ Դ Ե Զ	Բ	Օ Օ Ո Ո	Ո
Դ Դ Դ Դ	Դ	Ո Ո Ո Ո	Ո
Ժ Ի Դ Դ	Դ	Յ Զ Զ	Զ
Բ Բ Բ Բ	Բ	Ո Ր Ր Ր Ո	Ո
Ղ Ղ Ղ Ղ	Ղ	Ս Ս Ս Ս	Ս
Կ Կ Է Է	Է	Վ Վ Վ	Վ
Թ Ր Ր Ր	Թ	Տ Տ Տ Տ	Տ
Ի Ի Ի	Ի	Դ Դ Դ	Դ
Ն Կ Կ Կ Կ	Կ	Վ Կ Ր Ի	Վ
Ղ Լ Լ Լ Լ	Լ	Փ Փ Փ	Փ
Ա Մ Մ Մ Մ	Մ	Ճ Ճ Ճ	Ճ
Ո Ա Ն Ն Ն	Ն		

Մետապեան գիրերու եղանակաւ որովհետեւն էին: Ու Փիւնիկեան գիրերու յունարէնի ձեւափոխումը որոշագոյն կը տեսնուի բարդատուութեամբ:

*
*
Ե. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

ԳՐԻ ԳԻՏԻՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆՆԸ

Գծագրութիւնը, Գանդակագործութիւնն ու Նկարչութիւնը տեսակ մը գիր էին բուն Գիրն հնարումէն առաջ: Նկարչութիւնը վերացական հանդամանք մը ունի բարդատուութեամբ Գանդակագործութեան, նոյնն է նաեւ Գծագրութիւնը՝ հանդէպ Նկարչութեան: Գծագրութիւնն ալ իր կարգին երկար ժամանակ կիրարկուելով՝ նոր օրինակ վերացուած=abstraction կը յանդիս, այ՛

վինքն Գիրն՝ որուն ազդեցութեան սյուն անհուն պիտի ըլլար: Առաջին գիրն առարկայները կը ներկայացնէ պարզագոյն, երկրորդը ցոյց կու տայ վանկերն որոնք կը կազմեն առարկայներու անունը, իսկ վերջինն որ ամէնէն ճիշդն է՝ կը ներկայացնէ նախնական ձայներն որ կը գտնուին այս անուններու մէջ:

Ա Բ Գ Ե Զ Է Ի
Լ Ր Կ Ն Ղ Ս Զ

Մետապեան գիրերու եղանակաւ որով

Գիրն ո՛չ միայն յատկութիւն ունի պահելու ստացուած գաղափարները, այլ նոյն իսկ նոր գաղափարներու ծնունդը կու տայ: Հանձարեղն իսկ նախորդներու աշակերտն ըլլալէ ետքը միայն կրնայ հասնիլ բարձր աստիճանի մը: Ընդունելով մտքին մէջ ինչ որ հիներէ աւանդուած է, մտքը ի վիճակի կ'ըլլայ որ մըն ալ ինք յառաջ բերելու նոր ծանօթութիւն մը:

Իմացական զարգացման նշանաւոր անձնաւորութեանց կենսագրութեան գիտենք թէ ինչպէս ու ինչ յաջորդական կրկնուած բարեփոխումներու շնորհիւ յառաջ եկած է հմտալից կրկնուած բարեփոխումներու շնորհիւ յառաջ եկած է հմտալից աշխատութիւնն անկարելի էր Գրէն առաջ:

Եթէ Խօսքը պայմանն է եղած մտածման առաջին փուլին Բանաստեղծական—Պերճախօս մտածման, Գիրն ալ ստեղծած է Բնագրական ոգին: Անգամ մը երեւակայելու է այն ցաւալի պայմաններն որոնց ներքեւ պիտի գտնուէր հանձարեղ մտքըն եթէ Գիրը գոյութիւն չունենար:

Մէկ Խօսքով հոն ուր Գիր չկայ, անկարելի է որ Հանձարն որքան ալ մեծ ըլլայ իր մտածման սաւառնումներուն մէջ, հասնի բարձրագոյն կէտի մը:

*
*
*

Հակադարձօրէն՝ Գիրէն առաջ մարդուն արդեցութիւնն
իր նմաններուն վրայ շատ սահմանափակ շքմանակի մը մէջ գո-
յուլթիւն ունէր, իրապէս ասիկա միայն իր շուրջն ըստողներուն

Բ. Բ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ.

ԵՐՈՒՄ ԵՐԶՆԻՆ ՈՎԿԵՐ ԵՐ ԵՆ
ՈՒՆԻՉՈՅՑ ԵՐՈՒ ԸՆԴՆՈՒՄ ԵՐ ՆՈՐԱ
ԵՐ ԵՐ ԵՐԵՄԻԱՍ ԵՐԳՆԵՐՈՒ ԵՐԵՆ ԳՐԵՆ

ԵՐՈՒՄ ԵՐԶՆԻՆ ՈՎԿԵՐ ԵՐ
ՈՒՆԻՉՈՅՑ ԵՐ ՆՈՐԱ ԵՐ ԵՐ
ԵՐ ԵՐԵՄԻԱՍ ԵՐԳՆԵՐՈՒ ԵՐԵՆ
ԳՐԵՆ

Հայ գիրերու եղանակաւ որումներ

մարդիկ հազիւ պիտի կրնային շարժիլ եւ իրենց արդեցութիւնը
լոկ տեղական պիտի ըլլար:

Եթէ Գիրը գոյուլթիւն ունեցած չըլլար երբեք, մեծ ծանօ-
թութեանց մթերքն անբարբառելիօրէն աղքատ պիտի մնար
Ասիկա բացարձակ

ճշմարտութիւն մըն
է: Գրով շատ թան-
կագին յատկու-
թեան մը տէր կըլ-
լայ մտածողը, այն
է կրկին աչքէ ան-

ցնել իր գործը, ա՛յնքան անգամ որ ուզէ, ու երկար միջոցէ մը
ետք օտար վկայի մը պէս նայիլ անոր, արձանագրել զայն ու
նաեւ արձանագրութիւնները գատելը

Գրին հնարուածէն առաջ մարդ ուրիշի մը իօսքը կարճ հե-

մարդուն արդեցութիւնն
յին գործունէութեան առ-
ջեւ անսահման դաշտ մը
կը բանայ: Այլեւս մարդ-
տէն տեղ է, տեսակ մը
ամենուրեքութիւն կը սկսի
մարդուն համար որ կը
խորհի կամ կը զգայ ուժ-
գնօրէն: Մէկ երկու մեծ
մարդիկ աշխարհի ընթաց-
քը փոխած են, կ'ըսուի:
Բայց կը մտնան թէ որո՞ւ
կը պարտին զայն, իրական
գիւտի մը անծանօթ հնա-
րիչներն իրենց ձեռքին
մէջ գրած են այնպիսի
լծակ մը առանց որուն
Պատմութեան այս մեծ
գործիչները՝ իսումբ մը

ԵՐԳԳԵԶԵԼԸԹԺԻԼԵ ԵՎ ԿՅ

ՉՂՃՄՅՈՂՂ ԳՐՎՄՐՔ

Հայ գիրերու եղանակաւ որումներ

աւարտութենէ մը միայն կը լսէր Գաղափարներու հաղորդու-
մները կը սահմանափակուէին ապրուած անմիջական հետնքի մը
մէջ լոկ, կամ առ առաւելն աստիճան մը կը տարածուէր տեղա-
փոխութեամբ՝ անդադար ճամբորդութեամբ:



Չ. ԸՆԹԵՐՅՈՒՄ

Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ն Ե Ր

Փիւնիկեցիք Արուեստի մէջ կը հետեւէին եգիպտացւոց ու
Քաղղէացւոց: Կը շինէին ամաններ, անօթներ, կանացի վարդե-
ղէններ, ոսկեղէն ու գոհարեղէն առարկայներ, փորագրեալ
կնիքներ եւ այլն: Կը նկարէին տունի, ծաղիկ, փունջ, վարդապատի,
եգիպտական, Ասորական ու Փիւնիկեան աստուածներ, Թուլուն,
ձուկ, առիւծի կռիւ՝ ցուլի կամ եղջերուի հետ, սիինքս, վեշա-
պառիւծ եւլն: Ճարտագործութիւնը, ներկարարութիւնն ու
թեցեշինութիւնն եգիպտոսէն արդեցան, բայց կատարելագործե-
ցին: Եգիպտացիք անթափանց ապակի կը շինէին, Փիւնիկեցիք
թափանցիկը շինել սորվեցան զիպուածի մը շնորհիւ: Կարմիրու
լերան ասորոսէն դէպ ի ծով հոսող Քերս գետակը մաքուր,
ձերմակ աւաղ կը բերէ: Բորակի աղ բեռցած Փիւնիկեցի նաւ մը
այս գետաբերնին մօտ ծովեզըր կը հանգիպի: Ուղեւորները կե-
տակուր եփելու համար ցամաք կ'ելին եւ իրենց կաթայն տե-
ղաւորցնելու քար չգտնելով՝ անոր տեղ բորակի կտորներ գոր-
ծածեցին եւ կրակը վառեցին: Բորակի աղը հալեցաւ ու կիսաթա-
փանց թիթեղ մը ձեւացուց: Բերս գետակի առագիւ շիւռած սպա-
կին ամէնէն յստակն ու ընտիրն էր եւ երիտասարդուհի մը
պատուատիրելու համար կ'ըսէին «Սիդոնի սպակոյ գոյնն ունի»:



Չ. ԸՆԹԵՐՅՈՒՄ

Փ Ի Ն Ի Կ Ե Ց Ի Ո Ց Դ Ե Ր Ը


Փիւնիկեան պատմութեան ամէնէն մեծ շքման էր թԱ.
Դարէն մինչեւ Չ. Դար (ն. Ք.) 500 տարուան միջոցը: Ո՛րչափ որ

Յունաստան զօրացաւ ու Կարկեդոն կորեւորութիւն ստացաւ, Փիւնիկէի Ծովային վաճառականութիւնն ալ այնչափ վնասուեցաւ: Ասով հանդերձ Փիւնիկէ շարունակեց կարուանով իր վաճառականութիւնն Ասիոյ ներսի կողմերուն հետ՝ Բաբելոնի ճամբով: Աղէքսանդրիոյ հիմնարկութիւնն իբրեւ ծովային նաւահանգիստ՝ անշուշտ հարուած մը եղաւ Փիւնիկէի վաճառականութեան, բայց եւ այնպէս շատ վերջերը, Միջին Դարուն էր որ բոլորովին նսեմացաւ եւ երկիրն «Ուռկաններ չորցնելու տեղ եղաւ»:

Փիւնիկեցիք արժանաւոր են յիշուելու իբրեւ մենակ Ասիացի ժողովուրդ որ խղիւղաբարձրաբար ծաւարող հանդիսացան: Սակայն պէտք չէ մոռնալ որ անոնց զարգացումը շատ միակողջ մանի էր: Չոր օրինակ՝ իրենց կրօնական գաղափարները կոշտ եւ ալքանդակ էին: Այս բանը զարմանալի իրողութիւն մըն է՝ երբ նկատենք ասոնց ազգականութիւնն Եբրայեցոց հետ: Գիտութեան ու Արուեստի մէջ յետագէտ էին Բաբելոնացիներէն աւելի եւ կրնայ ըսուիլ որ Մտաւորական զարգացման մասին աւելի հետեւող էին քան թէ ստեղծող: Նոյնպէս քաղաքական նպատակներէ զուրկ՝ տիրապետութեան ցանկութիւն ալ չունէին:

Փիւնիկեցիք եսպիս յրանապաշտ ցեղ մը ըլլալով՝ իրենք էին ամէնէն հին վանատակմունքն ու գաղղարարները: Ճշմարիտ է որ դիպումով իրենք միջնօրդ եղան տարածելու այն մտաւորական վաճառքներն ալ որ Սիդոնական շուկայներու արտադրութիւններէն եւ Տիրական կերպաներէն աւելի թանկագին էին: Անոնք ընդհանրացուցին այբուբենը եւ Միջերկրականի եղբարքնակ Արիականներու հաղորդեցին Արեւելքէն ստացած ուսմանց, գիտութեանց ու արուեստներու գաղափարները: Բայց Փիւնիկեցիք այս գաղափարները սփռեցին՝ «աւելի թաշնոյ մը պէս որ հատիկներ կը թափթփէ, քան թէ երկրագործին պէս» որ հոնար կը սերմանէ»:

Խմբագրական նիւթեր. — Փիւնիկեցոց դերը. — Չ. Գրին օգտակարութիւնը:



5. ՄՈՆԿՈԼԵԱՆ ՅԵՂ

ՉԻՆԱՅԻՔ

Պ Ա Ս

Հին Լեհնակալուրիւն. — Չինացիք Մոնկոլոյեան ցեղի Աերկայացուցիչներն են: Մշակած են բարացուցակաւ ֆաշիստականութիւնը մը իրենց կողմացած դերքին պատճառաւ: Օտար ազգերու քննաքակրթութիւնէն չազդուեցան:

Չինացիք Միջուկական ցեղին հասած կրթութեան ամենաբարձր աստիճանը կը յայտնեն: Իրենց յատուկ նկարագիրն է յատակ միաք. բայց մէկ անգամ սորվածնուն ու ընդունածին վրայ հաստատ մնալ. նաեւ զգացման ու երեւակայութեան պակասութիւնն:

Չինաց օրէնսդրութիւնը նահապետական և սոսմային բարեպաշտութեան վրայ հիմնուած է: Կայսրը՝ տէրութեան միջնակէտը ժողովրդին հայրն է. անոր առջեւը հպատակներն անշափաճա կը նկատուին:

Չինացիք իրենց պատմութեան շատ մեծ հնութիւն մը կը վերագրեն. սակայն և այնպէս իրենց պատմութիւնը կը սկսի Քրիստոսէ 3000 տարի առաջ:

Յաջորդաբար իշխեցին Հիւս ու Շուակ (1766) կոչուած հարստութիւնները: Երկիրն Աւատական իշխանութեանց բաժնուած էր: Չին-Շի-Հուակիթի Չին հարստութեան հիմնադիրը կը նուածէ բոլոր աւատականները 247 Ն. Ք., կը հալածէ Մոնկոլներն ու անոնց արշաւանքն ընդմիջտ արգիլելու համար՝ շինել կու տայ 250՝ քլմ. երկայնութեամբ մեծ պարիսպը:

Ձինաստան փառքի զագաթնակէտը. — Հան հարստութիւնը չորս դար 200 Ն. Բ. — 226 Յ. Բ. կը տեւէ: Այս հարստութեան ատեն Ձինաստան փառքի ու զօրութեան գաղաթնակէտը կը հասնի: Ուսում ու գիտութիւն կը քաջալերուին ու երկիրը կ'ընդարձակուի նոր աշխարհակալութեամբ:

Ձինաստանի անկումը. — Հան հարստութենէն ետք, զանազան արշաւանքներու պատճառաւ, Ձինաստան կը բաժնուի երկու իշխանութեան՝ Հիւսիսային կայսրութիւն, Հարաւային կայսրութիւն: Դանկ հարստութեան հիմնադիրը՝ Լի-Անկ իր միահեծան իշխանութեան տակ կը նուաճէ (618) այս երկու մասերը:

Թ. դարէն սկսեալ Մանիոյներն ու Թաթարները յաճախ Ձինաստան կ'արշաւեն և երկար ատեն հոն կ'իշխեն:

1644էն ի վեր Մանչու Թարսար Ձին ցեղն է արդի արբող հարստութիւնը:

Արօնի. — Երեք կրօնք կայ Ձինաստանի մէջ — Կոնփուկիտասկանութիւն, Դայոսկանութիւն ու Պուսնասկանութիւն:

Ահգու. — Ձինարէնը միավանկ լեզու մըն է, ունի հազարաւոր տառեր սրոնց իւրաքանչիւրը կը ներկայացնէ մեր թուանշաններուն պէս գաղափար մը և ո՛չ թէ ձայն մը:

Ձինական արուեստներ. — Եւրոպացիներէն շատ առաջ Ձինացուց ծանօթ էին Կողմնացոյցը, Տպագրութիւնը, Վառօդն զորս չկրցին կատարելագործել իրենց սովորամոլ բնաստութեամբ: Կը շինեն ընտիր յախճապակի, ապակի, թուղթ, մետաքս և ուրիշ առարկայներ: Հնուց ի վեր Հողագործութիւնը կը քաջալերուի: Կայսրը տարին անգամ մը անձամբ հողը կ'ակօսարեկէ արօրով:

Թելալլուրիւններ. — Ո՛ր ցեղէն են Ձինացիք. — Ո՛րչափ տարուան հնուքիւն ունին. — Որով իշխեցին յայտնաբար. — Ձինաստան ե՞րբ փառքի զագաթնակէտը նստաւ. — Ե՞րբ ինկաւ Ձինաստան. — Հիւնայ ո՞ր ցեղը կը սիրէ. — Քանի՞ կրօնք կայ. — Ի՞նչ տեսակ լեզու ունին. — Ի՞նչ արուեստներ հնարած են:

* * *

Ա. Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

ԿՈՄՓՈՒԿԻՈՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ԴԱՌՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կոմփուկիտասկանութեան օրհանգստի ծնունդը. Դարուն Ն. Բ.: Ոչ թէ քարոզեց նոր վարդապետութիւն մը, այլ հին իմաստուններուն սորվեցուցածը մեկնեց: Իր գիրքերը շատ յարգի են եւ կը դասագիրք կը գործածուին:

Կոմփուկիտոս նախնեաց կեանքով ու օրինակով որդիական, անուսկան ու բարեկամական պարտականութիւնները կը շեշտէ: Կը բարոզէ սո՛հինգ տուաթնութիւնները — Մարդասիրութիւն, Արդարութիւն, Պատշաճութիւն, Ուղղութիւն ու Անկեղծութիւն: Կոմփուկիտոս աւելի կարեւորութիւն կուտար բարոյական ուժի, օրինակի ազդեցութեան ու կրթութեան, քան օրէնքի ու պատժի: Կոմփուկիտոսի գլխաւոր սկզբունքներն են Որդիական երկիրաճորդիւն, Յարգանք ձեռքու նկատմամբ ու Մեռելներու պաշտօն: Իւրաքանչիւր ընտանիք պարտաւոր է իր նախնիք յարգել ու պաշտել: Կ'ըզուշանան մուլութենէ, մի՛ գուցէ նուաստացնեն, ապականեն երեսն ծնողքէն ստացած մարմինը:


Դարականութիւնը նիւթականացած կրօնք մըն է, իր բազմաթիւ աստուածները հոգածու են մարդուն աստենական կեանքի պէտքերը գոհացնելու:



6. ՀՆԴԵԻՐՈՊԱԿԱՆ = ԱՐԻՔ



Ա. Հ Ն Դ Ի Կ Ն Ե Ր



Գ Ս Ս

Հնդիկներու դասակարգը. — Հնդիկներն ոչ թէ միայն հնագոյն ժամանակները, և հիմայ իսկ չորս գլխաւոր դասակարգի կը բաժնուին :

1. Պրահմիկներն են քուրմերը, ուսուցիչները, դատաւորները, բժիշկներն ու արքունական խորհրդականները :

2. Շարիաները՝ զինւորները, 3. Վասիաները՝ արուեստաւորները, երկրագործներն ու վաճառականները : 4. Սուտաները՝ գործաւորներն ու ծառայները :


Այս դասակարգերու միաւորութենէն կ'ելլէին զանազան պիղծ կարգեր, որոնք ամենաստորին գործերը կը կատարէին : Բարիաներն էին ամէնէն անարգները :

Հնդկաց կրօնն ու նուիրական գիրքերը. — Հնդիկներու օրէնադիրն եղած է Մանու : Հնդկաց կրօնն է աշխարհ ստեղծող ու կառավարող Բրահմայի պաշտօնը : Ետքը սկսաւ Սիւվայի = Հռոյ ու Վիշնուի = Օղի ու Զրի պաշտօնը, և վերջապէս Պրահմա, Վիշնու ու Սիւվա — իրրեւ միմիայն բարձրագոյն աստուածի մը ստեղծող, պահող ու աւերող զօրութիւններ — իրարու հետ միացան : Այս աստուածներէն զատ բազմաթիւ երկրորդ կարգի աստուածներ ալ կան :

Հնդկաց նուիրական գիրքերը՝ Վեամները Սանսկրիտ լեզուով գրուած են, և միայն առաջին երեք կարգերը կրնան զանոնք կարդալ :

Հաւատքի վարդապետութեան խարիսինն են Հոգեյաժմոքիւնն ու Վերածնութիւնը :

Պաւտայականութիւն. — Քրիստոսէ 6 դար առաջ սկաւ Պուսհայականութիւնն որ կարգերու զանազա-



Հնդկական մեհեան

նութիւնը կը մերժէ և կ'աւանդէ սեր ու ողորմութիւն ամէն արարածի նկատմամբ իրրեւ բարձրագոյն առաքելութիւն :

Պուսհայի = Իուսուսնոյն ուսումը բոլոր Հնդկաստան շուտ մը կը տարածուի : Բայց որովհետեւ ամէն մարդոց հաւասարութիւն կը քարոզէր, Պրահմիկներէն հալածանք կը կրէ և Յառաջակողմեան Հնդկաստանէն

բոլորովին կը ջնջուի : Բրիտանոնէութենէ դար մը առաջ, Պուտանայականութիւնն իբրեւ Յոյի կրօնք Չինաստան ալ կը մտնէ և հոն կ'ամփոփուի թաքսայական վարդապետութեան նետ կը խառնուի և Շառնոնաքիւնը = Մոգութիւնը կը ջնջէ : Մոնկոլիոյ ու Թիպէդի մէջ ալ կը մտնէ և մինչև այսօր Լամայութիւնն անուսով կը տեսէ :

Պրահմանութիւնը կը դաւանին Նիմայ իբր 200, իսկ Պուտանայութիւնը գրեթէ 450 միլիոն մարդիկ :

Հնդկաստան օտար իշխանութեան առկա — Մեծն Աղեքսանդր կ'արշաւէ մինչև Ինդոսի նովիար :

Մեր թուականին ժ.Ք. դարուն Մահմուտ իշխանը կը փրէ երկրին մէկ մասին :

Դիւնուսիւն = ձիակիզ Խան ժ.Գ. դարուն ու Լեւկ-Դիւնուր ժ.Գ. դարուն վերջերը Հնդկաստան կ'արշաւեն :

Լեւկ-Դիւնուրի սերնդէն Պապեր 1473ին հոն կը հիմնէ Մոնկոլ մեծ նորաստեղծիւնն որ կը տեսէ մինչև 1862 : Պապերի թուր Ագրար մեծաշէն ինքնակալը կ'երջանկացնէ ժողովուրդը : Քնիկ Հնդիկ իշխաններ = Ռաճաներ կը յաջողին երկրին քանի մը մասերուն վրայ իշխել : Մոնկոլները հետզհետէ տկարանալով՝ Անգղիայցի վերջապէս 1852ին կը սիրեն երկրին :

Թեւաղբորիւններ . Հնդիկները քանի որ դասակարգի կը բաժնուին . — Իւրաքանչիւրն ի՞նչ պաշտօն, գրադար ունի . — Ռո՞ւնի ևն Հնդիկ կրօնի գլխաւոր գիրքեր . — Ի՞նչ է Վեսալ . — Պոտնա ի՞նչ կը փարդեր . — Հնդկաստան երբ օտար ազդեցութիւն կրէ :

Ա. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ



ՀՆԴԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Վեսաները Թերեւս ամէնէն հին գրուածքն են (Բրիտանոն 2000 տարի առաջ) Հնդերոպական ցեղի գրականութեան մէջ : Յունաստանի նախկին բնակիչները Վեսաներէն ու Ռամայանայէն ներշնչուելով՝ ազգայնացողցին իրենց բանաստեղծական աւանդավէպերը :

Վեսաները հոգեւոր երգերու եւ աղօթքներու հաւաքածոյ մըն են : Մահապարտարան 250,000 տողով մեծ դիւցազներգութիւն մըն է որ կը սլատուէ Գանգաի հովիտի սիրապետութիւնը : Մահապարտարան Հնդիկ իշխանն է :

Բամայանան 48,000 տողով Հնդիկ Վարվի բանաստեղծին գործն է որ կը հռչակէ Ինդուսի ու Սեյլի սիրապետութիւնը : Ռամա է այս բանաստեղծութեան աւանդելալ հերոսը : Սանկրիթսը հին Հնդկաց լեզուն է որ իր թէ՛ բառերուն եւ թէ՛ քերականական ձեւերով Հնդերոպական նախնական լեզուին ամէնէն մօտը կը համարուի :



Բ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ



Ռ Ա Մ Ա

Հնդիկ իշխանի մը որդին էր Ռամա որ իր հօրմէն կ'աջատուէ ձգնաւորի կերպարանքով անտառներու խորքը կ'առանձնանայ իր կինը՝ հեղահամբոյր Սիդայ կ'աղաչէ ամուսնոյն ընկերանալ հակառակ Ռամայի թախանձանքներուն : Երկուքն ալ երջանիկ կ'ապրին Հնդկաստանի խորհրդաւոր անտառներուն եւ մշտադալոր ու ծաղկազարթ դաշտերուն մէջ : Բայց օր մը, երբ Ռամա որսի ելած էր, չար ոգի մը կը յափշտակէ Սիդայն Բոլոր արարածները կը վշտակցին Ռամայի : Վերջապէս կապիկներու թագաւորը կը գտնէ Սիդան Սէյլանի մէջ այն տեղն ուր սլահած էին գայն : Ռամա իր նիգակակիցներուն գլուխն անցած՝ կը յար-

Ճակի Սելանի վրայ եւ հսկայ պայքար մը կը մղէ չար ուղտին դէմ, կը յաղթէ եւ կ'ազատէ իր սիրելի Սիրանս Ռամայի առաքինութիւններն ու քաջագործութիւնները կը պատկուին իր հօր արքունիքին մէջ: Բանաստեղծը կը հռչակէ Ռամայի յաղթանակը:

*
**

Գ. Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ




Պ Ո Ւ Տ Յ Ա

Հնդեկ զօրեղ թագաւորի մը որդին էր Սաֆիանուհի որ յետոյ Պուշիա = Ինասուռն կոչուեցաւ:

Երեսուն տարեկան էր, երբ իր հօրը պալատէն կը հեռանայ եւ կ'առանձնանայ անապատը: Ժամանակէ մը ետք կ'ելլէ քարոզել իր նոր վարդապետութիւնը, Պուտհայի պերճախօս քարոզը թեամբ խումբ մը աշակերտներ կը հաւաքուին. իրեն շուրջը Մահէն ետք Պուտհայի արձանը կը կանդնեն բոլոր մեհեաններուն մէջ: Պաշտուեցաւ ոչ միայն իբրեւ աստուած, այլ իբրեւ ամէնէն մեծ իմաստունը, Պուտհայականութեան չորս մեծ ձը՝ մարտութիւններն են.

1. Յաւն անբաժան է մեր գոյութենէն:
2. Փափաքը մեր ցաւին սկզբնապատճառն է:
3. Պէտք է ջնջել փափաքը ցաւէն ազատելու համար:
4. Կայ ճամբայ մը որով կարելի է ջնջել փափաքը: Ասկայ է ամենամեծ բարին՝ Նիրվանան = Անկաջուր:




Բ. ՄԱՐԲ ԵՒ ՊԱՐՍԻԿԲ



Դ Ա Ս

Մարբ. — Ասորեստանի արձանագրութիւնները Մարբ = Մերքսիները կը յիշեն Սաղմանասար Բ. (850) Մարաստան արչաւած աստին: Մեկացիք հետզհետէ յա-



Պարսից կայսրութիւն

բարերութեան մէջ կը մտնեն Ասորեստանացոց հետ : Մարգոն՝ Ասորեստանի վեհապետը, Մարաց երկրէն մաս մը կը նուաճէ և ինչ կը հաստատէ (740 Ն. Ք.) զանազան գաղթականութիւններ որոնց մէջ էին Ասորեստանցւոց ձեռքով Սամարիոյ քաղաքէն դերեալ Իորայէլացիները :

Գիովկ. — Մարաց թագաւորութեան շինագիրը կը նամարուի Դիովկ = Դայաւեհու, որ եօթնպարիսպ Ագրասան = Եիրասան = Հաւեսան մայրաքաղաքը կը չինէ :

Ասոր յաջորդը Փրաւորդ = Փրաւարտի ցեղակից Պարսիկները կը նուաճէ :

Կիսեսար. — Բայց ամէնէն չգոր թագաւորն եղաւ Կիսեսար = Նուրիշ-Շասարա որ Սկիւթացի Կիմիրեաններու յաղթելէն ետք, Նինուէն կործանեց (606) : Իր յաջորդ Աժդահակի = Իշտարիզայի ատեն երկիրը Պարսկական նահանգ դարձաւ (538) :

Պարսիկներն ու Կիւրոս. — Պարսիկներն իրենց ա-

նունով կոչուած ծոցին հիւսիսային կողմը մշակութեամբ ու արվեստով եւսուցանուած կ'ազդէին : Երկար ատեն ցեղակից Մարաց իշխանութեան տակ մնալէ ետք, 2. Դարուն կէսերը զօրաւոր ակրութիւն մը կը շինեն որ քիչ ատենէն կը սարքածուի Ինդոս գետէն մինչեւ Ե-



Պարսիկ պատերազմիկներ

գէական ծով : Կիւրոս = Կարուշ Աքիմենէս = Հախամենի

Մարերը կը նուաճէ Բաւարգասի քով (555) : Կ'աշխարհակալէ Բակտրիան, կը յաղթէ (549) Լիւդիոյ թագաւոր Կրեսուսի, կը նպատակեցնէ Յունական գաղթականութիւնները, կ'առնէ (547) Բաբելոնն և Հրեայներուն 70ամեայ գերութեան վերջ կու տայ : Կ'աւանդեն թէ մեռաւ Մագդոններուն դէմ բրած պատերազմին մէջ :

Կամբիւս. — Կիւրոսի որդին ու յաջորդը՝ Կամբիւս = Կամբուշիս Եգիպտոսը 525ին Պարսկական նահանգ կ'ընէ. Շմերդ (ըստ Պարսից Բարշահ) եղբայրը նախանձէն կը սպաննէ ու կը մեռնի Եգիպտոսէն դարձած տանն :

Դարեհ Ա. Վշտասպետ. — Սուտ Շմերդի սպաննուելէն ետքը Վշտասպետայ Դարեհ = Դարամախանու գահ կը բարձրանայ (521-485) : Կը նուաճէ ապստամբ Բաբելոնը (513) : Սկիւթացւոց դէմ բրած անյաջող արշաւանքովը հարկատու կ'ընէ Թրակիան ու Մակեդոնիան : Փոքր Ասիոյ Յունաց ապստամբութիւնը պատճառ կ'ըլլայ Մարական = Յոյն և Պարսկական պատերազմներուն : Դարեհ կը մղէ Մարսրոնի ճակատամարտը (490) :



Դարեհ Վշտասպետ

Բակրեսու Ա. — Բակրեսու = Աշարճարշա (485-465) չօրը Յունաց դէմ սկսած դժբախտ պատերազմը նոյն անյաջողութեամբ կը շարունակէ : Անճամար կորուստներ կ'ունենայ 480ին Սալամինէի և 479 Պլատիայի քով : Կը սպաննուի բռնաւորական կառավարութենէ մը ետք :

Քաներձախ յազորդները. — Արսաշէս = Արսախշարարս երկայնաքաղով (465-424) իր կեանքն կ'անցընէ Յունաց ու ապստամբ նախարարներու հետ կուսելով :

Դարեն Բ. ի ժամանակ (424-405) արքունիքի անգթութիւնները շատցան, և նախարարներու ապստամբութիւնները յաճախեցին : Ժողովուրդը շուայութեան ու զեղխութեան ենթարկեցաւ :

Արսաշէս Բ. Ուշեղի (405-362) դէմ կ'ելլէ իր եղբայրը Կիւրոս Յոյն վարձկան զինուորներով. բայց Կուսախայի ճակատանարսին մէջ (401) կ'իյնայ : Յոյներն Հայաստանի լեռները թափառելէ ետք, իրենց երկիրը կը դառնան :

Անգութ Արսաշէս Գ. Ոստու (362-338) Փիւնիկէն ու Եգիպտոսը նորէն կը նուաճէ :

Դարեն Կողոմանոս (336-334) ի զուր կ'աշխատի ինկած պետութիւնը փրկելու : Աղեփսանգը մեծ Մակեդոնացի Գրանիկի (334), Իսոսի (333) ու Արքելայի (331) ճակատամարտերուն մէջ Պարսկական պետութիւնն իրեն կը հպատակեցնէ : Յետոյ Պարթեք կ'իշխեն Պարսկաստանի :

Պարսից նուիրական զիրէր. — Արիական ցեղեր կը բնակէին արդի Երաննան լեռնադաշտին մէջ : Այդ Արիական ցեղերն իրենց Զենդ-Աւեստա նուիրական գրքին մէջ Զանդիկ կը կոչուին :

Զենդ-Աւեստան ժ. Գ. դարուն (ե. Բ.) մէջերը Բակարիոյ մէջ ապրող Զրադաշի = Զարաթուստրայի վարդապետութիւնը կը պարունակէ : Զենդ-Աւեստա կ'աւանդէ թէ Ուրմիզը = Ահուրամազդան «Ամենագէտ»ը կը թագաւորէ լոյսի մէջ իբրև արարիչ ախեղերքի և պատգամաւոր ամէն բարիքի : Իրեն հետ անընդհատ պատեռագմի մէջ է Ահրիման = Արիմն չարակէ՛ մթու-

թեան ու չարիքի աստուածը : Աս նց ստորակարգեալ են բարի ու չար ոգիներ, որոնք նոյնպէս իրարու հետ շարունակեալ պատերազմի մէջ են, մինչեւ որ Ուրմիզը Ահրիմանին յաղթէ : Մարդ պարտաւոր է Ուրմիզի արքայութիւնն ընդարձակել և հուրն իբրև մաքրութեան նշան պաշտել՝ վաստակար անասունները նշեցով, ծառեր անկելով ու դաշտերը մշակելով :

Բարբ ու վարճ. — Պարսիկներն արդէն Կիւրոսի օրով Մարական կրթութիւն ու շուայութիւն ընդունած էին : Փառաւոր արքունիքը կը պահէին գաւառներէն եկած հարկերով : Բարեղոն, Եկրասսն ու Շօշ արքայանիստ քաղաքներ էին. Պերսեպոլիս թագաւորներուն գերեզմանատեղին էր :

Դարեն պետութիւնը 22 նախարարութեան = Սասրապոթեան կը բաժնէ :

Նախարարներն որ ի սկզբան գաւառներու քաղաքախան կուսակալներն էին հետզհետէ զինուորական իշխանութիւնն ալ կ'ստանձնեն և անկախութիւն կը վայելեն : Սատրապները հարկերն արքունիք կը վրկէին. տեղական զօրաբանակին զօրապետին հետ երկրին յառաջդիմութեան և հասարակաց ապահովութեան պատասխանատու էին :

Պարսից բանակը կը բաժնուէր սասնեակներու, հարիւրեակներու և հազարեակներու : Ամէն հպատակ պարսական էր պատերազմի ծառայութեան մտնելու :

Թելադրութիւններ. — Ե՛րբ կը յիշուին Մարթ. — Մարզն ի՛նչ ըրաւ Մարասանի սեք. — Որո՛նք են Մարաց քաղաքներն ու ինչե՛ր ըրին. — Ուր կը բնակէին Պարսիկները. — Ո՞վ եղած է քաղաքաբնակ իրանա-

դիրը. — Կախարչու ինչ աշխարհակառքիակներ ըրաւ. — Դարեհ Վշասպեայ ո՞ր երկիրներուն շիրեց. — Քսերֆսեա ո՞ւր յաղբուեցաւ. — Երկայնաքաղաղին ի՞նչպէս աւնցուց իր կեանքը. — Դարեհ Բ. — Արսաշիս Ուշե՞ղը. — Ոքո՞ւր. — Ե՞րբ ինկաւ Պարսկաստան. — Ո՞րն է Պարսից կռիւրակաւ գիրքը. — Ի՞նչ էր Պարսից կրօնքը. — Ո՞րպիսի բարձր ու վարձ ունեցի. — Երկիրն ի՞նչպէս կազմակերպուած էր:

Ա. Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

ՄԱՐԱՑ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մարտի 1-ին Երևանի քաղաքի քաղաքացիները և քաղաքացիները իր տանուտէրն ունէր: Ասորեստանցիք երբեմն ասոնց դէմ պատերազմելով՝ յաջողած էին մասամբ մը նուաճել: Այս ցեղերուն մէկուն տանուտէրը՝ Դիոնի բարձր Մարաց թագաւոր կ'ըլլայ 700 թուին Ն. Ք.: Կը պատմուի թէ Մարաց ուրիշ թագաւոր մը՝ Փրաւորդ ամբողջ Երանեան լեռնադաշտը նուաճելէ ետք, կ'արշաւէ Ասորեստանի վրայ, բայց կը սպաննուի (625) հոն:

Սկիւրացի Կիւրերեաններն որ պատերազմիկ ու թափառական հեծեալներ էին, Կովկաս լեռներէն իջնելով՝ տարիներէ ի վեր շարունակ կ'արշաւէին ամէն կողմ, մինչեւ Փոքր Ասիա: Արդի թիւրքմէներու անապատը բնակող Կիւրերեաններու ցեղակից Սաղաւաքի ալ կը յարձակին Մարաց վրայ: Վերջուպէս այս վայրերն հրոսակները կ'արշաւեն ամէն կողմ եւ կ'արշաւեն Ասորեստանէն մինչեւ Սուէզի ջրանցքը: Եգիպտոսի թագաւորը՝ Պտղեմիոսը ծանրադին ընծայներով ետ գարծնէ զանոնք:

Սոկոյն Սկիւթացաց տիրապետութիւնն Ասիոյ վրայ երկար չի տեսեր: Կ'ը են թէ Փրաւորդի յաջորդ Կիւրքար ասոնց պետերը խնձորի կը հրաւիրէ եւ գինովցնելով՝ ամենքն ալ կը ջարդէ:

Մարք հեալհետէ կը զօրանան, մանաւանդ որ Սկիւթացիք տկարացուցած էին Ասորեստանի պետութիւնը

Կիւրքար Բաբելոնի Նաբոպալասար թագաւորին հետ դաշնակցելով՝ իր ազջիկն անոր Նաբոպոլոնոսոր որդւոյն կնութեան կու տայ եւ բոլորովին կը կործոնէ ու կ'աւերէ Ասորեստանը: Անկէ կը յառաջանայ Փոքր Ասիա եւ հոն կը ձախտամարտի Լիւդիոյ Կրեսոս թագաւորին հետ: ձախտամարտի պահուն արեւակին խաւարում պատահելով (585) թշնամութիւնները կը դադարեն եւ երկու կողմն ալ զարհուրած՝ կը հաշտուին: Լիւդիոյ թագաւորն իր ազջիկը կու տայ Կիւրքարին եւ երկու թագաւորներն իրենց թեւերը թեթեւապէս վերաւորելով՝ իրարու արեւը կը լցեն ի նշան տեսական բարեկամութեան: Հայիս դետը սահման եղաւ երկու պետութեանց:

Կիւրքարի աշխարհակալութեան կենսակերպի Պարսկաստանն ալ որուն բնիկ իշխանները կը նստէին Պարսկաստանցիք քաղաքները նաեւ Նոշ քաղաքը՝ Պարսից թագաւոր տիրապետը կը կրեն: Պարսիկները մինչեւ այդ ատեն լեռնցի պարզ կեանք մը կը վարէին ու արիասիրտ էին: Կամբելիս որդին Կիւրքար Մարաց կը վարէին ու արիասիրտ դէմ կ'ապստամբէ: Զայն կը բռնէ, Երբ Աթաշակ թագաւորին դէմ կ'ապստամբէ: Զայն կը բռնէ, Երբ Աթաշակ թագաւորին պետութեան թագաւոր կը հռչակուի:

Բ. Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

ՓՈՔՐ ԱՍԻՈՅ ԹԵՐԱԿՂԶԻՆ

Փոքր Ասիոյ մէջ կը բնակէին բազմաթիւ ցեղեր: Ասոնք երկու գլխաւոր թուրք կը կազմէին: Ա. Հարաւն ու արեւելքը կը բնակէին Սիւսական ժողովուրդներ, ինչպէս՝ Կապադովկիացիք, Կիլիկիացիք ու Պաղիկիացիք:

Բ. Արեւմուտքն ու Հիւսիսը ցրուած էին Արեւական ցեղեր որ ցեղագրական նեղ աղբյուր մը ունէին Թրակիացիներուն ու Մակեդոնացիներուն հետ: Ասոնք էին Միւսացիք, Բիւրանացիք, Պափլագոնացիք եւ մանաւանդ Փոլիկացիք որոնց պատմութիւնը թիւ ծանօթ է: Միայն գիտենք թէ Փուլիկացիք մեծ ժողովուրդ մըն էին եւ ունէին ծաղկեալ քաղաքակրթութիւն մը ուրիշ ազ-

գուեցան Յոյներն ալ: Փաււագեան քաղաքակրթութեան յիշատակը պահուած է Փաււագիոյ իշխաններէն Միղասի առասպելին մէջ:

Փոքր Ասիոյ ամէնէն զօրուոր թագաւորն էր Լիւդացոցն սրոնց Երկիրը կ'առուգուէր Մեակիր ու Նիւնոս գետերէն: Սարդիկէ էր իր ստանը. արգաւանդ հովտի մը մէջ հոյսկիպ քաղաք մը Պակթորիս գետովը քաղաքին քովէն կ'անցնէր որ կը բերէր ոսկեխառն աւաղ, ինչպէս կ'աւանդէին Լիւդացիք էին որ առաջիկ ակգաւ գործածեցին ոսկեղրամբ:

Երկարատեւ պայքարներէ ետք Լիւդացոց թագաւորները կը յաջողին տիրել Փոքր Ասիոյ Արեւմտեան մասին՝ Նախս գետէն մինչեւ Էջիւսն ծով = Արքիպեղազոս

Լիւդիոյ թագաւորներուն մէջ նշանաւոր եղաւ Կրեսոս որ գահը կը բարձրանայ 559ին (Ն. Ք.):

Նոս հարուստ էր եւ իբրեւ այս հուշակուած էր: Իր հարստութիւնն աւաճի կորդ. անցած է «Կրեսոսի պիս հարուստ» Յունաստանէն յաճախ Սարդիկէ կ'այցելէին մեծափառքով կրեանսին փառքը տեսնելու: Այս այցելուներուն մէջ նշանաւոր է Սողոն:

*
* *

Գ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

ԼԻԻԴՈՅ ԿՐԵՍՈՍ ԹԱԳԱՒՈՐԸ

Կրեսոս պատերազմի ելքին նկատմամբ հարցում մը ուղղած էր Դելփիսի: Ասիկա պատասխանած էր թէ «Կրեսոս Պարսից հետ պատերազմելով՝ մեծ տէրութիւն մը պիտի կործանէ»: Կրեսոս դարձեալ հարցուց թէ «Իր սխտուութիւնն երկար պիտի տեւէ»: պատասխանեցին թէ «Նըք ջորի մը թագաւոր ըլլայ Մարաց, ո՞վ մեզի Լիւդացի, փախիր չեմոս գետին եղերքը եւ մի՛ փորձե՛ր դիմադրել»: Կրեսոս այդ խօսքերը նպաստաւոր կը կարծէ իր տէրութեան համար: Առանց սպասելու իր դաշնակիցներուն որ պիտի համաձայնէին Կիւրոսի դէմ, առաջին անգամ ինք կը յարձակի Պարսից բանակին վրայ ձմիկատամբարն անորոշ կը մնայ Պար-


սիկներն անշարժ կը կենան: Կրեսոս կարծելով թէ մտառհաս ձմբռան պատճառաւ անոնք պիտի ընկրկին, ետ կը դառնայ: Կիւրոս կ'անցնի Նախսն եւ կը մտնէ Լիւդիա: Կրեսոս նորէն կը դիմադրէ եւ իր ձիւառորներուն կանոնաւոր բանակով երկիւղ կ'ազդէ Պարսից: Կիւրոս խորամանկ միջոց մը կը գտնէ, իր բեռնաբարձ ուղտերուն վրայ զօրք կը հեծցնէ եւ յառաջապահ գծին վրայ կը յարձակի Լիւդիացոց ձիերն երբեք ուղտ տեսած չէին եւ խրտչելով՝ ետ կը դառնան: Կրեսոս կը փախչի եւ կ'ապաստանի Սարդիկէի միջնաբերդն որ անառիկ կը կարծուէր: Պարսիկները ներս մտնելու հնարք մը կը փնտռէին: Բերդին ամէնէն ուղղաբերձ ժայռերուն կողմն որ անմատչելի էր՝ պահակ չէր դրուած:

Յո մը այն կողմէն Լիւդացի մը կ'անցնէր, ասոր սաղաւարտը գլխէն կ'իյնայ Մարդը սեպ ժայռին վրայէն անմիջապէս կ'իջնէ եւ զայն ձեռքն առած, մաւրցելով վեր կ'ելլէ: Պարսիկ զինւոր մը՝ Նիւրկադիս որ տեսած էր այս Լիւդիացոյն էջքն ու ելքը՝ հետեւեալ օրը խուճբ մը ընկերներով կը փորձէ միեւնոյն կողմէն բերդը մտնելու եւ կը յաջողի Միջնաբերդը յանկարծ կ'առնուի:

Կրեսոս թագաւորը կը բռնուի եւ երկու անգամ մահէ կ'ազատի հետեւեալ պարագայներուն մէջ: Կրեսոս զաւակ մը ունէր որ համբ էր: Զայն բուժելու ամէն ջանք անօգուտ եղած էր: Պարսիկ զինուոր մը, Սարդիկէի գրաւման օրը, առանց Կրեսոսը ձանձնալու երբ պիտի սպաննէր զայն, մանուկ իշխանակունն ա՛յնքան սաստկայոյզ ձիգ մը ըրաւ խօսելու որ լեզուն բացուեցաւ ու գոչեց. «Կրեսոսն է, գորակա՛ն, մի՛ սպաններ Կրեսոսը»: Այսպէս Կրեսոս մահուընէ կ'ազատի եւ կը տարուի Կիւրոս թագաւորին որ կը դատաւարտէ զայն ողջ ողջ խորոյկին վրայ այրելու: Նրբ Կրեսոս տեսաւ բոցերը, աղաւակեց. «Սողո՛ն, Սողո՛ն, Սողո՛ն, գեղեցիկ խօսեցար»: Կիւրոս զարմացած՝ հարցուց այս բառերուն իմաստը Կրեսոս պատմեց թէ այն օրն ուր իր ամբալ դանձերը ցոյց տալով՝ ինքզինք աշխարհիս երջանկաւայն անձը կը համարէր՝ Սողոն անուն իմաստունն ըսած էր թէ կարելի չէ՛ գիտնալ թէ մարդ երջանիկ է՞ իր մահէն առաջ:

Կիւրոս այս խօսքերուն վրայ խորհրդածելով՝ Կիւրոսի կեանքը կը շնորհէ ու անոր բարեկամ կ'ըլլայ: Կրեւելի թէ Կրեսոս սիւալ մեկնած էր Դելփիսի պատգամին պատասխանը, որովհետեւ պետութիւնն որ պիտի կործանէր՝ Լիւդիական էր:

ւորեն: Ասոնց մէջն էր Տոմուրիսի որդին: Երիտասարդը սթափելով եւ ինքզինք կապուած գտնելով՝ չհանդուփեց գերութեան եւ ինքնասպան եղաւ: Այն ատեն Տոմուրիս յուսահատած՝ յարձակեցաւ Պարսից վրայ: Կռիւը կատաղի եղաւ. Կիւրոս սպաննուեցաւ եւ բանակը ցրուեցաւ: Թուրքուհին գտնել տալով Կիւրոսի դիակը գլուխը կտրեց եւ զայն ընկղմեց մարդկային արիւնով լեցուած ամանի մը մէջ ըսելով. «Բանի որ ծարուռի ես, կըլտացիր»:



Կիւրոսի գերեզմանը

պալատին սարսփէլը, փսթրիկ դամբարանի մը մէջ: Սիւն մը գտնուած է որուն վրայ քառաթեւ անձ մը կը ներկայացուի գլխուն վրայ եգիպտոսի թագաւորներուն նշանակն եւ սա՛ սորձանագրութիւնը. «Ես եմ արքայն Կիւրոս Աքիմինեան»:

* *

Է. Ը Ն Փ Ե Ր Յ Ո Ւ Մ

Վ Ա Մ Բ Ի Ւ Ս

Կրեոսի կը յաջորդէ իր որդին Կամբիւս: Կիւրոս քանի մը նահանգներու իշխանութիւնը յանձնած էր Շմերդ (Պորուկերէն Բարսիւն) անունով իր միւս որդւոյն, որուն դէմ Կամբիւս գրգռուած էր նախանձով: Իր թագաւորութեան առաջին գործը կ'ըլլայ գաղտնապէս սպաննել տալ Շմերդը: Կամբիւսի իշխանութեան գլխաւոր դէպքն եղաւ եգիպտոսը նուաճել (525 Ն. Գ.)¹ չոն շատ անգթութեամբ կը վարուի: Բունի թոյն կը խոցնէ

եգիպտոսի թագաւորին ու ժողովուրդին զգացումները կը վիրաւորէ: Այլիս ցուր դաշոյնով զարնել տալով: Կամբիւս նոյնպէս նետահար կ'սպաննէ պալատականի մը որդին, որուն հօրմէն լած էր հասարակաց մեղադրանքն իր չափազանց արբեցութեան համար: Կամբիւս խենդ, քմահաճ, կամապաշտ, գինեմոլ ու արեւնարբու մէկն էր. ոչ միայն եղբայրն սպաննել կու տայ, այլ եւ զոյրն ու շատ մը աւագանի: Տասներկու ազնուատոհմ Պարսիկներ կը թաղէ ողջ ողջ: Լիւրիոյ գերեալ թագաւորը Կրեոս որ իր արքունիքի մէջ կ'ապրէր՝ դիտողութիւն ընել ուզեց: Կամբիւս նետ մը կ'ուղղէ անոր դէմ, բայց նետը կը վրիպի. այն ատեն կը հրամայէ որ սպաննեն զայն: Ծառայները գիտնալով իրենց տիրոջ ալլանդակ բնաւորութիւնը՝ ողջ կը պահեն Կրեոսը եւ երբ Կամբիւսի բարկութիւնն կ'սնցնի ու կը զղջայ, յայտնեցին թէ Կրեոսն ողջ է: Կամբիւս կ'ուրախանայ, բայց ծառայները սպաննել կու տայ իբրև անհնազանդ:

Կամբիւս եգիպտոսէն դարձին, երբ Ասորիքի անապատէն կ'անցնէր, Պարսկաստանէն պատգամաւոր մը գալով՝ կը յայտնէ թէ Շմերդը թագաւոր հրատարակուած՝ կը հրամայէ որ բանակն ալլուէ չհաղանդի Կամբիւսին: Կամբիւս նախ կը կարծէ թէ Պրիֆաւայ իշխանն որուն յանձնարարած էր սպաննել եղբայրը Շմերդը՝ զինք խաբած է. Սակայն Պրիֆաւայ կը վստահեցնէ թէ մեռած է: Կամբիւս անձամբ Պարսկաստան կ'երթայ զպեղու սուտ եղբայրը, սակայն ձամբայն կը մեռնի: Սուտ Շմերդն որ շատ կը նմանէր բուն Շմերդին՝ գահ կը բարձրանայ: Բայց հետզհետէ իր խաբեբայութիւնը կը յայտնուի: Շմերդ մոգը Կամբիւսի կիները կ'իւրացնէ: Ասոնց մէկն որ մեծ իշխանի մը դուստրն էր՝ իր հօրն իմացուց թէ կարծեցեալ Շմերդն ականջ չունէր՝ որովհետեւ ոճրագործութեան մը պատճառաւ մոգին սկանջներն կտրուած էին: Աքիմինեան արքայական ընտանիքէն Իսթեի վ. Եսասպեայ իշխանը Պարսից վեց մեծ իշխաններու հետ միացած՝ որ մը յանկարծ պալատ կը մտնէ եւ սկանջատ կեղծ Շմերդին՝ Գուլամիլիպիսին ու եղբորը գլուխները կը կտրէ (521) եւ գահը կը բարձրանայ: Ժողովուրդը մոգերուն այս խորդախուսութեան վրայ զայրացած՝ կը թաղէ գահնաճ: Այդ օրուան տարեթեան կը տօնէին Կոսրոսի մոգոց անունով: Այդ օրը մոգերը դուրս չէին ելլեր:

* *

Բ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Դ Ա Ր Ե Ն Վ Շ Տ Ա Ս Պ Ե Ա Յ

Դարե՛հ Ա. որ՝ գահ բարձրացաւ 521 թուին (Ն. Ք.) Պարսկի վեհապետներու մէջ Կիւրոսէն ետք ամէնէն մեծն էր: Ասիկա կէ կատարելագործէ Կիւրոսի ձեռնարկները: Կիւրոս իր յաղթութիւններով կը հիմնէ պետութիւնը, Դարեհ ալ կը կազմակերպէ զայն Բաղաքական այն մասնաւոր գրութիւնն ու կազմակերպութիւնն որ երկու դարու չափ ծաղկեալ վեճակի մէջ պահեց Պարսկաստանը՝ Դարեհի շնորհիւ հաստատուած էր:

Դարեհի առաջին գործն եղաւ ապստամբութիւնները զըսպել: Մարտտանի մէջ ալ թագաւոր հրատարակուած էր Փրաւորդ, որուն կուսակից էին Արտաշախի ու Ասորհասաւ: Դարեհ կը բռնէ Փրաւորդն եւ կը սպաննէ: Բաբելոնցիք նորէն ստքի կ'երկն եւ իրենց թագաւոր կը կարգին կեղծ՝ Նաբոզոդոնոսոր մը որ Արտաշախի էր Արախ=Արաք անուամբ: Դարեհ զայն ալ կը բռնէ, կ'սպաննէ եւ երկիրը կը հնազանդեցնէ:

Բաբելոնցիք պաշարները ինսյոզութեամբ գործածելու համար՝ իրենց մտրերէն ու խոհարարութիւններէն զատ՝ բոլոր կիները կը սպաննեն ու քաղաքին մէջ կը փակուին: Պաշարումը կը տեւէ 19 ամիս: Դարեհ կը զայրանայ իր անյաջողութեանը համար: Սուտ մեղքին դէմ դաւադրող մեծ իշխաններէն մէկուն որդին Զրապիշտա՛ թիթն ու սկանչները կտրած եւ գլուխն ամիլած, արեւնաճաթակս վեճակի մէջ կը ներկայանայ Բաբելոնացոց՝ իբրեւ Դարեհէն պատժուած փախստական: Բաբելոնցիք ազնուատոհմ երիտասարդին ալք վեճակը տեսնելով՝ ներս կ'ընդունին զայն եւ գունդի մը հրամանատար կը կարգեն: Զոպիւրոս վտահոթութիւն վայելելու համար՝ երկու, երեք անգամ կը յարձակի Պարսից վրայ եւ անոնց բաւական ջարդ ալ կու տա: Յետոյ ամբողջ Բաբելոնի բանակին հրամանատար կը կարգուի: Զոպիւրոս յարմար առիթ գտնելով՝ քաղքին դռները կը բանայ Պարսից որ ներս կը մտնեն: Դարեհ Բաբելոնացոց երեւելիներէն 3000 հոգի խաչ էր հանէ եւ Բաբելոնի կառավարիչ կը կարգէ Զոպիւրոսը զոր Կիւրոսէն ետք ամէնէն պերազանց մարդը կը նկատէին:

Դարեհ իր յաղթութիւնները կ'արձանագրէ 456 մեդր բարձ-

ըութեամբ Պիկեսուքի ժայռին վրայ: Պիեսստուն կը գտնուէ Քիրմանշահի հիւսիսային կողմը Բաբելոն - Եկբատան ճամբուն վրայ: Ժայռը ճոխաբանդակ է. գլխաւոր հարթաքանդակը կը ներկայացնէ Դարեհի պատկերը՝ գլուխը խոյր, ձեռքն աղեղ, սարերը՝ պետինը պառկած մարդու մը վրայ: Ինք ձերբակալուածներ, իրարու ետեւ լիզերնին շղթայակապ՝ Դարեհի առջեւ կը բերեն: Ասոնք են այն ապրտամբ պետերը զոր Դարեհ նուաճած էր: Իւրաքանչիւրին վրայ արձանագրուած է իր անունը:

* * *

Բ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Անշուշտ Պարսիկներն ունեցած են ընդարձակ գրականութիւն մը, բայց ամենաբոյզն նշխարները մնացած են մեզի: Երանեան ցեղի գրական ամէնէն հին յիշատակարանն է Զենդ Աւեստա՝ հաւաքածոյն որ կը պարունակէ Պարսից սրբազան մատենաները: Իրենց կրօնական մեծ օրէնագիրը՝ Զրադաշտ շարադած է այդ մատենանը: Պարսկական հին բանաստեղծութեան վրայ կրնանք բաղափար կազմել Շահնամի անուն դիւցազնիւրդութենէն զոր բարձ է Սիրուսի՝ Պարսկաստանի ամենամեծ բանաստեղծը Ժ. Դարու կիսուն (Յ. Ք.): Այս փառաւոր քերթուածը թէեւ Պարսից փայլուն ժամակէն շատ ետքը գրուած է վառ երեւակայութեամբ, բայց երգերու եւ վէպերու հին աւանդութեանց վրայ հիմնուած ըլլալով՝ մեծ արժէք ունի:

* * *

Բ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մանուկներն իրենց առաջին հինգ տարիները մօրերնուն բով կ'անցնէին. այնուհետեւ պարտաւոր էին արշալոյսէն առաջ

եւելե եւ իրենց տարեկից ընկերներուն հետ վազեւ, նեա, նիգակ, պարստտիկ ու քար նետեւ ու արշաւեւ: Երբ 7 տարեկան կ'ըլլալին, պետական մարզիչներու առաջնորդութեամբ կը վարժուէին սրտորութեան ու ճիւղարժութեան, սաստիկ տաքի, ցուրտի ու անօթութեան: Այս մարմնամարզութիւնն որուն նախտակն էր լաւ զինւորներ պատրաստել՝ կը տեւէր 15 տարի: Այնուհետեւ Պարսիկ պատանին կը զինւորագրուէր:

Բարոյական կրթութեան ալ հոգ կը տանէին. կը սորվէին գիւցաղներգութիւններ, կը մշակէին կրօնական ու բարոյական գիտելիքներ, կը սորվէին մանաւանդ շիտակ մարդ, ճշմարտախօս ըլլալ:

*
**

ԳԱ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ



ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՈՒ ԱՐՈՒԵՍՆԵՐ

Թէեւ Պարսիկները ճարտարապետութիւնն Ատրեստանցիներէն ու Բաբելոնցիներէն սորվեցան, բայց ուրոյն դրոշմ մը տուին անոր: Անոնց պէս փոխանակ պարզ շինուածանիւթ գործածելու՝ իրենց շէնքերը կը կառուցանէին քարով ու մարմարինով: Պարսից հոյակապ շէնքերն էին ճոխաքանդակ սանդուխներով, մարմարեայ սիւնազարդ դահլիճներով պարսկերը, նաեւ դարձաբաններն որոնց մնացորդները կը տեսնուին Եկրատսն, Շօշ ու Պերսեպոլիս: Չունէին հոյակ մեհնաններ, որովհետեւ իրենց պաշտամունքները լեռներու բարձունքը կը կատարէին: Տարազագործութեան մէջ չզարգացան, որովհետեւ իրենց նուաճած երկիրները կը հոգային այդ պէտքը: Գիտութիւնն ալ չմշակեցին, որովհետեւ համբերատար աշխատութեան ու հեաազօտութեան յորդկունն էին:

Կը գործածէին պարզ քիւտազիրներ:

Փրանսացի հնախօսներէն Մորկան եւ Տեր ու Տիկիեմ²Տիեօրաֆոյի պեղումներ կատարեցին Շօշ ու Պերսեպոլիս:

*
**

ԳՐ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

ՊԱՐՍԻԿ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Պարսկաստան բազմաթիւ երկիրներու տիրապետած ըլլալով՝ կառավարելու մասին ունի յառաջացած էր, քան ուրիշ Արեւելեան պետութիւններ: Թագաւորութեանց թոյլ կապակցութիւն մը չէր, այլ իրապէս կայսերական պետութիւն մը: Ընդհ. առմամբ կառավարութիւնը չափաւորուած էր, եւ նախնի աշխարհակալ պետութեանց ամէնէն լաւն ու ամէնէն պիտուականն էր: Ինիկ հարկատու թագաւորութիւնները ջնջելով՝ Գարհն պետութիւնը բաժնեց քսան երեք Սասրապուրեանց, այսինքն՝ Կուսակալութեանց որոնց իւրաքանչիւրը կը կառավարուէր Սասրապ—Խշասրապս կոչուած Պարսիկ պաշտօնատարի մը ձեռքով: Իւրաքանչիւր Սատրապութիւն ունէր Սասրապ մը, Զինուորական հրամանատար մը ու խորհրդական ֆարսուզար մը: Այս երեք բարձրաստիճան իշխանութիւնները դժուարու կրնային իրարու համաձայնիլ եւ բաժնուիլ տէրութեան ամբողջութենէն, մանաւանդ որ Արաքից արաքի մեծ բանակով կը զըկէր հսն ուր ըննութիւն մը անհրաժեշտ կը համարուէր: Քիստոս հարկապահանջութեանց տեղ տուքի միօրինակ չափ մը սրտուած էին, արքունի ուղիներ շինուած եւ կանոնաւոր թղթատարութիւն մը հաստատուած էր որով նահանգային դէպքերը փութով կը հազորդուէին Արքունիքը: Պարսկական իշխանութիւնն երեք կեդրոն ունէր այն ատեն. — Շօշ թագաւորին գարնան բնակավայրը, Եկրատսն՝ ամառանոցն եւ Բաբելոն՝ ձմեռնային օթեանը:

Գարհն իրեն հպատակալ զանազան ազգերն սպաստ կը թողաւ իրենց սովորութեանց, լեզուին, կրօնին եւ օրէնքին մէջ. միայն թէ Պարսիկ պահակազօրք կը դնէ հոն: Կուսակալութիւններն ընդարձակ երկիրներ էին: Զորքինակ՝ ամբողջ Փոքր Ասիան որսասարքեանց բաժնուած էր: Եգիպտոս, Ատրիք, Շօշ, Սատրաստան եւլն. զատ զատ էին: Սատրապներն արքունի ընտանիքներէ կ'ընտրուէին, քիչ անգամ ալ՝ երկրին հին իշխաններէն: Պարսից վեհապետը կանոնաւոր թղթակցութիւն ունէր Սատրապներու խորհրդական քորտուղարին հետ: Նամակ մը Եփեսոսէն

Միջերկրականի եզերքը մինչև 602 մայրաքաղաքը 93 օրէն կը համէր: Ամէն օթեւանի մէջ կային յատուկ հանգրուաններ՝ գերվանսերայ ուր ճամբորդները կ'իջեանէին ճրիաբար: Զինուորներու փոխադրութեան համար արհուկի նաւապետ շինուած էին: Սատրապուկեանց միճակը շուտով տեղեկանալու համար՝ կանոնաւոր թղթակցութիւն մը հաստատուած էր:

Հպատակ ազգերը տառուէ տարի կը զրկէին ոսկի, արծաթ եւ արժէքուոր նիւթեր: Լիւզիա ու Մեոսիա 300 տաղանդ ար-



ՓՈՒՆԻԵԱՆ ԳԱՆՈՒՐՆԵՐ ԺԳ ՂԱՂԵՐ



ՊԱՐՏԻԱ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ [Զ. ՂԱՂԵՐ]



ՅՈՅՆ ԳԱՆՈՒՐՆԵՐ [Ժ. Զ. ՂԱՂԵՐ]



ԱՂԵՐՍԱՆԻՐԻ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆ



ՀՌՈՍ. ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՀՈՆ ՄԵՑ
ԱՇՄԱՐԶԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ
ԲՈՒՐ ՈՂԵՏ ԲԱՂՎԱՏՈՒԱՑ

ծաթ կը վճարէին, Սիրիա, Փիւնիկէ, եւ Կիպրոս՝ 350 տաղանդ: Հայք՝ 300, 602՝ 300 եււն: Գուամարը կ'ըլլայ 9880 տաղանդ արծաթ ար արգէի 663 միլիոն ֆրոնքն ըսել է: Ոմանք բնական բերք ալ կը տային: — Եգիպտոս՝ 120,000 չափ ցորեն, Կիլիկիա՝ 360 ձերմակ ձի, Մարասաան՝ 100,000 ոչխար, 3,000 ձի եւ 4,000 ջորի, Հայք՝ 30,000 մտրուկ, Եթովպացիք երկու՝ չափ զուտ ոսկի՝ 200 կոճղ եքենոս, 20 փղտամբ եւ 5 պատանեակ: Կովկասեան սողեքը 5 տարին անգամ մը 100 պատանի եւ 100 աղջիկ կը զրկէին: Արաքները՝ 1000 տաղանդ խոնկ կը տային: Թագաւորին պատահին մէջ ոսկին ու արծաթը կոյտ կոյտ դիզուած էին: Գարեհ սկի գրամ ալ դրոշմել տուած էր: Պարսիկ թագաւորն աշխարհի

բոլոր վեհապետներուն ամէնէն հզօրն եւ ամէնէն հարուստն էր եւ կը կոչուէր Արխայից արխայ=Մեծ Արխայ: Իր Պալատն աշխարհ մըն էր անհամար պալատականներով, կիներով, մանկաւակներով, ծառայներով եւ հիւրերով լեցուն: Իր ուտելիքի, զարդեղէնի, անուշահոտութեանց եւ բոլոր հաճոյքի համար ամէն հաղուսագիւտ բաներն ունէր իր տրամադրութեան տակ:

* * *

Ժ. Գ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Կ Ր Օ Ն Ք

Պարսիկներն ունէին այնպիսի կրօնք մը որ աշխուսագոյնն ու պարզագոյնն էր քան Եգիպտացուց, Ասորեստանցուց, Բաբելոնացուց ու Փիւնիկեցուց կրօնները: Ասոնք կուսապաշտ չէին: Նախնի շքր-ջաններուն՝ իրենց կրօնի գլխաւոր յատկանիշն էր Միակ գերազոյն Աստուծոյ մը գոյութիւնը: Զոնիկա չէին պաշտեր նիւթական ձեւով, սիրերիմ թշնամի էին Կուսապաշտութեան: Բայց յետոյ այս հաւատքին յաջորդեց ուրիշ վարդապետութիւն մը որ կ'ընդունէր երկու աստուած՝ մեծ սկզբունքներու, այսինքն՝ Կոյսի ու Խաւարի մշտնջենական պայքարը: Այս սկզբունքներն անձնուորեալ էին Ա. Անուրամագրա=Որմիզդ, Բ. Անրիման=Արիմն անուններով: Այս դրութիւնը կը կոչուի Երկամասեան վարդապետութիւն:

Երանեան լեռնադաշտի բոլոր բնակիչները գրեթէ միեւնոյն կրօնքն ունէին: Կ'ըսէին թէ իրենց կրօնքը յայտնուած էր Զրադաշտ իմաստունին ձեռքով, որուն թուականն անորոշ է (Թ. Կամ Ժ. Դար Ն. Ք.): Այս իմաստունն ոմանք կ'ըսեն թէ Մարաստանէն եկած է եւ ուրիշներ՝ Բակտրիայէն Կ'ըսուի թէ գեւերու հետ կը կուռի, յետոյ 20 տարի քարայրի մը մէջ կը բնակի, հրաշքներ կը գործէ եւ Բակտրիայ թագաւորը հաւատքի կը բերէ: Վերջերը, Պարսկական պետութեան ստեղծման էր որ հաւաքուեցաւ Երանեան կրօնական կանոնագիրը՝ Զինդ Աւեստա որ 21 երկար մասերէ կը բաղկանար եւ որուն բնագիրը՝ արաբացի պատմագրի մը վիայութեան համեմատ եղի հազար մտրթի վրայ գրուած էր: Երբ Պարսկաստան Մահմեդական տիրապետութեան ենթարկուե-

ցաւ, հին հաւատքը մեծարողները մեկնեցան. Պովոյի (Հնդկաստան), ասոնց սերունդները կը մնան ցարդ Բարսի կամ Կեպր անունով եւ պահած են Աւետայի 21 գրքերէն մէկը: Պարսկական կրօնի գլխ. աստուածն է Ռմիդդ՝ աստուած երկնքի որուն մարմինը լուսեղէն է եւ աչքը նոյն իսկ արեգակնայն: Կը կոչուի Տեր ինսասուն—Անուրամագա: Պարսկաստանի մէջ քարածայռի մը վրայ կարգացուած է հետեւեալ արձանագրութիւնը: «Ահա իմ մարդա կարող աստուած է, ինքն ստեղծեց վերին երկինքը, ինքն ստեղծեց մարդիկը: Կեանքի, Սրբութեան ու ձշմարտութեան աստուածն է:»

Որմիդդ բարի աստուած մըն է ուրիշ կը բխին մարդու ամէն բարիք, գոր օրինակ՝ լոյսը, հուրը, ջուրը, դաշտերը, ծառերիցը, ընտանի անասունները, թռչունները, արջաղաղն ու լաւագոյն կենդանին՝ շունն որ գիշերը գողերն ու թշնամիները կը վանէ: Շունը սպաննել ոճիք գործել է, նոյնպէս մեղք է կարծր սակ որալ անոր կամ շատ կերակուր կերցնել:

Որմիդդէն ստորագաս աստուածներ ալ կան, գորօրինակ՝ Միրրա—Միհր, Վայր, Անանիսա եւլն.:

Չար ոգիներ Դեւեր—Դեւա ալ կան, ինչպէս նաեւ բարի աստուածի թշնամի՝ Դիշերի, Մահա, Դժբախտութեան, Նոթութեան, Անմարտութեան, Ստուութեան, Ծուլութեան ու Տգիտութեան աստուածներ, որոնց պետն է Անկրա—Մանիու—Արիմն «Նեղի՛ ռգի»ն: Ասկէ կը բղխին բոլոր չարիքներն ու վնասակար կենդանիները:

Տեւական պայքար մը կայ բարի ու չար աստուածներուն միջեւ: Պիտի դայ օր մը որ դեւերը վճռական պարտութիւն կրեն խաւարը, մահն ու չարն անհետանան եւ Լոյսի, Կեանքի ու ձշմարտութեան թագաւորութիւնը տիրէ:

Երանեանք կը հաւատային թէ Որմիդդի ամէնէն հաճելի բանն է բարի գործի ու չարի դիմ կռուիլ: Ամէնէն առաջ պարտ էին ըլլալ ուղիղ եւ անկեղծ: Ըստ Ներդոստոսի «Պարսից համար զար բան մը ամօթալի քան ատախտութիւնը: Շատ ամօթ էր նաեւ պարտքը, զի, կ'ըսէին, «պարտք ունեցողն ի հարկէ կը ստէ»: Անհրաժեշտ էր մարտութիւնը, կը խորշէին դիակ կամ բորոտ շոշափելէ: Իսկոր անշնչացած բաները, մինչեւ իսկ կտրած եղունգն ու մազը պիղծ կը համարէին: Պէտք էր ջնջել վնասակար կենդանիները, ինչպէս՝ օձ, մողես, ճճի եւայլն: Պէտք է՛

կուռիլ հուղկահարներուն դէմ: Աշխատութիւնն առաքինութիւն էր: Կը հաւատային որ բարիք գործելով՝ մարդիկ աստուածներուն օգնած կ'ըլլային չար ոգիներու դէմ: «Սուրբ է այն որ այս աշխարհի մէջ տուն մը կը կառուցանէ եւ հոն կրակ կը պահէ, կինն ու զաւակները, արջաւն եւ լաւ խաշինք կը սնուցանէ»: Հողագործը քուրմերուն եւ զօրականներուն չափ յարգելի էր:

Որովհետեւ մեռելները պիղծ ու դեւերէ շրջապատուած կը նկատէին, երանեանք կը ստկային անոնցմէ: Զէին համարձակեր թաղել զայն եւ կամ ջուրի կամ կրակի մէջ ձգել, որպէս զի հողը, ջուրը կամ հուրը չպղծուին, այլ ամայի տեղեր կը ձգէին զանոնք՝ դիշակեր թռչուններու եւ շուներու կեր ըլլալու համար: Միայն Պարսկաստանի մէջ մեռելները մոմով ծեփելէն ետք կը թաղէին, որպէս զի հողը չպղծուի: Հոգիներու համար կ'ըսէին թէ քանի մը օր ետք դուրս կ'ելլէին դիակէն եւ դատուելու համար ուրիշ աշխարհ մը կ'երթային, յետոյ կ'անցնէին Զինուաս անունով նեղ կամուրջէն, որ անդունդի մը վրայ կ'երկարի: Եթէ չարագործ էր, վար կ'իյնայ, դեւերու ձեռքով շըլթայի կը զարնուի տանջուելու համար. եթէ բարի կեանք վարած էր, Երջակաքիսան Դրախը կը հասնի Սիրուլ անունով հրեշտակին օգնութեամբ: Այն երանելի հոգիները կրնային իրենց սերնդին զրկել առողջութիւն ու հարստութիւն՝ աղօթքի փոխարէն:

*
* *

Ժ Գ. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Կ Ր Ա Կ Ա Պ Ա Շ Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Պարսից կրօնի նախնական պարզութիւնը իմանալուցաւ տարբերու պաշտամունքով եւ կոչուեցաւ Մագդիզակամաքիւն: Ասոր գլխաւոր ձեւն էր Կակապաշտարիւն = Մոխրապաշտարիւն = Մոզդաքիւն: Լեւոնային բարձր սարերու վրայ կանգնած էին աստուածներ, ուր կը բորբոքէր մշտնջենական անշէջ բոց մը: Կը հաւատային թէ այս հուրն երկինքէն վառուած է:

Մոգերը սպիտակ գգեստ հագած, գլուխին դրած թաղիքէ բարձր խոյրեր — որոնց վերջացած ծայրերը կը ծածկէին իրենց

կզակներն ու շրթունքները, — ձեռքերնին բռնած գաւազանս
ներու խորձ մը = Բարսեղնի՛ն՝ կ'երթային թափորով ատրու-
շաններու քով եւ մոգական դիւթութիւններ կ'երգէին:

Կը դո՛ճէին ձի, եզ, ոչխար ու այծ: Մոգերը կը մորթէին
կենդանիները՝ երգելով իրենց խորհրդաւոր երգերը, եւ կը կա-
տարէին հաշտարար նուերու մը՝ գետինը թափելով կախ, իւղ, մեղր:

Մուգերն ազդեցիկ դաս մը կը կազմէին՝ օժտուած մարգա-
րէական զօրութեամբ, երազներ կը մեկնէին եւ իրենց բարս-
մունքներուն միջոցաւ ապագայ դէպքերը կը գուշակէին:

*
* *

Ժ Ե. Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ



ԿՐԱԿԻՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Բնութիւնն ինքնին ինչ ինչ պարագայներու մէջ կրակ
յառաջ կը բերէ. հրաբուխները հրակէզ նիւթեր կը ժայթքեն,
կայծակը ձիւղերուն բազխելով՝ հրդեհներ կը պատճառէ ան-
տաւներուն մէջ: Մարդ միջոցը գտած է ո՛չ թէ միայն բնու-
թեան արտադրած Կրակը պահպանելու, այլ նաեւ արուեստակա-
նօրէն զայն արտադրելու: Կրակի գիւտը շատ մը օգուտներ
ունեցաւ:

Ի սկզբան Կրակը ծառայած ըլլալու է վախ ներշնչելու
համար կենդանիներուն, եւ զանոնք ակնածանքի մէջ պահելու:
Անիկա այս կերպով շատ նպաստած է մարդուն ապահովութեան.
այսօր իսկ նոյն կարեւոր ծառայութիւնը կը մատուցանէ անա-
պատներու մէջ ձմեռորդին: Անիկա եղած է նաեւ առաջին
Լուսաւորութեան միջոցը. քարայրին մէջ վառուած կրակետոյն
անտարակոյս երկար ատեն միակ գործածական լուստուռն եղաւ:

Այնուհետեւ կրակետոյն մէջէն առնուած հրակէզ ձիւղ մը
ժայռի մը ձեղքին մէջ հաստատուելով՝ առաջին ջահն եղաւ:
Ատկէ եկած հասած է մինչեւ այսօրուան ելեքտրական լոյսն, որ
առանց այդ մեկնակէտին գոյուլութիւն չպիտի ունենար: Կրակը
ստեղծեց լոյսը: Գնդանին հեռու պահել եւ մութին ստիկումն
ու անպատեհութիւնները բառնալ՝ նախնական այն երկու բա-

րիքներն են որոնց համար նախ եւ առաջ մարդ կապուած
է Կրակին:

Նտաքրքիր մէկը բոլորովին տղայական եղանակաւ մը
փորձած ըլլալու է Կրակին ազդեցութիւնը ձեռքն ինկած բոլոր
նիւթերու վրայ: Այս կերպով գտնուած ըլլալու է միտին, բանջա-
րեղէններուն եւ արմտիքին եփումը: Միւր փոխանակ հում հում
լափելու՝ եփուած ուտելն առաջին տեսութեամբ թերեւս կարե-
ւոր չերեւայ: Բուսեղէններն եփելու ինքիքը յայտնի կարեւո-
րութիւն մը ունեցող յառաջընթացիւն մըն է: Բոյսերու մեծ
մասը հում վիճակի մէջ այնքան դժուարամարս է որ հազիւ
կրնայ անուցիչ նկատուելի Արդարեւ առանց Կրակին մարդ չպիտի
փորձուէր երբեք սնանիլ շատ մը արմատներով եւ հունտերով
զորս կը գործածէ հիմայ, եւ կամ, անգամ մը զանոնք փորձելէ
ետքը, մէկ կողմ պիտի նետէր՝ առ առաւելն վերապահելով զայն
անմիջական պէտքի մը պահուն: Կրակի գիւտն ուրեմն կը հաս-
տատէ Հողագործութեան պէտքը՝ պահանջելով անկէ գոնէ՛ ար-
մատներու եւ հունտերու արտադրութիւնը: Ատկէ զատ Բնու-
թեանը բուսական անուղներու աւելի մեծ առատութիւն կը ներ-
կայացնէ մարդուն որ աւելի կրնայ հայթայթուել քան կեն-
դանիներունը: Ասով կրնայ ըսուել թէ կրակը մեծապէս աւելցու-
ցած է մարդուս անդրական միջոցները:

Կրակն անհաստատի զօրութիւն մը ունի կերպսփոխելու
բոլոր նիւթերն որոնցմէ եւ ո՛չ մէկը կրնայ դիմադրել անոր,
ամէնէն անօրէն մինչեւ կարծրագոյնը, ո՛չ կաղայինը, ո՛չ իսկ
երկաթը կամ աղամանդը:

Ինչ որ կը պատահի դեռ Աւստրալիոյ բնիկներուն մէջ, ինչ
որ պատմութիւնը մեզի կը սորվեցնէ Հնդկներու, Ռոյներու եւ
Լատիններու մասին, իրաւունք կուտայ մեր հետեւեալ վարկածին
կազմութեան, այսինքն թէ կինն ամէնէն առաջ կրակին պահ-
պանութեան յատկացուեցաւ: Դեռ այսօրուան օրս Փրանսայի մէջ
ինչ ինչ տեղեր, երբ աղջիկ մը ծնի ընտանիքին մէջ, կ'ըսեն.
«Ահա առաջին Կրակը պահող մը, կամ Կրակն արծարծող մը»: Կրակե-
ղին շուրջն ու Գնոջ շուրջն որ Կրակին պահպանման կը հսկէ եւ
անով տնական զանազան պէտքերը կը հոգայ, ինչ քիչ շարու-
նակական յառաջընթացեամբ երկու սեռերու կենսակցութիւնը
կը հաստատուի եւ կը բարոյանայ, մինչեւ որ վերջապէս կը յանգի
Քաղաքակիրթ ժողովուրդներու ամուսնութեան:

Պատմութեան սկիզբէն ի վեր պատահած կրօնական կամ քաղաքական յեղաշրջումներէն ո՛չ մէկը կարելի է բազմաթիւ Գրակին հնարմամբ յառաջ եկած արդիւնքներուն մեծութեանը հետ իրաց բնական ընթացքով պէտք էր որ Գրակի գիւտը տեղի ունենար ամէնէն առաջ եւ կամ բնա՛ւ ս եւ է գիւտ տեղի չունենար. վասն զի Գրակի գիւտն անհրաժեշտ է բոլոր միւսներուն համար եւ իսկապէս սոսկիս այսպէս ըլլալու է. այսինքն թէ շատ մեծ հաւանականութեամբ գարեք առաջ տեղի ունեցած է Գրակին գիւտը, ինչ որ կը նշանակէ թէ անոր պէտքն այնքան զգացուած չէր եւ թէ կրնար ըլլալ որ այն տեղի չունենար բնաւ:

Երբե՛ք ճշգրիտ կերպով չպիտի գիտնանք թէ անիկա ի՞նչ պէս պատահած է, թերեւս իրարմէ որոշ երկու պահեր եղած են, երկու յաջորդական անցքեր: Ըսինք թէ երկրի վրայ ինքնին հրդեհ կը պատահի. կրնանք ըսել նաեւ թէ կախարդ մը դարմանք կամ վտի սղդեղու նպատակաւ, ինչպէս վայրենի ցեղերու մէջ կը տեսնուի, կիսայրեաց կոճը մը առած է բնական այս հրդեհներէն եւ այսպէս պահած է այս Գրակը: Աւելի վերջը, թերեւս շատ ժամանակ ետք, գալլախնազերու իրտրու բազմումէն յառաջ եկած կայծերը, ծառի ճիւղերու՝ հողի միջոցաւ իրարու շփումէն գոյացած կրակը մտրդուն յայտնած են արուեստական երկու կերպով Գրակ հայթայթելու գաղտնիքը: Ինչ որ ալ ըլլայ, ահա՛ շատ կարեւոր գիտողութիւն մը. այն է թէ այս գլխաւոր գիւտն որ յետոյ ա՛յնքան հարկաւոր եղած է ուրիշ գիւտերու, մեծ գիտութիւն մը պահանջած չէ յայտնուելու համար: Մեծ բան մը ըսել չէ եթէ նոյն իսկ հակառակն առարկուէր:

- Խմբագրելի նիւթեր.** — 1. Նկարագրել թե որո՞նք ունին Պարսից կրօնին յար եւ նմանը եւ թե հակախոսքիւններ կա՞ն վեր մէջ:
2. Ծարարել. ի՞նչ կը նշանակէ «Կարելի չէ գիտնալ թե մարդ երջանիկ է իր մահին առաջ»:
3. Վեր հանել Պարսից դաստիարակութեան օգտակարութիւնը:

4. Բարդաւեղ Եգիպտական, Ասորեստանաց — Բարեխալսի ու Պարսիկ ճարտարագիտութիւններ:
5. Կրակապաշտութեան ի՞նչ հետքեր կան վեր մէջ:

Գ. Պ Ա Ր Թ Ե Ի Ք

Պ Ա Ս

Պարթևաստան ու Պարթևք. — Պարթևաստանը Պարթևաստանի արդի Խորասան երկիրն է: Արիական ցեղեր կը բնակէին անոր բոլորախորը: Պարթևք Մագղոբներու ցեղէն էին: Նախ իրենց մայրաքաղաք եղաւ Թարս, յետոյ Տիգրան: Պարթևներն առաջին անգամ կը յիշուին Վշտասպեայ Դարեհի օրով:

Պարթևաց իշխանութեան սկիզբը. — Արբելայի ճակատամարտէն ետք (331) Դարեհ Կողմանոսի ցեղը մնաց Բակտրիա = Պակ իրրեւ թագաւորական զարմ: Պարթևները Սելեւկեանց զէմ կ'ապստամբին (254 Ն. Բ.) և Ափրնեկեանց ճիւղէն Դարեհ = Զարեհ Արշակ Ա. անունով կը թագաւորէ: Այսպէս կ'սկսի Պարթև ճիւղին թագաւորութիւնը: Բակտրիոյ Յոնն քաղաւորութեան (254-126) կործանումէն ետք, այս Դարեհի ցեղէն ուրիշ ճիւղ մը՝ Մար-Սիլիւթացի կը թագաւորէ Բակտրիա: Այս Մար-Սիլիւթացի ճիւղը կը կոչուի Պահլաւ որ աւելի յարգի էր քան Պարթևականը, որովհետեւ որ Պահլաւները Պարթևներէն աւելի մաքուր պահած էին ինչ որ Արիական կրօնքն ու սովորութիւնները: Պարթևները շատ հեղինակաւ էին և ստեղծի Արիականներուն:

Թէ՛ Պարթև և թէ՛ Պահլաւ թագաւորներն Արշակ կը կոչուին :

Պարբև հարստութիւն. — Արշակ Ա. ու Հրահատ Բ. — Պարթևք սկզբան մինչև Հրահատ Ա., այսինքն՝ 255-127 անընդհատ գործ կ'ունենան Սելեւկեանց հետ : Արշակ Ա. Դարեհ տէրութիւնը կը հիմնէ, իսկ Արշակ Բ.



Տրդատ կը կազմակերպէ տէրութիւնը : Մինդրատ մ. (182-174) կ'ընդարձակէ տէրութեան սահմանները՝ գրաւելով Բախտիս, Մարասան, Շոշասան, Պարսխասան ու Բարքեռն և կը կոչուի Արեակ մեծ : Առաջին անգամ ինք կը կրէ Արշակի արքայ տիտղոսը :

Հրահատ Բ. ու Մինդրատ Բ. — Հրահատ Բ. ի (138-127) օրով Պարթևաց տէրութիւնը կը հասնէր մինչև

Եփրատ : Հրահատ Բ. մինչև Ատորիք կը յառաջանայ, բայց կ'ստիպուի Պահլաւ տոհմին յարձակումէն ետ դառնալ :

Հրահատ Բ. ի յաջորդներուն օրով մինչև Հրահատ Գ. իբր 60 տարի Պարթևք մեծ յազման մէջ էին ներքին խռովութեանց ու Պահլաւներուն դէմ մղուած պատերազմներու պատճառաւ : Հրահատ երկիրը կը հանդարտեցնէ :

Պարթևք առաջին անգամ Հռոմի հետ կը բաղխին Մինդրատ Բ. ի օրով (124) : Այնուհետև Պարթևք ու Հռոմայեցիք շատ պատերազմներ կը մղեն իրարու դէմ : Կրատտոս ու Անտոնիոսի արշաւանքները կատարեալ ճախողանքներ եղան, մինչ Կասիոս, Տրայանոս, Սևերոս եւ այն մեծապէս կը յաջողին : Ընդհանրապէս Եփրատ գետը աանհետադարձ էր երկու հզոր տէրութեանց միջև :

Պահլաւ հարստութիւն. — Պահլաւ ցեղէն Արսաւան Գ. (14-44) Մար-Սկիւթացի զօրքերով Վոնոնի դէմ կը ճակատի . Վոնոն կը յաղթուի և Հայաստան կը փախչի : Արտաւան Գ. կը թագաւորէ ամբողջ Պարթևական երկիրներու վրայ և իրմով կ'սկսի Պահլաւ հարստութիւնը : Պահլաւք Հայաստանի վրայ ալ կը յարձակին (51 Յ. Բ.) և հոն կը հաստատեն Հայ-Արեակունեանց հարստութիւնը :

Սակախ այս հարստութիւնն ալ երկար չի տևեր : Յաճախակի խռովութիւններն որ կը ծագէին թէ՛ այս ազգին յեղեղուով բնութենէն և թէ՛ յօսի վարչութիւնէն՝ սպառած էին երկիրն ոչոք : Վերջապէս իշխանութիւնը կ'անցնի Սասանեանց ձեռքը :

Պ Ա Ր Թ Ե Ի Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ն Ե Ր

Արեակ Ա.	Գարեհի	(255 — 253)
Արեակ Բ.	Տրգոս	(253 — 217)
Արեակ Գ.	Արսաւան Ա.	(217 — 197)
Արեակ Դ.	Պրապալ	(197 — 182)
Արեակ Ե.	Հրահաս Ա.	(182 — 174)
Արեակ Զ.	Մինդոս Ա.	(174 — 138)
Արեակ Է.	Հրահաս Բ.	(138 — 127)
Արեակ Ը.	Արսաւան Բ.	(127 — 114)
Արեակ Թ.	Մինդոս Բ.	(114 — 86)
Արեակ Ժ.		(86 — 76)
Արեակ ժԱ.	Սանսրուկ	(76 — 68)
Արեակ ժԲ.	Հրահաս Գ.	(68 — 58)
Արեակ ժԳ.	Մինդոս Գ.	(58 — 54)
Արեակ ժԴ.	Որոնդէս Ա.	(54 — 36)
Արեակ ժԵ.	Հրահաս Դ.	(31 — 1)
Արեակ ժԶ.	Հրահասակ	(1 — 2)
Արեակ ժԷ.	Որոնդէս Բ.	(2 — 4)
Արեակ ժԸ.	Վոնոն Ա.	(4 — 14)

Պ Ա Հ Լ Ա Ի Հ Ա Ր Ս Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Արեակ ժԹ.	Արսաւան Գ.	(14 — 44)
Արեակ Ի.	Վարդան	(44 — 47)
Արեակ ԻԱ.	Գոսարգ	(47 — 50)
Արեակ ԻԲ.	Վոնոն Բ.	(50)
Արեակ ԻԳ.	Վարդաւր Ա.	(50 — 90)
Արեակ ԻԴ.	Բակուր Ա.	(90 — 108)
Արեակ ԻԵ.	Խոսրով	(108 — 121)
Արեակ ԻԶ.	Վարդաւր Բ.	(121 — 149)
Արեակ ԻԷ.	Վարդաւր Գ.	(149 — 191)
Արեակ ԻԸ.	Արսաւան Դ.	(191 — 199)
Արեակ ԻԹ.	Բակուր Բ.	(199 — 209)
Արեակ Լ.	Վարդաւր Դ.	(209 — 216)
Արեակ ԼԱ.	Արսաւան Ե.	(216 — 226)

Թեյադրուրիւններ. — Պարթեւասանի ո՛ւր կը գրտնուի. — Որո՛նք էին մայրախաղաղները. — Ե՛րբ սկսաւ Պարթեւաց իշխանութիւնը. — Գահի՞ ճիւղի բաժնուած էր. — Պարթեւաց առաջին քաղաւորներն ինչե՛ր ըրին. — Ե՛րբ Հոռուսեցոց հետ կը պատերազմին. — Ե՛րբ կ'սկսի Պահլաւ հարսութիւնը. — Ե՛րբ եւ որո՛ւն ձեռնով կը վերջանայ Պահլաւ-Պարթեւ հարսութիւնը :

Ա. Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ի Մ

Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Պարթեւը ու Պահլաւը զանազան սոգերու թագաւորները բողոքովին սղատ կը թողուին իրենց ներքին գործերուն մէջ, պայտանսաւ որ կանոնաւորապէս վճարէին իրենց տարեկան տուրքը եւ օգնէին պատերազմի մէջ: Կը պահէին հին Աքեմենեան արքունիքին շուքն ու մեծութիւնը, Դահլիճին ձեռքունը կապոյտ երկնակամարին ձեւն ունէր, համակ շափիւղէ կազմուած: Աստուածներու սակիւ պատկերները հաստատուած էին կամարին մէջ եւ աստղերու պէս կը շողշողային: Չեղունէն կախուած էին զուտ սակիւ մոգական անիւններ: Պարթեւ հեծելազօրքը մեծ հռչակ հանած էր. քաջ նետաձիգ էր եւ մեծ կոտորած կ'ընէր թշնամիներուն մէջ, նոյն իսկ իրենց նահանջած ատեն:

*
**

Բ. Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ի Մ

Կ Ե Ն Յ Ա Վ


Պարթեւական կենցաղը, շէնքերն եւայլն շատ պարզ էին: Այս ազգը թէեւ Հիլլեմասեր էր, բայց ո՛չ բան մը ըրած է եւ ոչ ալ բան մը թողած է Գեղարուեստի արժանի, բացի այն ձեւերէն որ հաւանականաբար Արաբական նկարներու նախատիպն եղան:

Արդէն Արևելիական ճարտարապետքիւնը կարծես կ'աներեւութա-
նայ Աքեմենեան իշխանութեան անկուսէն (331 Ն. Ք.) մինչեւ
Սասանեան տէրութեան սկիզբը (226 Յ. Ք.):

Զրոյւաշտի կրօնքին կը հաւատային եւ պաշտամունք կը
մատուցանէին պահապան ոգիներու եւ ընտանեկան թերափնե-
րու: Կաւ կը վարուէին օտարականներու եւ բանտարկեալներու
հետ Հաւատարիմ էին իրենց խոստումներուն ու դաշինքներուն:



Գ. Ս Ա Ս Ա Ն Ե Ա Ն Ք



Պ Ա Ս

Պարակ Սասանեան. — Պարսիկները Պարթևաց
Արշակեաններէն նուաճուած թէև, բայց ունէին տո՛ն-
մային իշխաններ անոնց գերիշխանութեան տակ: Գ.
դարուն (Յ. Ք.) սկիզբը Պարսկաստան անկարգու-
թեան մասնուած էր: Բագրակոյի կոչուած պարսիկ
ազգային իշխանութիւնը շատ տկարացած էր: Փոքր
իշխաններ կը տիրէին ամէն տեղ բարձրաբերձ լեռներէ
անջատուած գետանովիաներու մէջ: Ասոնց մէջ նշանա-
ւոր էր Սասանեան ցեղէ Պարակ Շիրցին (*) որ կը յա-
ջողի տապալել Բագրակոյի հարստութեան վերջին քըր-
մապետ—իշխան Գոգիրը, որուն ինք հպատակն էր: Այ-
նունեան Պարակ իր իշխանութիւնը կը տարածէ Սսանի
երկրին = Հին Պերսեպոլսոյ վրայ:

Արտաշէր Սասանեան. — Պարակ իր կենդանու-
թեանն իշխանութիւնը կը յանձնէ Շապուհ որդւոյն, սա-

(*) Շիր գիւղ մըն է Շիրազի արևելիական կողմն աղի լճի մը
կերտը:

կայն իր միւս որդին Արտաշէր = Արտաշիր = Արտաշիհր
չ'ուզէր հպատակիլ եղբորը՝ հօրը մահէն ետք եւ վերջա-
պէս կը գահակալէ (211 Յ. Ք.) եւ իրմով կ'սկսի
Սասանեան հարստքիւնը որ կը տեւէ չորս դար, ինչ-
պէս որ Կիւրոսով սկսած էր Աքեմենեանցը:

Արտաշիր իր գահակալութեան առաջին օրէն մեծ
մղուժ կու տայ Մագդեգախանութեան, ինչպէս որ իր յա-
ջորդներն ալ կը պաշտպանեն այս կրօնքը եւ շատ գոհոգու-
թիւն յանձն կ'առնեն տարածելու զայն: Արտաշիր 80
հազար մոզ ժողվելով՝ գտեց Մոզպաշտքիւնն եւ ըն-
դունեց Մոզութեան չորս հինգ ազանդները՝ Անկարտ-
խաշ, Բոզպաշի, Պահլաշի, Հանակիէն, Պարսկաշի:

Արտաշիր Պարթևներէն կը յափշտակէ Կրմանն որ
բուն Պարսկաստանի արեւելեան կողմն կը գտնուի ու
Շոշասանը: Պահլաշ-Պարթևաց Արտաշէր թագաւորը
երիցս կը ճակատամարտի Արտաշիրի դէմ, բայց կ'իյնայ
Միջագետքի անապատին Հասրայի մէջ (224, ապրիլ 28)
եւ Արտաշիր կը կրէ Արիայից արիայի տիտղոսը, եւ
Պարթևաց իշխանութիւնը կը կործանի: Յետոյ կը
զբաւէ Մարաստանն ուր կ'ընէին Պարթևաց ցեղէ իշ-
խաններ: Թէև կը յաջողի զբաւել Երանեան լեռնա-
դաշտի մեծ մասը, բայց զժուարութեանց կը բաղխի
Հայաստանի մէջ ուր Արտաշէրի երկու որդիներն
ապաւէն գտած էին:

Թէև Հռովմայեցիք կը սարսափէին Արտաշիրի յա-
ռաջխաղացութիւնը բնով, բայց Ադեբասկիր Սեւերոս
կայսրը 233ին կ'ստիպէ Վրտաշիրն որ նահանջէ:

Սասանեանց մայրաքաղաք. — Թէև Սսան էր
Սասանեանց մայրաքաղաքն ուր հանդիսապէս կը կա-
տարէին յաղթուած թագաւորներու գլխատումը, սա-
կայն բուն մայրաքաղաքն էր Տիգրիսի եզերքը Տիգ-

բուն-Սեղեկիս զոր Արտաշիր կ'անուանէ վեհ Արտաշիր = Պու Արտաշիր: Սասանեան Արտաշիր նկատուամով մայրաքաղաք կ'ընարէ Տիգրան-Սեղեկիան, որպէս զի Հռոմայեցոց երկիրներուն մօտ ըլլայ:

Շապուհ Ա. — Արտաշիր կը մեռնի 242ին, իրեն կը յաջորդէ իր որդին Շապուհ = Շապուհր Ա. որ 242ին Հռովմայեցոց ձեռքէն կ'անէ երկու երկիր՝ Մծքին ու Խառանը, և կը յառաջանայ մինչև Անտիոք: Սակայն Հռովմայեցոց Գորդիանոս Գ. կայսեր աները՝ Տրվիսիքեսն ետ կը մղէ Շապուհն և կը յարձակի Պարսից մայրաքաղաքին վրայ: Գորդիանոս այս պատերազմին մէջ կը սպաննուի 244ին իր թիկնապահներէն Արաքացի Փիլիպպոսի ձեռքով որ կայսր կը հռչակուի: Փիլիպպոս ամօթայի հաշտութիւն մը կը կնքէ Շապուհի հետ՝ անոր թողով Հայաստանն ու Միջագետքը:

Շապուհ 252ին դարձեալ կը սկսի յարձակողական պատերազմի և իրականապէս կը դրաւէ Հայաստանն որուն Տրդատ Բ. թագաւորը Հռովմայեցոց երկիրը խոյս կուտայ: Վաղենախանոս կայսրը թէև կը յարձակի Պարսից վրայ, բայց Միջագետքի մէջ մղած պատերազմը ձախող կ'ըլլայ Հռովմայեցոց համար, և կայսրը գերի կ'իջնայ 260ին հաւանաբար Եդեսիոյ = Ուրեսայի մօտիկ:

Այն ատեն Շապուհ կը յառաջանայ Փոքր Ասիայ սակայն հոս մեծ ընդդիմութեան կը բաղխի: Ծօշատանի մէջ կը հիմնէ Գուրդեհ - Շապուհ = Զուհայ - Շապուհ = Պեք Լապաս քաղաքը:

Շապուհի օրով կ'ապրէր Մանիքեանց ազանդին հիմնադիր՝ Մանի:

Շապուհի յաջորդները. — Շապուհ Ա.ի կը յաջորդէ 273ին իր որդին Որմիզդ = Ուրուզդ Ա. որ քաջարար կը պատերազմի Հռովմայեցոց դէմ ու դիւցակն

կը կոչուի: Որմիզդ միայն մէկ տարի կը թագաւորէ:

Որմիզդի կը յաջորդէ իր եղբայրը՝ Վուալ Ա. Վահրաւ = Վարահրաւ՝ մեղկ ու զուարճասէր իշխան մը (274-277:)

Վուամ Ա.ի կը յաջորդէ իր որդին Վուալ Բ. (277-294): Կարոս կայսրը 283ին կը գրաւէ Տիգրանը: Վուամ Բ. կը մեռնի 294ին:

Վուամ Բ.ի մահէն ետք Վուալ Գ. Որմիզդի որդին ու ներսեհ = Նարսեհ՝ Շապուհ Ա.ի որդիներէն մէկը գահակալութեան համար կռիւներ կը մղեն և Վուամ Գ. կը տիրէ Սագասանի = Սիւսանի վրայ՝ կրելով Սագաշահ = Սագէացոց թագաւոր տիտղոսը:

Ներսեհ կ'իշխէ 293-303, կը նուաճէ Հայաստանը: Գալերիոս կեսարը 297ին կը յաղթուի Գալիևիկոսի = Ռակիայի մէջ, բայց յետոյ Գեոկղեախանոսի զօրապետութեամբ Ներսեհը զուրս կը հանէ Հայաստանէն և Պարսից թագաւորին կին ու որդիները կը գերեզմարէ: Ներսեհ կը ստիպուի Հայաստանն ու Միջագետքը թողուլ Հռոմայեցոց և 298ին 40ամեայ հաշտութիւն մը կնքել: Քոլքար = Խաբուր գետն եղաւ երկու տէրութեանց սահման:

Որմիզդ Բ. ու Ատրնեքսեհ. — Ներսեհի կը յաջորդէ (303) Որմիզդ Բ.: Ատր թագաւորութեան վրայ ոչինչ գիտենք:

Որմիզդ Բ.ի մահէն ետք (310) Ասրներսեհ = Ասարներսեհ կը գահակալէ որ իր անգթութեամբ նշանաւոր կ'ըլլայ:

Շապուհ Բ. — Որմիզդ Բ.ի զաւակն էր Շապուհ Բ. Երկայնակեաց որ կը թագաւորէ 310ին: Շապուհ Բ. Քրիստոնէութեան սոսկալի հակառակորդ էր և շատ մը ասորիներ կը նահատակէ: 338ին կը ձեռնարկէ Հռոմա-

յեցւոց զէմ պատերազմի . կը շարչրկէ՝ նրեայնեքը , կը կործանէ Քրիստոնեայ հաստատութիւնները , կ'ուզէ նուաճել Հայաստանը՝ Պարսից ու Հռոմայեցւոց Կոռուս-
 Ժալիկը , կը պաշարէ երեխարխապեան Մծբինը (338 , 346 , 350) , բայց քաղաքը կը զիմադրէ : Միննաւ քա-
 զաքն ալ ուժգնակի կը զիմադրէ Ծապուհի որ սակայն կ'արնէ Ամիսը 360ին :

Իր կայսրութեան արեւելեան կողմն ալ Ծապուհ յարձակողականի կը սկսի 350-358 : Հռոմայեցւոց զէմ մղած պատերազմը կը շարունակէ : Յուլիանոս Ուրացող կայսրը 363ին կը մեկնի Անտիոքէն , կը գրաւէ Միջագետքն և կը յառաջանայ Եփրատի ուղղութեամբ , կ'այրէ բազմաթիւ քաղաքներ , կը մտնէ Պարսկաստանի ներքը , բայց Տիգրոսի քով 363 , Յունիս 26ին կը սպաննուի ճակատամարտին մէջ : Հռոմայեցիք Հայերն անպաշտպան կը թողուն : Ծապուհ 371ին կը կուռի Հռոմայեցւոց զէմ Հայաստանի մէջ : Թէ՛ Հռոմայեցիք և թէ՛ Պարսիկները նենգութեամբ ու զէնքով կ'ուզէին տիրել Հայաստանի :

Ծապուհ Բ.ի յաջորդները . — Ծապուհ Բ.ի ամեն Պարսիկները ներքին յուզումներով ու Կրմանիոյ զէմ կռիւներով զբաղած էին : Ծապուհ Բ.ի կը յաջորդէ (379) Արսաշիր Բ. որ Ասիաքեհեհի = Հին Ասորեստանի մէկ մասին մարդպեան էր : Արտաշիր Բ. Քրիստոնէութեան զէմ մղուած հաղածանքը կը զազրեցնէ :

Իր յաջորդն ու որդին՝ Ծապուհ Գ. (384-89) Հռոմայեցւոց հետ հաշտութիւն կը կնքէ : Ասոր որդին ու յաջորդը՝ Վուամ Գ. (389-399) որ Կրմանշահ տիտղոսը կը կրէր՝ Հռոմայեցւոց հետ լաւ յարաբերութիւն կը մշակէ ու չի շարչրկեր Քրիստոնեայնեքը : Հռոմայեցիք

ու Պարսիկները 390ին Հայաստանը մեղերնին կը բաժնեն : Այս բաժանումը կը տեւէ մինչև Արաբացւոց արշաւանքը :

Յագկերտ Ա. — Վուամ Գ.ի կը յաջորդէ Յագկերտ Ա. (399-420) Ծապուհ Բ.ի որդին որ Ասորի քրիստոնեայնեքու կրօնական թոյլութիւն կու տայ 410ին և իր Ծապուհ որդին Հայաստանի վրայ թագաւոր կը կը կարգէ : Յագկերտ բարեկամ էր Արիադիոս կայսեր :

Ծապուհ Գ. ու Վուամ Ե. — Հորը մահէն ետք Ծապուհ Հայաստանէն կը դառնայ գահակալելու , բայց իրեն զէմ կը գանէ իր եղբայրը՝ Վուամ Ե. Գոռ = Տիւր կոչուածն որ հորը կենդանութեան փախստական էր Հիրսուս քաղաքին Արաւելոնդար թագաւորին քով : Վուամ Արաբացւոց օգնութեամբ իր եղբորը ձեռքէն կ'ուզէ յափշտակել գահը : Առաջին անգամ էր որ Արաբայիք կ'արշաւէն Պարսկաստան : Վուամ Ե. կը յաջողի գահին տիրանալ (420-438) : Վուամ Ե. կը հարածէ Քրիստոնէութիւնն և իր Միւր - Ներսէն զօրապետին նրամանատարութեամբ Միջագետքի մէջ կը պատերազմի Հռոմայեցւոց զէմ 421ին : Վերջապէս 422ին կը հաշտուին այն պայմանաւ որ Պարսիկները Քրիստոնէութիւնն ազատ թողուն իրենց երկրին մէջ , փոխադարձաբար Հռոմայեցիք ալ Զրադաշտականութիւնը՝ իրենց կայսրութեան մէջ :

Վուամ Ե. այնուհետև իր զէնքը կը գարձնէ Հեփթաղներուն = Սպիսակ Հոնաց զէմ :

Յագկերտ Բ. — Վուամի կը յաջորդէ իր որդին Յագկերտ Բ. (438-457) որ կը հարածէ թէ՛ Քրիստոնէութիւնն և թէ՛ Հրէութիւնը : Հռոմայեցւոց զէմ պատերազմը կը վերսկսի 441ին մէկ կողմէ և միւս կողմէ ալ՝ Հեփթաղներու զէմ Խորասանի մէջ : Հայերը Քրիստոնէութեան համար կը նահատակուին 451ին , — Վարդանանց

պատերազմը—որովհետեւ կը նեղուէին թէ՛ Յագկերտ թա-
գաւորէն և թէ՛ ծերունի Միհր-Ներսէն զօրապետէն:

Յագկերտ Բ.ի յաջորդները. — Յագկերտի մահէն
ետք (457ին) իր երկու որդիներուն՝ Որմիզդի ու Պերոզի
միջեւ գահակալութեան կռիւ կը ծագի: Որմիզդ Գ.
անդրանիկ որդին որ Սազաստանի մարզպան էր՝ ժա-
մանակ մը կ'իշխէ (457-459), բայց Պերոզ (459-484)
Հեփթաղաց և մանաւանդ Պարսիկ ազնուական Միև-
րանեան ընտանիքին օգնութեամբ կը թագաւորէ և կը
հալածէ Քրիստոնէութիւնն ու Հրէութիւնը: Վարչական
կարողութիւն չունէր: Թէև Հեփթաղները Պերոզի օգ-
նած էին գահակալելու համար, բայց յետոյ թշնամի
կ'ըլլան իրարու: Պատերազմը կը վերսկսի Կասպից ծո-
վու արևելեան տափաստաններու մէջ: Պերոզի որդին
Կաւաս գերի կ'իջնայ: Վերջապէս 484ին մղած ճակա-
տամարտին մէջ Պերոզ կը ջախջախուի և իր աղջիկն ալ
գերի իջնալով՝ Հեփթաղաց թագաւորին կին կ'ըլլայ:

Հեփթաղներն երեք տարի կ'ողողեն Պարսկաստա-
նը. Չարմին՝ Կարինեան ցեղէ ազգեցիկ ազնուական
մը կը խաղաղեցնէ Պարսկաստանը: Պերոզ կը մեռնի
Հայաստանի մէջ:

Պերոզի յաջորդները. — Պերոզի յաջորդները՝ Վա-
ղարշ (484-489) Կաւաս Ա. (489-531), Զամայ (496-
498), Խոսրով Անշարուան (531-578), Որմիզդ Գ.
(578-590), Խոսրով Բ. Պարուեզ (590-628) և այն պիտի
տեսնենք Միջին Դարու մէջ:

ՍԱՍԱՆԵԱՆ ԹԱԳԱԻՈՐՆԵՐ

Արսաշիր Ա.	224—242	Վ.Ուամ Ե.	420—438
Շապուհ Ա.	242—272	Յագկերտ Բ.	438—457
Որմիզդ Ա.	273—274	Որմիզդ Գ.	457—459
Վ.Ուամ Ա.	274—277	Պերոզ	459—484
Վ.Ուամ Բ.	277—294	Վ.Ապարտ	484—489
Վ.Ուամ Գ.	294	Կաւաս Ա.	489—531
Ներսէն	294—303	Զամայ	496 ու 498
Որմիզդ Բ.	303—310	Խոսրով Ա. Անշարուան	531—578
Ասմերսէն	310—310	Որմիզդ Գ.	578—590
Շապուհ Բ.	310—379	Խոսրով Բ. Պարուեզ	590—628
Արսաշիր Բ.	379—384	Ներքին խռովութիւն, Կաւաս Բ., Արսա- շիր Գ., Որմիզդ Ե.	628—632
Շապուհ Գ.	384—389	Յագկերտ Գ.	632—652
Վ.Ուամ Գ.	389—399		
Յագկերտ Ա.	399—420		

Թեազարութիւններ. — Ի՞նչ էր Պարսից վիճակը
Պարթևաց օրով. — Ո՞վ է Արսաշիր Սասանեան. — Ի՞նչ
կարգադրութիւն ըրաւ. — Որո՞նց դիմ պատերազմեցաւ. —
Ի՞նչ պատերազմներ ըրաւ Շապուհ Բ. — Որո՞նք էն Շա-
պուհի յաջորդները. — Ինչէ՞ր ըրին. — Ի՞նչէր ը-
րաւ Շապուհ Բ. — Ի՞նչի հակառակ էր. — Որո՞նց դիմ
պատերազմեցաւ. — Որո՞նք էն Շապուհ Գ.ի յաջորդներն
էւ ի՞նչէր ըրին. — Ո՞վ քոյրսուրբտակը կը վարուի Քրիս-
տոնեայներուն հետ. — Շապուհ Գ. ու Վ.Ուամ Ե. ի՞նչէր
ըրին. — Յագկերտ Բ. ի՞նչ հարստակներ հակեց. — Ի՞ր
յաջորդներն որո՞նք էն. — Ինչէ՞ր ըրին.

Ա. Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

ՍԱՍԱՆԵԱՆ ԻՆՔՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Պարթևաց վերջին թագաւորն Արտաւան 224, Ապրիլ 28ին
կ'իջնայ վճռական ճակատամարտի մը մէջ: Արդէն անկէ 12 տարի
առաջ անկարգութիւնները սկսած էին ճրանի մէջ և և Պարթև


վեհապետներն ի զԸՐ ղոնոնք կարգապահութեան հրաւիրել կը ջանային: Սասանեան ցեղէն Արտաշիր բռնի կը հաւախմբէ շուրջը կէս անկոխ փոքրիկ իշխաններ որ կը տիրապետէին բուն Պարսկաստանի լեռներուն վրայ, ինչպէս որ Աքիմենեանց ատեն Ստահրի ու Պերսեպոլոյ կաշմբուռն պատերազմիկները յարձակմամբ գրաւած էին Նորաւային յուսթի երկրաշարը: Նոն կը բնակէին թուրանորթ ժողովուրդներ սրոնց կենցաղը չէր տարբեր ստրկութիւնէ եւ պատրաստ որս մըն էին իրկոյն յարձակողներու: Պարթեւ հարստութիւնը տկարացած ներքին երկպառակութենէ՝ վարկաբէկ եղած էր իրենց սիներիմ թշնամի Հռոմայեցեաց դէմ մղած պատերազմներէն եւ ապարդիւն ջանքեր կ'ընէր իր երկրին պաշտպանութեան համար: Արտաւան յաղթուած ու ինկած էր, իր սրբիները կ'ապաստանին Նայաստանի անմատչելի տեղերը եւ յաղթողներուն կը թողուն Քաղբէաստանն ու Միջագետքը՝ Կայսրոջեան շեմտանն ու զանգը, եւ մեծափորթամ քաղաքները՝ Սելեւկիա ու Տիգրան զոր հիմնած էին Սելեւկեանք եւ ընդարձակած ու գեղազարդած էին Պարթեւները:

Արտաշիր Աի յաջորդները, մոնաւանդ Շապուհ Ա. կը շարունակէ աշխարհակալութիւնը: Սասանեաններն ելբեք Աքիմենեանց չափ ընդարձակ երկիրներ չունեցան: Արեւմտեան կողմը Տիգրիս գետն էր իրենց սահմանագիծը, Արեւելեան կողմը՝ Բակտրիա ու յարակից երկիրները կը կողմէին անկոխ իշխանութիւններ սրոնք իրենց դոյուքութիւնը կը պահէին մինչեւ իսկ Զ. դարուն: Հիւսիսային Արեւմուտքը Նայաստան՝ երբեմն ճորտ Պարթեւներու սկզբան վերծ կը մնայ Սասանեան տիրապետութենէն, բայց յետոյ Գոռաւապիկ կը դառնայ դրացի աշխարհակալներու մէջէն:

Սասանեանց կը պատկանէին երանեան ընդարձակ լեռնադաշտն ու Վրկանեան—արդի Տիւրանն ու Կուրիան սրոնց բարբառիկ բնակչութիւնը կը հայթայթէր անվեհեր զորքեր: Ասորեստան, Բաբելոնն ու Քաղբէաստան—հնչակաւոր երկիրներ—որ երբեմն հիմնած էին զօրաւոր ինքնակալութիւններ՝ այն միջոցին ստրկացած՝ կըլծնին դուրս կը փոխէին: Պարսից ծոցի կղզիներու բնակիչներն սրոնց ձեռքն էր Մարգարիտի առեւտուրը՝ հպատակած էին Արքայից արքային: Արաբական ցամաքակղզւոյն խորերը բազմաթիւ ցեղեր կը դողային Սասանեանց վեհապետներէն: Հիւսիսային Լափուսներն ալ նիզակակից էին անոնց:

Ի՞նչու այս երկիրներու տարածութիւնն էր 2,500,000 քա. ջրն ուր բնակչութիւնն աւելի ինք էր գետահովիտներու մէջ ու ծովեզերքը, եւ ցանցաւ՝ բարձր լեռնադաշտներու վրայ: Սասանեաններն իրենց հարուստ ու ընդարձակ երկիրներով պիտի չափուէին Հռոմէական Կայսրութեան հետ:

Ք. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Ն Ե



ՍԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՅԻՒՆ

Հռոմայեցեաց ու Սասանեանց ներքին կազմակերպութիւնը շատ կը տարբերէր իրարմէ: Արեւելեան հանձարը չէր կրցած յղանալ Հռոմէական վարչութեան խստապահանջ եղանակը: Ասով հանդերձ Պարսից ինքնակալութեան քաղաքական կազմակերպութիւնը՝ ժառանգականութեան սկզբունքն ալ բացարձակապէս անձնօթ մնացած էր Հռոմայեցեաց: Սասանեանց պետութիւնն իբր աստուածպետական իշխանութիւն՝ աշխարհական ու կրօնական էր միանգամայն: Արքայից արքայէն անմիջապէս ետք, կամ ճիշդն ըսելով՝ քովը Արքայազուները—Արքայիկները՝ երանեան հին տոհմիկ գերդաստաններու պետերը կը վարէին տէրութեան բարձրաստիճան պաշտօնները, կամ մարզպաններ էին եւ կամ հրամանատար—բարշխ Կայսրութեան սահմանազլուիլը: Տեղացի ազնուականները գաւառներու կառավարիչ էին եւ կը կոչուէին Ռաս: Միջակորեար դասակարգ մըն ալ կար որ կալուածատէր էր եւ կը վայելէր բազմաթիւ առանձնաշնորհումներ: Գաւառական եւ կը վայելէր բազմաթիւ առանձնաշնորհումներ: Գաւառական — Շահրիկաղնուականներն երկու դասակարգի բաժնուած էին — Շահրիկականներ ու Դեհկաններ — որ կը շահագործէին իրենց ստացեալներն ու Դեհկաններ կը պաշտպանէին գիւղացիներն ու հողատէրներն եւ ի հարկին կը պաշտպանէին գիւղացիներն ու հողատէրները Սասանեանց իշխաններու ներկայացուցիչ Դեհկանական վիւնները: Սասանեանց իշխաններու ներկայացուցիչ Դեհկանական վիւնները գործակալներու հարստահարութեանց դէմ: Գանձային գործակալներու հարստահարութեանց դէմ:

Տիրութիւն ու Եփրատի գետահովիտներն ու Շոշաստան միայն կատարելապէս հպատակած էին Արքայից արքային իշխանութեան: Հեռավոր երկիրներ, մասնաւորապէս Խորասանն եւ Հայաստանի սահմանակից երկիրները յաճախ կը զբաղեցնէին Սասանեանց:

եանները Հարկահաւաքութիւնն ու դօրք ժողովելը շատ անկա-
նոն էին: Միայն ազդեցիկ վեհապետներ՝ Շապուհ Բ. Խոսրով Ա.
կը յաջողին ազդել ներսն եւ յազթանակաւ հռուիլ դուրսը թըշ-
նամիներուն դէմ:

Սասանեանց օրով ազնուականներէն եւ երբեմն թագաւոր-
քէն իսկ աւելի օրոտւոր էին Զորադաշտի ֆուրմիւրը—մոզերն որ
Նուիրապետական դասակարգութիւն մը կազմած էին: Թէեւ Պար-
թեւներն ալ պաշտպան էին մագերուն, բայց Սասանեանք Զրա-
դաշտական կրօնի ջերմեանդ տեսչեանները դարձան: Այսպէս
Կրակի սրաշօնեայնէր Սասանեանց արքունիքը կը վայելէին ան-
սահման հեղինակութիւն ւ ը մասնաւորապէս Զ. դարուն կիսուն:

Ասոնց նուիրապետութիւնը հաստատապէս կազմակերպուած
նոյն իսկ Պարսից Կայսրութեան փոքր գիւղերու մէջ՝ իր ներկա-
յացուցիչն ունէր: Մոգերը սերտ կապուած էին Մովսէսին որ
գաւառի մը կրօնական հովիւն էր. Մովսէսն ալ կը հնազանդէր
Մովսէսն Մովսէսին որ Տէրութեան բարձրաստիճան պաշտօն-
ներու մէջ առաջինն էր:

Կրօնի սրաշօնեայնէր զօրաւոր ազդեցութիւն մը ունէին մո-
ղովրդին վրայ:

*
**

Վ. Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԴԵՄ ՀԱԼԱԾԱՆՔ (340 — 379)

Թէեւ առաջին Սասանեանները Պարթեւներէն աւելի ջեր-
մեանդ հաւատացեալներ էին Մազդեզակիանութեան, բայց չհա-
լածեցին աշակերտները: Եթէ Մանի բանտարկուեցաւ ու չար-
չարիւեցաւ Վառմի հրամանաւ, պատճառն այն էր որ իր ուսու-
ցումն անբարոյական ու հակաընկերական էր: Եթէ Հրեայները
հարստահարուեցան, ո՛ն ալ իրենց ընչաքաղցութիւնէն էր: Գա-
լով քրիստոնեայնորուն՝ անոնք երբե՛ք հալածանք չկրեցին, երբ
Հռոմէական կայսրութիւնը Հեթանոսութեան պինդ փարած էր:

Բայց Շապուհ Բ.ի օրով քրիստոնեայնորուն կացութիւնը
կերպարանափոխ եղաւ: Շապուհ Բ. Հռոմի դէմ աւանդական պա՞-

տերազմը կը վերսկսի որուն շարժ առիթն էր կրօնական խնդիր մը:
Կոստանդիանոս կրօնական ատելութեամբ պատերազմ մղած էր
Պարսից դէմ, եւ երբ 337, Մայիս 22ին կը մեռնի, յաջորդը
Կոստանդին կը շարունակէ պատերազմը Շապուհի դէմ որ յարձա-
կած էր Մծքինի վրայ: Շապուհ 63 օր քաղաքը կը պաշարէ •
բայց երբ կ'իմանայ թէ Կոստանդին իրեն վրայ կը յարձակի, կը
նահանջէ: Այս նահանջը Յակոբ Մծքնայ Հայրապետին աղօթքին
կը վերագրուի:

Շապուհ կը վերակազմէ իր բանակը, զինւորներու արտա-
սովոր դրամական պարգեւներ կը յատկացնէ՝ տէրութեան դանձը
կողմակցելով ու ծանր հարկեր դնելով հպատակներուն վրայ. կը
հալածէ Միջագետքի քրիստոնեայնները 340ին: Շապուհ մինչեւ
իր մահը (379, Յոգոստոս 19) անհաշտ թշնամի կը մնայ քրիստոնե-
այններուն որոնցմէ շատեր կը վկայուին ի սէր քրիստոնէութեան:

*
**

Վ. Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

ՇԱՊՈՒՀ Բ.Ի ՄԱՀԵՆ ՄԻՆՁԵՒ ՅԱԶԿԵՐՏ Ա.

Մինչ Հալածանքն անգթօրէն կը նուազեցնէր Պարսկաս-
տանի քրիստոնեայնորուն թիւը, թշնամութիւնը կ'արձարծուէր
Հռոմայեցւոց ու Շապուհ Բ.ի միջեւ:

Յուլիանոսի յաջորդ Վաղիս արշաւանք մը կը պատրաստէ
(372) Շապուհի դէմ որ դաշտացած էր Հայոց Հռոմոսէր կու-
սակցութեան զօրանալուն դէմ: Վաղէսի զօրավար Տրայանոս կը
յաղթէ Շապուհի որ կը խնդրէ զինադուլ մը եւ կ'ապաւենի (373)
Տիգրան: Բայց 377ին, երբ Վաղէս Թրակիոյ մէջ գբաղած էր,
կ'առաջարկէ հաշտութեան պայման մը որ շատ նպաստաւոր չէր
Հռոմայեցւոց: Գոթացիք կը սպառնային Կ. Պոլսոյ որով կայսրը
իր բանակը Հայաստանէն ետ կը կանչէ: Այս բանակով կը յուսար
Գերմանական արշաւանքին առաջին առնել: Ադրիանուպոլսոյ—
Էջիսեմի պարիսպներուն տակ կը մղէ մեծ ձակառամարտ սը,
բայց կ'իյնայ 378, Յոգոստ. 9ին: Շապուհ չի կրնար այս առիթէն
օգտուել մահամերձ հիւանդ էր եւ կը մեռնի 379ին:

Արտաշիր Բ. Հռոմայեցաց ու Քրիստոնեայնորուն դէմ
թշնամական դիրք մը կը բռնէ եւ Ասիարկնի ու Պէյր-Իսրմալի
մէջ սուկալի կը հալածէ քրիստոնեայնորը:

Արտաշիր Բ.ի յաջորդը՝ Շապուհ Գ. խաղաղասիրութեամբ կը
վարուի եւ իր թագաւորութեան առաջին տարիներէն սկսեալ
յարաբերութիւն կը հաստատէ Թեոդոս Ա. կայսեր հետ:

Վաւալ Գ. Կրմահրան կ'որոշէ հաշտութիւն մը կնքել Հռո-
մայեցաց հետ որոնց պատգամուորներուն դիւսաւորն էր Ասիլի-
կոն: Հեփթաղները 395ին կ'ապագտակէին երկու կայսրութեան
հիւսիսային սահմանները: Քրիստոնեայնորը հանդիստ կը գտնեն
Պարսից այս ճնշեալ վիճակէն:

Յազկերտ Ա. բարեկամ արտաքին խաղաղութեան ու հոգա-
ծու ներքին անդորրութեան՝ կը մերժէ Քրիստոնեայնորը հալած-
ծելու գաղտփարը զոր մոգերը իրեն կը ներշնչէին:

* *

Ե. Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

ՅԱԶԿԵՐՏ Բ.Ի ՀԱԼԱԾԱՆՔԸ

Յազկերտ Բ. 438ին յաջորդելով Վաւալ Ե.ի՝ սկզբան նպաս-
տաւոր դիրք մը կը բռնէ Քրիստոնեայնորուն հանդէպ, բայց
յետոյ ատելութեամբ կը լեցուի անոնց դէմ: Վրկանից ձողա
երկիրը կ'արշաւէ, դարձին իր բանակէն կը հալածէ Քրիստոնեայ-
նորն եւ Մծրիկի, Կարկաշի, Պէյր-Սրբի, Արղազկնի ու Ասիարկնի
քրիստոնեայնորը կը չարչրկէ: Շատերը կը խոստովանին եւ կը
մերժեն հաւատուրացութիւնն եւ 446, Յգոստոս 24ին կը խաչուին
կը քարկոծուին խաչուած վիճակի մէջ: Յազկերտ Բ. Միջագետքի
քրիստոնեայնորը հալածելէ ետք, 450ին սաստիկ հալածանք կը
հանէ Հայոց դէմ որով տեղի կ'ունենայ Վարդանանց պատերազմը՝
Հայոց ազգային կրօնական Ա. պատերազմը:

Յազկերտ Բ. 454—455 կը հալածէ Հրեայներն ալ եւ կ'ար-
գելէ շաբաթ օրուան պաշտամունքը կը մեռնի 457, Յունիս 30:

Խաբարական ցիւքեր. — 1. Նկարագրել՝ բաղ-
դասելով Պարսեաց կենցաղը Պարսկականին հետ:

2. Բաղդասելով՝ եզրակացնել քէ Պարսից ներքին
կառավարութիւնն որո՞նց կը նմանի:

Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Ն Ա Խ Ն Ե Ա Յ Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

1. ՀԻՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԱԶԳԵՐ

Յոյներէն առաջ երեք առեւտրական հին ազգերն էին
Բարկաղայի, Փիւնիկցիի ու Կարիեղոնացիի: Այս ազգերուն վաճա-
ռականութեան մեծ ճամբայներուն համառօտ ուրուագիծը փո-
խանակութեան դիւտաւոր նիւթերուն հետ ներկայացուցած է Աշ-
խարհացոյցին վրայ:

2. ԲԱՐԵԼՈՒԿԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բաբելոն իր վարմանալի դիրքով Հին վաճառականութեան
գլխաւոր վաճառատեղիներէն մէկն էր: Այդ վաճառականու-
թիւնը կը կայանար մասամբ Բաբելական հիւսուածեղէններու
փոխանակութեան մէջ եւ մասամբ մշն ալ Թայրագոյն Արեւելքի
արտադրութիւնները գնելուն մէջ:

3. ԲԱՐԵԼՈՒԿԱՆ ՀԻՍՈՒԱՅԵՂԷՆՆԵՐ

Բաբելոնի մէջ բամբակէ հիւսուածքը, բրդեղէնն ու կա-
պերոնները գլխաւոր անկուածներ էին: Պերճանքի առարկայներ,
անուշահոտ ջուր, գաւազան, քանդակուած քարեր ու մատանի-
ներ կը շինուէին քաղաքին մէջ: Թանկագին քարեր յղկելու
արուեստը գերազանց կատարելութեան հասած էր: Այս նիւթերը
շատ յարգի էին Հին քաղաքակիրթ ազգերուն քով:

քարեր եւ հաւանաբար ոսկի կ'ընդունէին Ափրիկէի դիմացե
եղերքէն: Փիւնիկէի եգիպտոսի հետ ունեցած վաճառակաթեան
առաջին ճիւղը Յուդայի երկրին եւ բուն Ասորիքի հետ էր:

8. Փիւնիկեան Արեւելեան Վաճառակաւորութիւն

Բայց Փիւնիկեաց Արեւելքի հետ ունեցած վաճառականու
թեան ամէնէն կարեւոր ճիւղն էր ա'ն որ կ'անցնէր Բաբելոնէն
դէպի Ասորոյ խորքը: Դէպի Բաբելոն երկայնող ճամբուն շատ
մեծ մաս մը կ'իյնար Ասորական անապատին մէջ, եւ դիւրացնե
լու համար կարաւաններու ճամբայն՝ Հին աշխարհի ամէնէն
նշանաւոր քաղաքներէն Պաղպիքն ու Պարմիրը հիմնած էին:

9. Սփրիթական Վաճառակաւորութիւն

Սփրիթական վաճառականութիւնը մեծաւ մասամբ կը կազ
մէ արդի այն վաճառականութիւնը որ տեղի կ'ունենայ Հարա
ւային Ռուսիոյ ու Պուրտրալի միջեւ: Անիկա կապուած էր եւրո
պայի հետ Սեւ Սովու եղերքի Յոյն գաղթականներու միջոցաւ:
Բայց վաճառականութեան ամէնէն կարեւոր ճիւղն որ կ'անցնէր
Սփրիթական երկրէն՝ Հնդկաստան էր: Ասոր հետ մենք կրնանք
կապել Հնդկաստանին: Բակսրա=Պալիս ու Մարիակա=Սարխանս
միշտ եղած են շահաւէտ վաճառականութեան մը շտեմարները:
Ստոյգ է թէ այս վաճառականութեան մէկ մասը կ'անցնէր Կաս
ճից ծովուն վրայէն, բայց հաւասարապէս ճշմարիտ է թէ անոր
մեծագոյն մասը կը կատարուէր կարաւաններով որ շրջան կ'ը
նէր Կասպից ծովը Հիւսիսային մասի, եւ թերեւս Արաւ ծովուն
բոլորտիքը:

10. Հիւսիսային Վաճառակաւորութիւն

Եգիպտոսը մարգարէն Փիւնիկեան Հիւսիսային վաճառակա
նութիւնը սապէս կը նկարագրէ. «Յաննի (Յոնիական ու Յոյն
գաղթականներ) թոլրեկ ու Մոսոս, Սիւ ծովը եւ Կասպից ծովը
շուրջի գաղթականները քու վաճառականներդ են. անոնք քեզի
հետ մարդոց եւ պղնձէ անոթներու առուտուր կ'ընեն: Թորգոս=
Հայասան եւ Կասպից ծովի ձիեր, ձիաւորներ եւ ջորիներ կը
բերեն քու վաճառանոցներդ: (Եգիպտոսի Ի. 13—14)

11. Փիւնիկեան Միջերկրական Մէջ

Միջերկրական ծովը, սակայն եւ այնպէս, Փիւնիկեան վաճա
ռականութեան գլխաւոր ճամբայն էր: Սպանիա իր թանկագին
քարերով Հին աշխարհի ամէնէն հարուստ երկրն էր: Փիւնիկե
ցիք հոս կոնուխէն հաստատեցին կայաններ: «Թարշիսի=Թար
սասու» Հարաւարեւմտեան Սպանիոյ բնակիչները քու վաճառականու
տներդ են. անոնք քու վաճառանոցներու մէջ արծաթի, երկա
ներդ են. անոնք քու կապարի առուտուր կ'ընեն: (Եգիպտոսի Ի. 12)
Քիւնիկեցիք Սպանիայէն մտան Ատլանտեան ովկիանոսը, եւ յա
ռաջացան Բրիտանական կղզիներուն հարաւակողմը, ուր գտան
Կոռնուէլի անագը, եւ հաւանաբար յառաջացան Բուսիոյ եղերքը՝
մեծաւ մասամբ սարի հաւար: Արեւելեան ծովերուն մէջ — Արաբա
կան ու Պարսից ծոցերու եղերքը — կայաններ ունէին, ուրկէ անոնք
առուտուր կ'ընէին Հնդկաստանի ու Ափրիկէի եղերքներուն եւ
Սէյլոն կղզւոյն հետ նեղալով փարուսնի թաղաւորութեան
օրով կը գտնեն Բարեյուսոյ Գրոյիս. բայց ստիկա կարեւոր շահե
կանութիւնը չունեցաւ այն ազգաներուն պատճառաւ զորս Տիւ
րոս կրեց Ձ. դարուն Բաբելոնական աշխարհակալութեան պատ
ճառաւ:

12. Կ Ա Ր Ք Ե Գ Ո Ն

Կարկերանի վաճառականութիւնը կը կատարուէր թէ՛ ցա
մաքով եւ թէ՛ ծովով: Իր բուն ձեւազորներն էին ազնիւ
կերպաններ, խեցեղէն անոթ եւ կաշիէ կազմածք: Կարկերանի
Յամուքային գլխաւոր վաճառականութիւնը Կերթոնական Ափրի
կէի բարբարոս ցեղերու հետ կարաւաններով տեղի կ'ունենար.
ասոր գլխաւոր ներածութիւնն էին խափշիկ գերիներ եւ ոսկեփոշի:

13. Արեւմտեան Միջերկրական

Արեւմտեան Միջերկրականի մէջ անոնց գլխաւոր վաճառա
կանութիւնը Սիկիլիոյ եւ Հարաւ. Իտալիոյ մէջի Յոյն գաղթա
կաններու հետ էր, որոնցմէ կ'ստանային գինի ու իւղ եւ զոր կը
փոխանակէին խափշիկ գերիներու, թանկագին քարերու, ոսկւոյ եւ
Կարքիզանի մէջ գործուած կերպաններու հետ: Նոյնը նման կա
նիոյ հետ (Նախնաց Էյթուրացն): Ստուգիւ Կարկերանացւոց ձեւըն

էր գրեթէ տիրապէս՝ Ալիքիկէի եւ Արեւմտեան Եւրոպայի ազգերուն միջեւ փոխանակուած վաճառականութիւնը: Ճիպրայթարի ներուցէն անդին՝ Փիւնիկեցիներէն ետք Բրիտանական կղզիներուն Անագի եւ Պալդիկի եղերքներուն Սաքի վաճառականութեան տէրն էին:

14 ԱՓՐԻԿԵԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ափրիկէի արեւմտեան եղերքներուն վրայ Կարքերոնի գաղթականութիւնները ծաղկեցուցին Մարոքի եւ Ֆէսի եղերքները, բայց իրենց վաճառանոցը՝ վաճառքներու գլխաւոր կեդրոնը Կերնէ կղզին էր՝ արդի Սուանա, ուրկէ թեթեւ նաւակով ապրանքներ կը փոխադրէին դիմացի եղերքը: Հոս Կարքերոնական արտածութիւններն էին մանր զարդեր, համետի կազմածք, բամպակեղէն, խեցեղէն ու զէնքեր, զորոնք կը փոխանակէին մորթի ու փղատամի հետ: Հաւանական է թէ այս յանդուգն վաճառականներն ունէին հաղորդակցութիւններ Գուէնիոյ եղերքին հետ, եւ թէ իրենց նաւերը յառաջացած էին Սենեկալի ու Կամպիայի բերաններէն անդին:



- Խմբագրական նիւթեր. — 1. Նկարագրել՝ բաղդասեղով Նախնեաց վաճառականութիւնը հիմակուանքին հետ:
- 2. Գրել քե ո՞ր վեհապետներ կը յիշեցնեն սա՛ ֆաղաֆներ՝ Թեբէ, Մեմփիս, Նիւուէ, Բաբելոն, Նուսադեմ, Տիւրոս ու Պերսեպոլիս:
- 3. Որո՞նք են Ասիոյ Արիականներու նուիրական գիրքերը:
- 4. Իրարու հետ բաղդասել Արիականաց կրօնները՝ Զրադաւսականը, Պրահմանականութիւնն ու Պուսհայականութիւնը:
- 5. Դասակարգի դրութիւնն ու իր աղետաբեր հետեւանները խմբագրել:

- 6. Փիւնիկեան այբուբենի առաւելութիւնը՝ բաղդասմամբ բեւեռագրին ու մեհենագրին հետ:
- 7. Քաղաքակրթութեան պայմանները:

Աշխարհագրական քելադութիւններ. — Ձեր ցարդ ստրված Արեւելեան երկիրներն ու ֆաղաֆներն արդի ո՞ր երկիրներուն ու ֆաղաֆներուն կը համապատասխանեն՝ բաղդասեղով այդ աշխարհացոյցները մեր Աշխարհագրութեան Միջին. Դասընթացքի նոյն երկիրները պարփակող ֆաշեսներուն հետ:



Հ Ի Ն Ա Ձ Գ Ա Ց

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄԸ

1. Ե Գ Ի Պ Տ Ա Ց Ի Ք

Առաջին դարաշրջանը == Հին ինքնակալական	}	Եգիպտական պատմության սիլաբիկն սիլաբիկ ըստ Մանեթոնի Առաջին Հարսուրթիւնը	2700
		Դ. Հարսուրթեան կամ բուրգերու շինութեան դարաշրջանը	2450
		Հիւստիստերու արշաւանքով՝ հին ինքնակալութեան վախճանը	2200
Երկրորդ դարաշրջանը == Միջին ինքնակալական	}	Հիւստիստերը կը սիրեն Ասորին Եգիպտոսի	2080
		Բոդր Երկիրն անբողոքապէս կը նուաճուի	1920
		Աքրսահաւու այցելութիւնն Եգիպտոս .	1900
		Յակոբ ու իր որդիները կը հաստատեն Եգիպտոս	1706
		Հիւստիստերը կ'արսափուին	1700
Երրորդ դարաշրջանը == Նոր ինքնակալական	}	Եգիպտոսի անկախութեան վերականգնումը Թերակիս Հարսուրթեան օրով	1703
		Եգիպտական պատմութեան երեք ամեկնէն փայլուն դարերը	1462—1188
		Իսրայելացւոց ելիլը	1320
		Կաւրիւս Եգիպտոսը կը նուաճէ	525

Ա. Ի. Բ. Յ. Դ. Ե. Յ. Զ. Է. Ը. Թ.

Եգիպտոս կը նուանուի Յոյներէն	Ն. Բ.
Աղեֆասնորի օրով	332
Պտղոմէական իշխանութեան սկզբնաւորութիւնը (կամ Եգիպտոսի Յոյն թագաւորները) Աղեֆասնորի տրութեան թաժանուակէ ետք	323
Կղեոպոստոսի մահուընէն ետք Եգիպտոս Հռոմէական գաւառ մը կը դառնայ	30

2. ԲԱՂԻԷԱՅԻՔ ՈՒ ԱՍՈՐԵՍԱՆՅՅԻՔ

Քաղղիական պատմութեան առաջին վաւերական թուականը	2234
Քաղղիական հպստակութիւն եւ Ասորեստանացոց անկախութիւն	1250
Տգրոս-Պարսաստի դարը	1130
Նաբոնաստի թուականը	747
Տգրոս-Պարսաստ Բ.ով Ասորեստանի վերակենդանացումը	745
Մարաց միջոցաւ Ասորեստանի կործանումը Կիսֆաստի օրով	606
Նաբոզոդոնոստի գահակալութիւնը	604
Կիւրոս Բաբելոնը կ'առնէ	539

3. Ե Բ Բ Ա Յ Ե Յ Ի Ք

Աքրահանու գաղթումը (գրեթէ)	1920
Իսրայելացոց ելիւր	1320
Միապետութեան հաստատութիւնը Սաւուրի օրով	1097

Սողոմոնի գահակալութիւնը	1019
Թագաւորութեան թաժանումը	978
Իսրայելացոց գերութիւնը	721
Նաբոզոդոնոստի միջոցաւ Երուսաղեմի առումը (Բաբելոնի գերութիւն)	586
Հրեից դարձը	539
Աղեֆասնոր կը նուանէ Յուդայի երկիրը	332
Հռոմէացիք կը գրաւեն Հրեաստանը	70

4. Մ Ա Բ Ք Ա Ի Պ Ա Բ Ս Ի Կ Ք

Մարք Կիսֆաստի օրով կը նուանեն Ասորեստան եւ կ'ըլլան գերագոյն իշխանութիւնն Ասիոյ մէջ	625
Կիւրոսի գահակալութիւնն ու Պարսից գերակայութիւնը	558
Լիւդիոյ հպստակութիւնը	549
Բաբելոնի առումը	537
Կալքիսի գահակալութիւնը	529
Կալքիսի միջոցաւ Եգիպտոսի առումը	525
Դարեն Վշտայեայի գահակալութիւնը	521
Պարսից արշաւանքը Յունաց վրայ	492
Պարսեաց թագաւորութեան սկիզբը	254
Պահրաւ հարստութեան սկիզբը	126
Սասանեաց հարստութեան սկիզբը (Յ. Բ.)	211

Դ Ա Ս

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԻՆ ԱԶԳԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Ա Մ Փ Ո Փ Ո Ի Մ Ը

Բոլոր Արեւելեան Ազգերու մեծ զբոսչմն էր իրենց անյատաւաղէմ նկարագիրը: Ասիոյ մէջ բազմաթիւ մեծ

պետութիւններ կազմուեցան, բայց որովհետեւ իշխանները միանձեման էին, որովհետեւ ժողովուրդին ընկերական վիճակը դասակարգերով կաշկանդուած էր, և որովհետեւ կնոջ հաւատարութեան իրաւունքը մերժելով՝ նոյն իսկ ժողովուրդները ստորին մակարդակի մը վրայ մնացած էին — մարդուն զօրութիւնն անկաշկանդ գործունէութիւն չկրցաւ ստանալ: Հետեւաբար թէև նին Արեւելեան Ազգերը մեծապէս զարգացան Քաղաքակրթութեան մէջ, բայց այս Քաղաքակրթութիւնը կայուն հանգամանք մը ունէր: Ասիա աշխարհն է Ծնունդներու և Ծագումներու և մեր ցեղի պատմութեան մէջ հրաշալի դեր մը կատարած է: Ճշմարիտ յառաջդիմութիւնն առաջին անգամ կ'սկսի Արիական ցեղէն Եւրոպայի հողին վրայ:

*
**

Պ Ա Ս

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԻՆ ԱԶԳԵՐՈՒ ՆՎԱՐԱԳԻՐԸ

Արեւելեան Հին Ազգերու գործերը կրնանք հետեւեալ կերպով բովանդակել իւրաքանչիւրին յատուկ նկարագրով:

Առաջնակարգ ներկայացուցիչ Քառեան արեւսիւն. — Աշխարհակալ կաւ յարձակող ազգ մը չէին. — Եինուքեան հրաշալի բնագոյ մը ունեին. — Եւս յառաջացան բազմաթիւ Մեփեմական արուեստներու մէջ. — Նաեւ հետաքննութիւն ունեին այլ եւ այլ գիտութեանց, մասնաւորապէս Աստեղագիտութեան ու Երկրաչափութեան մասին. — Նշանաւոր է իրենց ֆաղսփայլութեան կայուն նկարագիրը:

Եզրագոյնի

Քաղաքացի

Չանագան ցեղերու խառնուրդ արեւսե մը սեւած են. — Եզրագոյնաց նման ճարտարապետական բնագոյ մը ունեին. — Աստեղագիտութիւնը մշակեցին մեծ յաջողութեամբ. — Իրենց ֆաղսփայլութիւնը դրական նկարագիր մը ունէր:

Ստորեւագի

Հաւանօրէն գոհ Սեմական՝ աշխարհակալ ցեղ մըն էին եւ Պարսկաստանէն առաջ կայսերական մեծ պետութիւն մը եղան Ասիա եւ իշխեցին Միջագետքէ զատ Մարասանի, բոլն Սիւրիոյ = Ասորոց, Փիւնիկիի, Պաղեստինի, Արաբիոյ մէկ մասին. — Գեղարուեստներէն Քանդակագործութեան մէջ մասնաւորապէս զերագանց էին:

Քաղաքացի
վերջին բազմաթիւ

Իբրեւ ֆաղսփայլական իշխանութիւն փայլեցան միայն 87 տարի՝ Ասորեստանեաց պետութեան կործանումէն մինչեւ Կիւրոսի յաղթութիւնը (625—538 Ն. Ք.). բայց Ասորեստանի իշխանութեան ներքեւ իսկ, դարերով կարեւոր ժողովուրդ մըն էին. — Յառաջդիմեցին Վաւառականութեան, Տարագագործութեանց ու Գործնական արեւստներու մէջ:

Հնդիկ

Չոհ Արիական արեւսիւն կը վերաբերին. նշանաւոր են իբրեւ աշխարհաստեաց ցեղ մը, որ նուիրուած էր Վերացական գաղափարներու եւ Միսիսական խորհուրդներու. — Հնդերոպական անկեկէն էին շեզումով, այսինքն Սանկրիթերէնով գրուած ճոխ ու նշանաւոր գրականութիւն մը թողած են. — Քիչ ներգործութիւն ունեցան աշխարհի ֆաղսփայլական գործերու միջոց եւ Պատմական տարեգրութեանց մէջ գրեթէ անիշխան կը մնան մինչեւ Ադեֆասանդի արշաւանքը Հնդկաստան (326 Ն. Ք.):

Հատեանք
եւ
Ուրարտացիք

Նախահայրական երկո՞ կարեւոր ժողովորդներ որոնց կասարած դերը հետզհետէ կը յուսարանուի:

Չինացիք

Դեղին = Մոնկոլոյեան ցեղի գլխաւոր ներկայացուցիչն են Հին ու Նոր դարերու մեջ. — Խաղաղասեր ու գործնական նկարագիր ունին. — Ասոնց հետադարձեան ֆաղափարները մեկուսացեալ ու կայուն հանգանակ մը ունի. — Ընկերական կեանքի մեջ Չինական ազգին մեծ ու նշանաւոր երեւոյթն է Լա-խահարց ընծայեալ պաշտամունքը. — Որդիական երկիրաճանաչեան սկզբունքը խարխիսն է այս ընկերութեան. — Չինացոց կրօնիկն ընդհանուր դրոշմն է Նիւրականութիւնը:

Եբրայեցիք

Չոս Սեւական ցեղի էին. — «Եզական ազգ մը» որ եզական դեր կը կատարէ Պատմութեան մեջ. — Շոս քիչ ազդեցութիւն ունեցան Հին ժամանակի ֆաղափարական պատմութեան վրայ, բայց բոլոր աշխարհի վրայ ներգործած են կրօնով (Միասնաճանաչութիւն). — Իբրեւ իրենց մեծ հրիսալը բողոք են Եբրայական Սուրբ Գիրքը. — Արուեստագէտ ցեղան:

Պարսիկք

Չոս Արիական ցեղի. — Արեւելեան ու եւ ազգէ աւելի մօտեցած են Եւրոպական ֆաղափարներէն. — Որ եւ է Ասիացի ազգէ աւելի շատ գաղափար ունեին Քաղաքական կազմակերպութեան վրայ. — Աշխարհակալ ժողովուրդ մըն էին եւ մեծ կայսրութիւն եղան Ասիա՝ Գիւրուսի ժամանակին մինչեւ Աղեմսանդրի յաղթութիւնը (558 — 331 Ն. Ք.). — Արուեստի, մասնաւորաբար Ճարտարապետութեան ու Քանդակագործութեան մեջ բարձր ասիականի հասան:

Փիւնիկեցիք

Եբրայեցոց պէս Սեւական. — Գերագնացապէս վաճառական ու գաղարար ժողովուրդը Հնութեան. — Ասիոյ միակ ազգն որ գաղարդներ հաստատեց Եւրոպայի ու Ափրիկէի Միջերկրական ծովափունքը: — Կտակած են անգիկն գաւաճ մը՝ Փիւնիկեան Այբուբէնը:

ԸՆԹԵՐՅՈՒՄՆ ԵՐ



ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱՆԱԲԱԿԻՐՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ
"ԼՈՅՍ ՅԱՐԵՒԵԼԻՑ, ԱՐԵՒՍՏԵԱՆԻՆ ՎՐԱՅ

Ա. ԿՐՈՆ, ԳԻՏՈՒԹԻՒՆ

Բացայայտ կ'երեւայ որ Եւրոպա իր Քաղաքակրթութեան ամենէն հզօր տարրերէն երեքը, այսինքն՝ Կրօնը, Գիրն ու Թիւերն Արեւելեան ժողովուրդներէն ուսած է:

Եւրոպացիք Արեւելքէն ուսած են ինչպէս Ոչնչութեան նշանը՝ զերոյն, այնպէս ալ Անսահմանութեան նշանն որ Xի նման է: Բառը տը կակարտ անհերքելի փաստերով ապացուցուց թէ մաթիմաթիքոսներու անծանօթ մեծութիւնը՝ Xը տարբական շէյ բառէն ծագած է, քանի որ կատինք շ գիրը չունէին եւ ստիպուած՝ կը տառադարձէին զայն Xով եւ շէյ բառին տեղ չէի կը գործածէին: ԺԱ. դարէն սկսեալ՝ հաստատուն վկայութիւններ ունինք շէյ բառին անծանօթ մեծութիւն մը նշանակելու մասին:



Բ. ԿՈՂԱՆԱՑՈՅՑ. ՎԱՌՕԴ

Բայց ասով չ'աւարտիր միայն Արեւելցիներու գիւտերուն շարքը Յայտնի է թէ Հազարակրթութիւնն ո՞րչափ կը նպաստէ Մարդկային Քաղաքակրթութեան տարածման: Այս հայեացքով մեծ ծառայութիւն մատուցած են Արեւելցիք՝ անշուշտ Կողմնացոյցը հնարելով, որովհետեւ սուանց այս գործերին անկարելի է

Յօվերուն վրայ ապահովութեամբ ճամբորդել: Գրիստոսի Բ. դա-
րուն կողմնացոյցի մագնիսական տեղն արդէն յայտնի էր Զի-
նացիներուն Իպն Աճարի կը վկայէ որ արդէն 854ին Արաբներու
յայտնի էր Կողմնացոյցը Վերին աստիճանի շահեկան տեղեկու-
թիւններ կան Կողմնացոյցի ծագման մասին Գլարտրի՛ Ալեխանդր
Յոն Հոռնկորդի գրած նամակին մէջ:

Այսօր Եւրոպական խաղաղութիւնը կը պահուի հզօր թնդա-
նօթներով ու բանակներով: Արդի մեծ ազգերուն պատերազմին
մէջ ամէնէն կարեւոր դերը կը խաղայ վստօղն, որուն գիւտը
գարձեալ Արեւելեան Ժողովուրդներու կը պարտինք: Սխալ է
բռնորովին այն կարծիքը թէ վառօդը գտած են Մարիուս Կրեմու
կամ Պերրոյ Նուարց:

Վերջին տարիներս Տֆր. էջմուռն ու Հալէի համալսարանին
ուսուցչապետներէն մէկը՝ Յոն Լիքման այս խնդիրը մանրազնին
ուսումնասիրութեան ենթարկեցին: Երկու մասնագէտ գիտնա-
կաններն եւս եկան այն եզրակացութեան թէ վառօդը Զինացինե-
րուն ժԲ. դարուն մէջ յայտնի էր: ԺԳ. դարուն մէջ Զինացիներէն
վառօդն անցաւ Արաբներուն որ զայն իր ճերմակ գոյնին հա-
մար Զինակաւ աղ կ'անուանէին: Հասան-Ար-Սամա իր 1275—1295ին
գրած մէկ գրքին մէջ վառօդն արդէն ամէն տեսակ հրազնի
ազգեր կը համարի:

* *

Գ. ԹՈՒՂԹ ՈՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Տես Դ. Խաչկոնց՝ «Հայոց Պատմութիւն», Միջին Բ. էջ 224—227:

Խմբագրելի Գրքեր. — 1. Ամփոփելով՝ Գլխաւորել
Իւրաքանչիւր Արեւելեան Ժողովրդի դերը:

2. Ամփոփելով՝ Գլխաւորել թե՛ ինչպիսի կը քանկանց
«Լոյս Յարեւելից»էն:



ԴԱՒԻԹ ԽԱԶԿՈՆՑ

Դ Ա Ս Ը Ն Թ Ա Յ Ք

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ



Մամուլի տակ են և չուտով հետզհետէ լոյս պիտի
տեսնեն.

Երկրորդ Մաս. Արեւմտեան Հին Ազգեր (Յոյներ և
Հռոմայեցիներ) քարտէսներով, պատկերներով և ըն-
թերցումներով

Երրորդ Մաս. Միջին Դար՝ քարտէսներով, պատ-
կերներով և ընթերցումներով:

Չորրորդ Մաս. Նոր Դար՝ քարտէսներով, պատ-
կերներով և ընթերցումներով:

Հինգերորդ Մաս. Ժամանակակից Դար՝ քարտէս-
ներով, պատկերներով և ընթերցումներով:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆՈՐԱԳՈՅՆ ՄԵԹՈՏ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Յօրինեց Կ. Վ. ՊՍԻՍՏՊՈՒՆ

Է. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Անուրանայի կերպով ընդունուած սկզբունք մըն է այլ եւս թէ մանուկը իր առաջին քայլերուն մէջ պէտք է ուսանի զուարթ կերպով :

Կարապետ էֆ. Պալապան իր երկարատեւ տալիսներու փորձառութեամբ լիովի գործադրած է մանկավարժական բոլոր նորագոյն մեթոտներն որով խիստ զիւրրմբունելի՝ փոքրիկ և զուարթ պատմութիւններով ու հեքեաթներով կ'ուսուցանէ ընթերցանութիւնը :

Գին 2 դրուշ

Դ Ա Ս Ը Ն Թ Ա Յ Ք

ՋԱՅՆԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

Յօրինեց Ա. ՀԱՐՈՆ ՄՍՐԼՅԱՆ

Երածչտութեան այնքան ծաւալ զանկուն հակառակ՝ Եւրոպական ձայնագրութեան մեթոտիկ դասագիրք մը գոյութիւն չունէր ցարդ : Մանօթ երգահան երածիշտ Ահարոն Մարկեան ներկայ հրատարակութիւնով կը լրացնէ այդ պակասը :

Գիրքը կը բաղկանայ երկու մասէ , որուն երկրորդ մասը կը կազմէ միաձայն , երկձայն և եռաձայն 20է աւելի երգեր՝ դաշնակի կամ երգեհոնի ընկերակցութեամբ դաշնաւորուած :

Գին 5 դրուշ

ԳՊՐՈՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Գ Ր Պ Ա Ն Ի
Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

ՖՐԱՆՍԱՀԱՅ

Յօրինեց ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Հայ ուսանողութիւնն երկար ատենէ ի վեր Ֆրանսահայ Բառարաններու չգոյութենէն չափազանց կը նեղուէր: Այդ պակասը լիուլի կը լրացնէ ներկայ Բառարանը, որ յօրինուած է ծանօթ ֆրանսագէտ և մասնագէտ ուսուցիչ Միհրան էֆ. Յովհաննէսեանէ:

Հակառակ իր ծաւալին ու պարունակութեանը, խիստ մատչելի գնով մը հրատարակուած է գիրքը: Կը պարունակէ 846 էջ և 40,000 բառ և ոճ:

Գին Կիսալար 12.50
Լարակազմ 15
Կաշեկազմ 25

« Ազգային գրադարան

NL0409559

ՀԵՂԻՆԱԿ ԲԱՆԱՍԻՐ Դ. ԽԱԶԿՈՆՑԻ ԳՎԱՐՆԹԱՑՔՆԵՐԸ

Ա. Բնդհանուր Ազգաց Պատմութիւն

1. Ա. Եկեան Հին Ազգեր	5
2. Առեւտսեան Հին Ազգեր (Մանուշի սակ)	
3. Միջին Գար	» »
4. Նոր Գար	» »
5. Ժամանակակից	» »

Բ. Պատմութիւն Հայոց

6. Տարրական	6
7. Միջին Ա.	7
8. » Բ.	10

Գ. Աշխարհագրութիւն

9. Տարրական	5 50
10. Միջին	10
11. Բարձրագոյն	10

Դ. Կրօնի Ուսում

12. Տարրական	4
13. Միջին	6
14. Բարձրագոյն	12 50

Ե. Բազմաբանական Կրթութիւն

15. Գուն պիտի բլաս Միջին	6
16. » » » Բարձրագոյն աղջկանց	8
17. » » » » մանչերու	8